

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԿԿ

№ 12
DÉCEMBRE
1928
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ՍԻՒՐԻԱՅԱՅ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԱՌԹԻԻ

Սիւրիահայերի արտագաղթը ղէպի Հարաւային Ամերիկա, որի լուրերով լիքն են վերջերս հայ թերթերը, հետզհետէ ընդունում է խիստ մտահոգիչ բնոյթ: Հազարաւոր մարդիկ, տարերային թափով, անպլուխ ոչխարների պէս, ելնում են տեղից ու շարժւում ղէպի աշխարհի միւս ծայրը՝ առանց գիտնալու նոյնիսկ, թէ այնտեղ ի՞նչ է սպասում իրենց: Մեղադրանքի խօսք դժւար է ասել այդ թշուառներին. կեանքից ծեծւած ու հայածական՝ հանգիստ և նրեթական ապահովութիւն են փնտրում նրանք: Բայց երեւոյթը պէտք է դրադեցնէ ամենքին, որոնց համար հայ ժողովրդի հաւաքական և քաղաքական գոյութիւնն ու ապագան դատարկ հնչիւններ չեն: Այո՛, և՛ քաղաքական, որովհետեւ մեր գաղութները Հայաստանի ու հայկական դատի համար և՛ քաղաքական կարեւոր արժէքներ են:

Թիւրքերի իրենք, որոնց աչքին հայկական խնդիրը ներկայանում է որպէս ահաւոր սպառնալիք և հայ գաղթականութիւնը իրբեւ հակաթիւրքութեան օջախներ, — թիւրքերը իրենք, սեփական ձեռքերով, ստեղծեցին հայ գաղութները, որոնք պատերազմից յետոյ ստացան բոլորովին այլ կերպարանք: Այժմ արտասահմանի հայկական զանգւածներն արդէն պանդուխտների կամ պատահական տարագիրների զանգւածներ չեն, այլ ամբողջ մի ժողովուրդ, որ բռնի ուժով դուրս է քշւած իր հողից ու տնից, որ իրեն համար պատերազմը չի համարում վերջապած և նստած՝ անհամբեր սպասում է վերադարձի օրին: Որ շարունակում է պայքարել հայրենիքի և ազատութեան համար:

Այդ պայքարի թափը, բնականաբար, մեծ չափով կարւած է հէնց գաղութների դիրքից, քանակից և ուժից: Որով, հայ գաղութները, բոլոր ուրիշ նկատումներից զատ, և խոշոր ազգային-քաղաքական գործօն են հանդիսանում: Որքան այդ գործօնը լինի մեծ, ազդու ու տեսական, այնքան ազատագրական պայքար

ըր կը լինի բուռն ու արգիւնաւոր և հայկական հարցի նպաստուտը լուծումը կը լինի աւելի հնարաւոր, մօտալուտ ու հիմնաւոր:

Ազգային-քաղաքական այս ակնոցով դիտելով մեր գաղութները՝ տեսնում ենք, որ նրանք, խոշոր գծերով, բաժանւում են երկու կարգի:

Առաջին մասը մեր գաղութների ապրում է ապաղքայնացման և կորստեան անմիջական վտանգի տակ — Ամերիկայում, Ֆրանսայում, Իտալիանեան պետութիւնների սահմաններում և՛, առհասարակ, միեւնոյն մշակոյթի տէր և աւելի քաղաքակիրթ միջավայրի մէջ: Ինչպէս ձիւնը գարնան արեւի տակ, հայ զանգւածները այս երկրներում հարում-կորչում են արագ, և պայքարը ազգային հաւաքականութեան պահպանման համար աւելի և աւելի դառնում է դժւար և անպտուղ: Հին սերունդները ծերանում ու մաշւում են, նորերը մեծանում են որպէս տեղացիներ, և Հայաստան անունն ու հայկական մշակոյթը, ընդհանրապէս, խորթ է հնչում նրանց ականջին: Եւ ուժացման ու այլասերման թափը չափում է այդ գաղութների հեռաուրուութեամբ և ապրած երկրի քաղաքակրթութեան աստիճանով: Որքան հեռու է հայրենիքից և ինչքան ուժեղ է քաղաքակրթական շրջապատը, այնքան արագ է քայքայման ու ձուլման գործը:

Զուրոյդ երկրների մէջ առաջին տեղն է գրաւում Ամերիկան — Հիւսիսային թէ՛ Հարաւային: Նա այս տեսակէտից ւատ է՝ ահաւոր. նրա վիթխարի հնցում ամբողջ ազգեր են լուծւել ու լուծւում են գեռ, ո՞րք մնաց մի փոքրիկ հայկական զանգւածը՝ գուրկ գիմադրութեան նոյն իսկ տարրական միջոցից՝ ազատ հայրենիքից: Ամերիկա գնացող հայկական բազմութիւնները դիմում են կամաւոր ինքնասպանութեան. նրանց սերունդների ահագին մասը Հայաստանի համար կորած ոյժ է:

Ընդհակառակը, ազգային տեսակէտից,

աւելի ապահով է գոյութիւնը հայկական ան զանգուածներէ, որոնք ապրում են տարբեր մշակոյթի ու բարբեր և քաղաքակրթութեան աւելի ցած աստիճան ունեցող, արեւելեան երկրներում: Զուլման ու կորստեան վտանգն այստեղ աւելի քիչ է. ինքնապաշտպանութեան միջոցները՝ աւելի շատ: Լեզուն, սեփական մշակոյթը և կապը Հայաստանի ու ազգային ընդհանուր մարմնի հետ՝ աւելի կենդանի և անմիջական: Մի քանի դար է ահա Պարսկաստանի ամենախուլ անկիւններում և արաբական աշխարհում ցրւած հայերը պահել են իրենց լեզուն և ազգային դէմքը, մինչդեռ լեհահայերից միայն խղճուկ բեկորներ են մնացել: Եւ արեւելեան երկրների հայութիւնը դեռ երկար կեանք կունենայ, իսկ ամերիկահայութիւնն ու Ֆրանսահայութիւնը հոգեվարքի շեմքին են կանգնած:

Այս երեւոյթները ու դատողութիւնները բխում է մի եզրակացութիւն, որ իրստ կենսական ու կարեւոր նշանակութիւն ունի հայ ժողովրդի ազգային-մշակութային և քաղաքական զարգացման համար. ամփոփել չայստանին մօտ, արեւելեան երկրներում: Այստե՛ղ սպասել վերադարձի ժամին: Այստեղից աշխատել մօտեցնելու վերադարձի վայրկեանը: Ազգային-քաղաքական տեսակէտից այժմ գաղութներն են գլխաւոր արժէք ներկայացնողը: Եւ, հետեւելու, սրանց վրա պէտք է կենտրոնացնել գաղութահայ հանրային կազմակերպութիւնների Հայաստանից դուրս մնացած եռանդն ու գործունէութիւնը:

Եւ այս շրջանների մէջ առաջնակարգ տեղ է բռնում, անկասկած, Սիւրիան իր հոծ զանգուածով և զարգացման լայն հեռանկարներով: Այսօր Սիւրիան հայկական ամենամեծ գաղութն է, որ կեցած է հայրենիքի դրան առջև՝ ակնդէտ հետեւում է դէպքերի ծաւալման: Ապագայ անակնկալների պահուն՝ նա առաջինը կը լինի տեղից չարժեւորչ ու հայրենիք մտնողը: Կեանքը կարող է նրան վերին աստիճանի բարձր, պատմական դեր կատարել տալ մեր ճակատագրի կարգադրութեան խընդրում: Եւ ինչքան նրա ոճով լինի մեծ, որքան ամուր կազմակերպւած ու համարաշյս միութիւն ներկայացնէ, այնքան լաւ ո՛չ միայն իրեն, այլ և բովանդակ հայ ժողովրդի համար: Որով սիւրիահայկական դատը դառնում է ընդհանուր հայկական դատ, սիւրիահայոց արտագաղթը՝ ընդհանուր ազգային աղէտ:

Արտագաղթի այս ալիքը պէտք է նկատել իբրեւ տարեբային բողոքի մի պոռթկում սիւրիահայոց ազգային կեանքում տիրող հիւանդագին վիճակի և անտեսական սուր տազնապի դէմ, այլ և այն անտարբերութեան ու անիրաւ վերաբերումի, որ ազգային ընդհանուր ուժերը ցոյց են տալիս դէպի այդ գաղութը: Մինչ պէտք էր սպասել, որ ազգային

պատասխանատու մարմինները նիւթական ու բարոյական գոհողութիւնների առաւելագոյն չափը կը յատկացնեն սիւրիահայութեան, այդ շրջանը կը զարմեն իրենց գործունէութեան գլխաւոր վայրերից մէկը, այնտեղ կը համախմբեն իրենց ուշադրութիւնն ու միջոցները, իրականութիւնը բոլորովին հակառակն է ցոյց տալիս. Սիւրիային տրւում են միայն փչրանքներ, և օտարները աւելի են գործում այդ գաղութի համար, քան հայկական կազմակերպութիւնները:

Այսպիսի հանգամանքներում բնաւ զարմանալի չէ, որ ժողովրդիկ համակուծ է յուսահատութիւնը, մանաւանդ որ, կեանքի պայմաններն էլ չեն բարելաւում. ապրելը աւելի և աւելի դառնում է դժուար, և հոգեկան մխիթարանք էլ չկայ ո՛չ մի կողմից: Զարմանա՞լ, որ մարդիկ վեր են կենում տեղից և աչքերը խուփ՝ շարժւում այնտեղ, ուր դէթ հացի հուսանակութիւններ են պատկերանում իրենց առջև, թէ՛կուզ և վաղը նոյն հիասթափութիւնն ու դժուարութիւնները բաժին լինեն և նոր երկնքի տակ:

Տարւած, պայքարի անմիջական նպատակներով, մեր հայեացքը սեւեռած երկրին ու յեղափոխական գործնական խնդիրներին՝ մենք քիչ աւիթներ ենք ունենում խօսելու գաղութների մասին. «Ռօշակ»ը գրեթէ չի զբաղւում նրանց ներքին ապրումներով, ծնւող ու մեռնող հարցերով, զանազան հոսանքների բախումներով: Գաղութները յեղափոխական սերունդի համար հանգրւաններ են սուկ, ոտք դնելու տեղ, որպէսզի ոյժ ամաբրեն՝ շարունակելու համար կոխը գլխամուր թշնամու դէմ: Եւ այսօր էլ սիւրիահայ խնդիրը, ինչպէս և գաղութների բովանդակ վիճակը մեզ մտահոգութիւն են՝ պատճառում նախ և առաջ ազգային-քաղաքական նկատումներով. հէ՛նց իբրեւ պայման հայկական դատի յաջողութեան, հէ՛նց Հայաստանի ազատութեան և ապագայ կենսունակութեան համար անհրաժեշտ է, որ գաղութները լինեն կազմակերպւած և ուժեղ, կապւած կենդանի կապերով հայրենիքի գաղափարի և աղտազրպական պայքարի հետ: Իսկ դրա համար չպէտք է թոյլ տալ, որ կատարեն այնպիսի կործանարար երևոթներ, որպիսին ահա տեղի է ունենում Սիւրիայում: Արտագաղթողները պէտք է գիտենան, որ հեռանալով՝ ո՛չ միայն կորստեան վիճ են փորում իրենց և իրենց սերունդների համար, այլ և ծանր հարւած են հասցնում հայկական դատին: Ազգային մարմինները պէտք է ըմբռնեն, որ իրենց անփութութեամբ յուսահատութեան մղելով գաղութական զանգուածներին՝ ոճիր ու դուրսհանութիւն են գործում Հայաստանի և հայ ժողովրդի հանդէպ:

Հ ա յ ա ս տ ա ն ի վ ա ր չ ա կ ա ն ր ա ժ ա ն ու մ ր

Երևանում հերթի է դրած մի շատ կարևոր հարց. Բոլշևիկները որոշել են Հայաստանը վարչական նոր վերաբաժանման ենթարկել կամ, իրենց խօսքով, «ստանացնել» նոր շրջաններ կազմել: Հարցը քննուած է «հարաւային կարգով», և, եթէ «դեկլարութեան» հերթական նոր ցնցումներ տեղի չունենան, հաւանաբար, շուտով կը դառնայ օրէնք:

Սա այն հարցերից է, որոնց մասին պէտք է մտածեն ու խօսեն ո՛չ միայն Երևանում, ուր տիրող հեղձուցիչ մթնոլորտի շնորհիւ ազատ կարծիքը արտայայտելու ո՛չ մի հնարաւորութիւն չունի, այլ և արտասահմանեան ազատ մամուլի էջերում: Սա այն հարցերից է, որոնք ահազին նշանակութիւն ունեն Հայաստանի գաղափարային համար և շայտք է անցկացնեն հապճեպ, նեղ կուսակցական նկատումներով, այլ բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրութիւնից ու քննութիւնից յետոյ, երկուստ ունենալով միայն Հայ Ժողովուրդի և Հայաստանի անկաշահող գաղափարային սահմանների պահպանութիւնը:

Թէ սահմանների վարչական բաժանման այս կամ այն սկզբունքը ի՞նչ կարևոր նշանակութիւն ունի, բաւական է յիշել, թէկողով, Հայաստանի վարչական բաժանումը ցարական իշխանութեան օրով: Ռուս ինքնակալութիւնը դիտաւորեալ կերպով Հայաստանի նահանգների սահմանները շրջազնէ էր այնպէս, որ ամէն տեղ Հայ Ժողովուրդը կազմէ փոքրամասնութիւն, որ Հայ, թուրք, վրացի ապրեն խառն վարչական միջնայն միութեան մէջ. աղաւթին հակամարտութիւնը ցարական իշխանաւորներին համար կառավարելու մի ձև էր. «բաժանեալ», զի տիրեցեաք: Եւ Հայ քաղաքական մտքի ներքին աշխատանքը Անդրկովկասում, երկար տարիներ, նպատակ ունէր այդ արհեստական սահմանների վերացումն ու ազգային սկզբունքով զեւած վարչական միութիւնների ստեղծումը: Ընդհանրապէս Կովկասի և, առանձնապէս, կովկասահայոց համար ներքին սահմանների խնդիրը ահազին դեր է կատարել երկրի ու Ժողովուրդի մշակութային ու տնտեսական յատկաշահութեան տեսակէտից: Եւ յետագային էլ, երբ այլևս երկրիսանի արծիւը չէր-գնացել էր Կովկասից, Գլխովիների ձեռքով զեւած սահմանները ծայր աստիճանի աղէտաւոր դեր կատարեցին կովկասեան Ժողովուրդների փոխյարաբերութեան և Հայաստանի ազգային սահմանների հաստատման գործում: Դարարարով, Գիւլիստանը, Լոռին, Ախալքալաքը, իրենց հետ կապած ցաւազին պաշարներով, ցարական սատարակների մտքած «ստանացման» պտուղներն են: Այս հարցով հետաքրքրող կարող է առատ ու խրատական նիւթ գտնել հանգուցեալ Ա. Ծահաթունեանի ուսումնասիրութեան մէջ, որ լաւագոյն աշխատութիւն է Անդրկովկասի վարչական

սահմանազման նիւրած գրականութեան մէջ*): Սեղ կարող են առարկել, թէ ա՛յն արտաքին սահմանների խնդիր էր, մինչդեռ Հայ բոլշևիկների ձեռնարկածը վերաբերուած է ներքին սահմաններին և, հետևաբար, ցարական սահմանների օրինակը չէ կարող կիրարկել ներկայ դէպքի համար: Այդպէս չէ: Նախ, մեր իրականութեան մէջ, ներքին սահմանները անբաժան կերպով կապած են արտաքին սահմանների հետ: Երկրորդ, միայն աղաւթին խնդիրը չէ, որ դեր է կատարում վարչական սահմանների հարցում. տնտեսական նկատումներն էլ, որոնք հիմք են ծառայում բոլշևիկների «ստանացման», սխալ հաշուածան ու գործադրութեան դէպքում կարող են կասեցնել երկրի բարգաւաճումն ու յատկաշահութիւնը: Հետևաբար, կրկնուած ենք, նման խնդրին պէտք է մօտենալ խիստ զգուշութեամբ. հազար չափել, մէկ ձևել:

Ի՞նչ սկզբունքներ են ստաւարելու բոլշևիկները Հայաստանի ներքին սահմանների վերաբաժանման համար, ի՞նչ ձևով են պատկերացնում նրանք այդ բաժանումը:

Բոլշևիկեան մամուլում արդէն հրատարակուած է Պետպլանի կազմած վարչական նոր շրջանների նախագիծը: Հայաստանը, այդ նախագիծով, ունենալու է հետևեալ վարչական բաժանումը. —

Ամբողջ Հայաստանը (ներկայ սահմաններում) բաժանելու է հինգ շրջանների (օկրուգ), այսօրայ 9 գաւառների փոխարէն: Այդ 5 շրջանները ունենալու են 35 գաւառակ: Իւրաքանչիւր շրջան պարփակելու է ամենաշատը 285,000 և ամենաքիչը՝ շուրջ 70,000 ագրարականութիւն, իւրաքանչիւր գաւառակ՝ 22-25,000: Աւելի մանրամասնօրէն Պետպլանի նախագիծը ներկայացնում է հետևեալ պատկերը.

Ա. — Երևանի շրջանի մէջ մտնելու են նախկին Երևանի, Էջմիածնի, Վայոց Ձորի (Դարալաքեազ) և Մեղրիի գաւառները 285,736 բնակչութեամբ (համաձայն 1926թ. մարդահամարի). կենտրոն՝ Երևան: Երբայկց Երևանի շրջանի է մտնուած Թալիսի գաւառակը, իսկ Երևանի ու Էջմիածնի գաւառներից՝ Արարանի և Ախտալի գաւառակները և Կոտայքի մի մասը դուրս են ձգուած: Երջանը բաղկանալու է 13 գաւառակներից (ուլախառնակ)՝ Աշտարակի, Փաշ-Նորաշենի, Թալիսի, Կոտայքի, Հրազդանի, Դամարլուի, Ղուրղուղուլիի, Մեղրիի, Վաղարշապատի, Վեդիի, Փաշալուի, Քեչիշենդի և Կոչի: Երջանը կազմելու է տնտեսական մէկ միութիւն — տեխնիկական բոյսեր, այդգործութիւն, գինու, կոնեակի, կաշու, պահածոների արդիւնաբերութիւն, բամբակադրծարան՝ իր յարակից ճիւղերով, վերամշակող ճարտարարհեստական ձեռնարկներ:

*) А. Шахатурия «Административный предел Закавказского края». Тифлис. 1918.

Բ. — Լեհինալանի շրջան (Շիրակ) — Ներկայ Լեհինական գաւառը, Լոռի-Փամբակի, Համամլուի և Արարանի գաւառակները: Բաղկանալու է 6 գաւառակներ՝ Աղբաբաձոր, Աղբաբաձորի, Արարանի, Գիւղբաձորի, Համամլուի, Շաղի խալիխի և Մոլլա Գեոքչայի: Բնակչութեան թիւը՝ 204,823: Կենտրոն՝ Լեհինականը (Ալեքսանդրապոլ): Շրջանը լինելու է գարնանացան հացաբոստերի, ճակնդեղի (շաքար) և արօտատեղիների շրջան: Այստեղ է կենտրոնացելու հիւսուածեղէնի և շինարարական նիւթերի արդիւնաբերութիւնը (Ղալալադի տուֆ):

Գ. — Լոռի-Փամբակ — բռնելու է ներկայ Լոռի-Փամբակի և Իջևանի գաւառները, բացի Համամլուի գաւառակից և Կարմիր Գիւղի գաւառակի մի մասից: 147,885 բնակիչ: 7 գաւառակ՝ Գիլիմանի, Դուդի, Ղարաքիլիսայի, Շամաղիինի, Շնողի, Աև Քարի և Ստեփանաւանի: Արդիւնաբերական տեսակետից — աշնանացան բոյսեր և անասնաբուծութիւն: Այստեղ է Համամլուի և Շամաղիի հանքային և քիմիական արդիւնաբերութիւնը:

Դ. — Նոր-Քաջաղու — Նոր-Քաջաղուի գաւառ, Ախուրաբի և Կարմիր Գիւղի գաւառակները և Արարանից, Կոտայքից ու Գիլիմանից մի քանի գիւղեր: Անասայ լիճը ամբողջովին մտնելու է այս շրջանը: 153,098 բնակիչ: 6 գաւառակ՝ Ալափարսի, Կարմիր Գիւղի, Քասար Գեյարի, Մարտունու (Ղարանլուխ), Նոր-Քաջաղուի և Բնդամալի (Ախուր): Արօտատեղիներէ և անասնաբուծութեան շրջան: ձկնորսութիւն, նաւապարտութիւն:

Ե. — Չանգեզուր — Չանգեզուրի ներկայ գաւառը անփոփոխ 68,918 բնակչութեամբ: Հացաբոստեր և անասնաբուծութիւն: Ղափանի պլանի արդիւնաբերութիւնը՝ իր համամիտ բնական հեռանկարներով*):

Զ. — Զեյնաբյան գաւառը և Կենտրոն Համար, որ Պետպլանի նախագիծը կազմած է մէկ ղեկավար սկզբունքով՝ վարչական նոր բաժանման հիւրք է ընդունւած միայն տնտեսական, արտադրական սկզբունքի՝ միւս բոլոր նկատմանները մի կողմ են դրած կամ շատ շնչին դեր են կատարում:

Աջի է գործում և մի ուրիշ պարագայ. Երևանի վարիչները թուով են հաշուած Հայաստանի սահմանային պլանի գոյալիճակի հետ և նոր սահմաններ գծելիս աջիք առաջ չեն ունեցել հողային նոր յաւելումների հնարարութիւնը, մինչդեռ նախկին սահմանագծման մէջ այս կէտը, կարեւու, որոշ դեր կատարում էր: Այսպէս, մինչև այժմ Մեղրին իր հազիւ 35,000 բնակչութեամբ կազմում էր առանձին գաւառ, անշուշտ, այն յուսով, որ Նախիջևանը պիտի մտնէր Հայաստանի մէջ և Մեղրին մեքենայօրէն պիտի կցւէր Երան, իբրև նրա օրգանական մէկ մասնիկը: Այսօր այլևէ նման նկատումներ գոյութիւն չունեն. հայ բուլեհիկները վերջնականապէս հաշուել են Նախիջևանի, Ղարաբաղի, Ախալքալախի կորստեան հետ: Էլ չենք խօսում Սուրմալուի, Կարսի և նման վայրերի մասին:

Մեզ ծանօթ չէ, թէ Պետպլանի նախագիծը Ի՞նչ

պայմաններում է կազմւել, ո՞վ է նրա հեղինակը և մասնագիտական քննութեան Ի՞նչ բովից է անցել: Պարզ է, սակայն, որ նա պահանջած լրջութեամբ չի մշակւել: Նրա հիղիմաքները երկրի ու մտղովորի կրական շահերից աւելի ղեկավարւել են կրօնական նկատումներով՝ « սոցիալիզմի շինարարութեամբ »: Այլ պատճառով կենդանի կենսքը որհել են դաւանարանական հաշիւներին:

Պետպլանի նախագիծը մէջ կան և դրական կողմեր: Այսինքն հէնց նրանցից:

Համեմատած նախկին ինքզաւտեան վարչական դրութեան հետ, ներկայ նախագիծը, ի հարկէ, մի քայլ է դէպի առաջ:

Փոքր միութիւնները ո՞չ միայն ծանր բնու են մտղովորի վրէն, իբրև վարչական մեծ ծախս պահանջող կազմակերպութիւններ, այլ և անոյժ են տնտեսական ու մշակութային լուրջ ձեռնարկներ գլուխ բերելու: Առէք, օրինակի համար, Մեղրիի գաւառը իր 3-4 տասնեակ հողար բնակիչներով: Ունենալով հանդերձ ստորագուս հիմնարկները՝ նա դատապարտուած է պահելու գաւառական կենտրոնական բազմածախս հիմնարկութիւններ, գանապան գործիւներ ու մորժկոմներ, պաշտօնէութեան մի հազարից կազմ, գաւառական ոստիկանութիւն, գաւառական շէկա և այլն. պարտաւոր է ունենալ զանազան գաւառական ձեռնարկութիւններ ու խորհրդային տնտեսութիւններ և այլն: Այդ բոլորը կուտէ ո՞չ միայն տեղական բոլոր հասոյթները, այլ և կենտրոնից ստացւած եկամուտները: Մշակութային ու շինարարական աշխատանքների համար միւլոց չի մնալ:

Պետպլանի նախագիծը աշխատում է առաջն առնել նման անպատեհութեան: Նա կազմել է աւելի խոշոր միութիւններ, տնտեսական աւելի մեծ նարարութիւններ և հեռանկարներով: Այսպիսով մի շարք անպէտք հիմնարկութիւններ կարող են կրճատւել և դրամական անպտուղ վատնումները, որոշ չափով, կարող են սահմանափակւել: Այն գումարները, որոնք այժմ ծախսուած են մակարտմային հիմնարկութիւններ, կոմունիստական մարմիններ ու պաշտօնեաներ պահելու համար, կարելի կը լինի դործարգել աւելի օգտակար գործերի վրա, եթէ, ի հարկէ, խնայած միջոցները թողնեն տեղում և չնուսեն կոմկուսի անյատակ որդերը:

Աւելի խոշոր վարչական միութիւնները ի վիճակի կը լինեն անել և աւելի լուրջ տնտեսական ու մշակութային ձեռնարկներ: Այս պարագան ակնյայտն է և առանձին բացատրութիւնների պէտք չունի:

Սակայն, պէտք է աւելացնել և այն, որ վարչական միութիւնների խոշորացման սկզբունքը Պետպլանի ծրագրում չի կրճատուած հետեղական կերպով ու չի հասցւած անհրաժեշտ աստիճանի: Եթէ Երևանի նահանգը մօտ 300,000 բնակչութեամբ և բնական բաւական աշքառու հարստութիւններով կարող է լինել կենտրոնակ և կուսակալ գաղափար համար պահանջւած հիւրք, Չանգեզուրը, օրինակ, իր 70,000 աղքատ բնակիչներով և չոր ու ցամաք լեռներով՝ չի լինի ինքնաբաւ և յատկազիմութեան ընդունակ, մասնաւոր եթէ Ղափանի հանքերն էլ, իրենց «համաժողութեանական հեռանկարներով» հանուն գաւառի կրճատման:

* Յու Ա. Աքան, «Հայ կեանք», «Հայրենիք» անս., 1928թ., Նոյնմբք, էջ 170-171.

սուբիւնից: Այլ բան է, եթէ սահմանազօնու՞մը համարէք ժամանակաւոր և ենթադրէք, որ Զարաթոն էլ պիտի մտցի Չանգեզուրի սահմանների մէջ, այսինքն՝ վերականգնի Միւռնաց նահանգը, բայց — արդար պէտք է լինի — հայ բուլճարները այդպիսի հերետիկոս ու յանցաւոր մտքեր չունեն. նրանք ստեղծում են վերջնական սահմաններ:

Դրական է, մեր կարծիքով, և՛ Պետպլանի այն տեսակէտը, որ վարչական բաժանումներ կատարելիս չպէտք է ղեկավարել պատմական նկատումներով, այլ՝ կենսիկ իրական պահանջներով: Եւ, ի հարկէ, այս դէպքում էական պայման է ժողովրդական տնտեսութեան զարգացման ապահովութիւնը, բայց նախ՝ դրան չի կարելի հասնիլ միայն արտադրական կենտրոններ ստեղծելու ծրագրերովով, երկրորդ՝ միայն ժողովրդական տնտեսութեան մտահոգութիւնները բաւական չեն սահմանների գծման ինչդրում: Մեզ մտական և մի շարք նոյնպէս էական պայմաններ. երկրի ազգազարկան կազմը, աշխարհագրական վերջը, կլիմայական հանգամանքները, հայտնաբերութեան միջոցները, տնտեսական ձգտումը և այլն:

Այս տեսակէտով մտենալիս՝ կը տեսնենք, որ Պետպլանի ծրագրով վերցնում է խիտա լուրջ առարկութիւններ և իր ներկայ մեռով չի կարող դոհացնել Հայաստանի իրական պահանջներին:

Առենք հէնց Պետպլանի հիմնական բաղձանքը՝ ստեղծել արտադրական միասնազուլ շրջաններ. յաջողւ՞մ է՞, հնարաւոր է Հայաստանը վերածել գոտաւոր արտադրական շրջանների, տնտեսական ուրոյն միասնորենի, որպէսզի նրանց վրա կառուցել երկրի վարչական կազմակերպութիւնը: Իրբև միտում, ընդհանուր ձգտում — թերևս, հնարաւոր է: Ի հարկէ, ջօլաբիլի տարբերութիւն կայ, օրինակի համար, Արարատեան դաշտի և, ստեղծ, Նոր-Բայազէտի շրջանի տնտեսական վիճակի միջև: Բայց հէնց նոյն Նոր-Բայազէտը, իր հերթին, բաւական է տարբեր արտադրութեան վարկերից: Արտադրական այլ բնոյթ ունի Բաւար Գեշարը, այլ բնոյթ՝ Նոր-Բայազէտը: Կամ Երևանը. տնտեսական-արտադրական տեսակէտից այլ կառուցածք է ներկայացնում Կոտայքը, այլ կառուցածք՝ երկու քաղաքներ գտնուող Դամարուն կամ Հրազդանը:

Հէնց ինչդրին էլ այն է, որ Հայաստանի պէս քահանա լեռնային կազմ ու կլիմայական շեշտած տարբերութիւններ ունեցող երկրում, ուր մի աննշան տարբերութեան վրա իշխում են մեծ տարբերութիւններ, հրբեմն արմատական ներհակութիւններ, անկարելի է ջիշ-շատ ընդարձակ տնտեսական միակազմութիւններ ունենալ: Այլ է, օրինակ, Ռուսաստանը, ուր անսահման տարածւած են իրար աւելի կամ պակաս նման շրջաններ. մի Սարատովի նահանգ, մի Ստաւրոպոլ կամ Կուրան կարելի է վերածել վարչական-արտադրական մէկ միութեան, որովհետև այնտեղ իշխում են տնտեսական մօտաւորապէս՝ նոյն պայմանները: Բայց Հայաստանում, ուր մի քանի հազար քաղաքներ կիրմետրի վրա, գրեթէ կողք-կողքի, գտնուում են բրինձ-բամբակ-խաղողի մշակութիւնը, հանքային արդիւնաբերութիւն ու անասնաբուծական-կաթնադրածական արդեան տնտեսութիւններ, անհնար է միայն

արտադրական սկզբունքով վարչական շրջաններ կառուցանել: Պնդել այդ սկզբունքի բացարձակ գերիշխանութեան վրա՝ նշանակում է գործել այնպիսի անհեթեթութիւններ, որպիսին տեսնում ենք Պետպլանի նախագծում:

Նմոյճի համար տեսնեք Մեղրիի և Արարանի շրջանները: Մեղրին գտնուում է Չանգեզուրի հարաւային ծայրում և կազմում է զանգեզուրեան լեռնազանգուածի օրգանական մէկ մասնիկը: Մեղրեցին իր կենցաղով ու բարքերով նոյն զանգեզուրեցին է՝ մի քիչ աւելի կոկիւս: Բայց Մեղրի գաւառի կենտրոնը՝ Մեղրիի շրջանը գտնուում է կլիմայական նոյն պայմաններում, ինչ որ Արարատեան դաշտը, և ա՛հա Պետպլանը, նախիջևանի դիտող, ուշում է առջ շրջանը կապել Երևանի հետ, մտցնել Երևանի շրջանը, որի հետ Մեղրին աշխարհագրականօրէն և տնտեսական անմիջական գործառնութիւններով միացած չէ: Եթէ Երևանի շրջանը գծուէր աւելի լայն, մէկը ստունէր և Ծարուր-Նախիջևանը, Մեղրին այդ շրջանի կցից կունենար որոշ արդարացում. այժմ, երբ Նախիջևանում իշխում է Ազրբէջանը, և Մեղրին ընկած է Երևանից բոլորովին հեռու և անշատ, ինչպէ՞ս կարելի է գոյւս բերել նման միութեան: Մինչդեռ Մեղրին թողնելով Չանգեզուրի սահմաններում, նախ նրան կը տրուի աւելի բնական վարչական կենտրոն, միւս կողմից Չանգեզուրն էլ կը լինի աւելի կենտունակ ու զորաւոր շրջան: Ապագային, երբ Նախիջևանը, մարդկային և ոչ-մարդկային բոլոր օրէնքներով, անցնի Հայաստանին, Մեղրին կարող է մեքենայօրէն կապուել նրա հետ:

Պակաս տարօրինակ չէ և Արարանի պարագան: Իր արտադրական վիճակով այս շրջանը նման է Շիրակին, բայց աշխարհագրականօրէն ընկած է Արագածի արարատեան կողմը գտնուելով Երևանից մի քանի ժամուայ հեռաւորութեան վրա: Արագածի բարձունքները մեծախիս երկար ափսններին ծածկուում դժուարանցանքի, իսկ երբեմն նոյնիսկ անանցանելի ձիւնով, և Արարանը կտրուում է Ալեքսանդրապոլից, մինչդեռ ազատ և անընդհատ յարաբերութեան մէջ է Աշտարակի, Վարդապատի ու Երևանի հետ: Բայց և այնպէս այդ գաւառակը մացուել է Շիրակի շրջանի մէջ, որովհետև այդպէս է հրամայում Պետպլանի շարտադրական հասկացողութիւնը. չէ՞ որ Արարանում բամբակ ու խաղող չի բնուում...

Այս օրինակներից պարզ հետևում է, որ չի կարելի երկիրը վարչական շրջանների բաժանելիս անբնական ու բռնազբօսիկ սահմաններ գծել: Այսօր հնարաւոր է արարանցուն ուժով քիչ Ալեքսանդրապոլ, բայց, քանի բուլճարները բնութիւնն էլ լեռնիկովի օրէնքներն չեն ենթարկել, վաղը կեանքը կը ստիպէ Արարանը նորից մտցնել Արարատեան շրջանի մէջ: Որովհետև Պետպլանի նոր բաժանումից յետոյ չէ, արարանցին իր իւրն ու պանիքը առաւելապէս Երևանի շրջանում է ծախելու, իր տան ու տնտեսութեան համար պահանջւած ապրանքները Երևանի շուկայից է հայթայթելու: Եթէ Պետպլանը շարտադրական յատկանիշի փոխարէն կանգնէր լայն տնտեսական հողի վրա, ի հարկէ, նման սխալներ չէր գործի:

Մենք ստույլ բերինք միայն մի քանի պատահական

օրինակներ: Նախագծի մասնազիտական մանրակրկիտ քննութիւնը կարող է տալ աւելի պերճախօս փաստեր՝ ցոյց տալու համար, որ Պետպլանի մշակած ծրագրերը արդիւնք է հազճեպ ու լրջօրէն չմտածւած եղբակացութիւնների:

Մի երկրի վարչական վերաբաժանումը շօշափում է այդ երկրի ամենահիմնական խնդիրները և դործադրութեան համար պահանջում է մեծ եռանդ ու նիւթական միջոցներ: Եւ իր ժողովրդի բարիքի մասին մտածող պետութիւնը պարտաւոր է նախքան նման պատասախնատու քայլ անելը հարցը քննել բոլոր

տեսակէտներից և լսել ժողովրդի ու հեղինակաւոր մասնագէտների կարծիքը: Երևանցիների համար այդ ամենը դատարկ բաներ են: Մոսկուս հրահանգ է աւել՝ կատարել «ուայրնացում» արտադրական միութիւններ կազմելու համար — այդպէս բաւական է:

Որովհետև Հայաստանի ճակատագիրը վարողը ո՛չ թէ երկրի իրական պայմանները թելադրութիւնն է ու ժողովրդի կամքը, այլ Մոսկուայից ստացւած վերջին հրահանգը՝ Ստալինի կամքը: Ստալինի կամքը Երեւանում օրէնք է:

Ս. ՎՐԱՅԱՆ

ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹԻԻՐՔԻՈՅ ԱՊԱԳԱՆ

Համաշխարհային պատերազմէն յետոյ, իսպաղուութեան հաշնարդարը և նոր կացութեան պահպանումը՝ միջազգային քաղաքական կեանքի դանդաղ ժամանակաշրջան մը ստեղծած են: Ռուսաստանի և Թիւրքիոյ անջատումը միջազգային շրջանակէն, աւելի քան սպասողական վիճակ մը կը ստեղծէ միջկետական կենդիւնները յարգաբերու տեսակէտէն: Մինչդեռ ներկայ դարաշրջանի թէ տնտեսական և թէ պետական-քաղաքական խնդիրները գերազանցապէս համաշխարհային են և սերտօրէն կապւած մօտաւոր և հեռաւոր երկրամասերու և ժողովուրդներու ամբողջական կեանքի և շարժումներուն հետ: Այս տորնչութիւններն ու նկատարումները մեծապէս կը նպաստեն այն կայուն դրութեան, որուն ակնաստես ենք այս օրերուն, հակառակ այն զղային ցնցումներուն, որոնք ընդհանուր դժգոհութեան մը պատճելը կը պտցնան գրեթէ բոլոր երկիրներու և ժողովուրդներու մէջ:

Այժմ տնտեսական և քաղաքական խնդիրները այնքան բարդ են և միջկետական յարաբերութիւնները այնպէս խճողած, որ հազիւ թէ գտնուի պետութիւն մը կամ պետութիւններու համախմբում մը, որ կամենայ յախարհը մղել նոր ցնցումի մը, փոխել իրերու ներկայ դոյալիճակը:

Այդ փուլէն կողմի ներկայ Թիւրքիան, որ մօտ տարւոյ տարւոյ պատմութիւն ունի, անակնկալ թէ իրեն և թէ, մանաւանդ, իրմով հետաքրքրողներու համար: Միջազգային «կայուն» վիճակ, ինչպէս նաև քեմալական ռեժիմի երկարակեցութիւնը տեսնելի են, որ կը ստիպեն մեզ վերադնահատական ակնարկ մը նետել ներկայ Թիւրքիոյ և անոր ապագայի վրայ, այն գիտակցութեամբ, որ մենք՝ Հայերս գերազանցապէս շահազգրուած ենք Թիւրքիայով, որպէս երկիր մը, որու հետ կապւած է հոյակապ հարցի կարգադրութիւնը:

Քեմալական ռեժիմի կայունութիւնը, ինչպէս նաև ձեռնարկած յանդուժ յեղաշրջումները հետզհետէ այն մտայնութիւնը կառաջացնեն, թէ «հիւսիս մարզը» սկսած է վերածնել: Արդ, պետական և ազգային-քաղաքական տեսակէտով մօտենանք այդ խնդրին՝ քննելու համար, թէ ո՞րքան իրաւարի է նման դատողութիւն մը:

Թիւրքիա ինչո՞ւ համար «հիւսիս մարզ»ու անունը շահած էր: Օսմանեան կայսրութիւնը իր տիրապետութեան տակ աւած էր Հայաստանը, Թիւրքիասանը,

Արարիան, Բալկանեան թերակղզին ամբողջ, Եգիպտոս և Արիւրկէի Հիւսիսային հողամասերը, և այդ հսկայ տարածութեան և բազմաթիւ ժողովուրդներուն կը տիրապետէր սուրի ուժով: Թիւրք աշխարհը թաթարական հորդաններէն դուրս կուգար, կը դառնար ցեղապետութիւն մը և կարճ ժամանակայ ընթացքին, շնորհիւ իր սուրի յաղթանակներուն, կը դառնար տիրապետող ազգ մը, ստանց, օսկայն, բաւարար թիւ և մշակութային ընդունակութիւն ունենալու, որպէսզի կարողանար մարտել կամ իր ետեմէն քաշել այն ժողովուրդները, որոնք կիսնային իր թեւարկութեան տակ: Քանի մը հարիւր տարւայ տիրապետութիւնը բաւական չեղան, որպէզոքի օսմանեան տիրապետութիւնը դառնար բնականոն, այդ լայնատարած կայսրութեան մէջ: 19րդ դարու սկզբէն թրքական լայնատարած ստամոքսը անրոժեւիլ ցաւերու կը բունէր: Բալկանեան ժողովուրդները, Արարները, Հայերն ու Քիւրտերը ոչ միայն չէին մարտած հոն, այլ ա՛յլ աւելի կարծրացած, սկսան որոնել իրենց ուրոյն կեանքի ճանապարհը:

100 տարւայ պատմութիւնը յայտնի է. մանաւանդ ուշադրաւ է վերջին 15 տարւայ պատմութիւնը: Թիւրքիա հետզհետէ ազատեցաւ «ստամոքսային» ծանր հիւսիսութիւնների: Կայսրութեան թաժնեցաւ վերջնականօրէն Եւրոպական Թիւրքիան և միացաւ Աերպիոյ, Սոււկարիոյ, Յունաստանի, Ալբանիոյ, որոնք իրենց կարգին անցնող հարիւր տարւայ ցնցումներու ընթացքին գտած էին իրենց անկալ վիճակը: Համաշխարհային պատերազմէն և անկէ յետոյ վերջնականօրէն ազատեցան արարական երկիրները, և այսօր Սուրիոյ և Իրաքի սահմանները ընդարձակւած են գրեթէ մինչև Տաւրոսեան լեռնաշղթայի ստորոտները:

Այս դէպքերուն եթէ մօտենանք անկողմակալ ակնոցով, պիտի ըսենք, որ Թիւրք ազգը հետզհետէ իր մահացու հիւսիսութիւններէն կը բուժուի և կը մտնէ ազգային վերածնունդի ճամբու մը մէջ: Որովհետև անցած հարիւր տարւայ ընթացքին Թիւրքիային թաժնած երկրամասերը և ազգերը շատ խոշոր բնուէին, որոնց ոչ կառավարելու եղանակով, ոչ մշակութթով, ոչ տնտեսական շինարարութեամբ և ոչ այ ֆիզիքական կոպիտ ուժով կենար տոկալ: Բայց երբ խնդիրը վերցնենք ու դատենք այն կարևորութեամբ, որ կը ներկայացնէր օսմանեան կայսրութիւնը, բնա-

կանօրէն պիտի դանք այն եղբակցութեան, որ «հիւանդ մարդ» մեռաւ: Թրքական կայսրութիւնը իր գիւտարական կարեւորութեամբ, միջազգային քաղաքական կշիռով, իր հարուստ երկրամասերով և ծովային մեծ հնարաւորութիւններով անդարձօրէն մեռած կարելի է համարել:

Թիւրքիան կամաց-կամաց կը բռնէ (երկարամեայ նահանջներէն յետոյ) բալկանեան պետութիւններու ուղին. հետզհետէ կը կազմաւորուի իբրև ազգային պետութիւն: Եւ որպէս այդպիսին, իր ուժով և քաղաքական կարեւորութեամբ մտաւարակէն հաւասար է ներկայ Յունաստանին, Սերպիոյ կամ Ռումանիոյ: Մինչդեռ 15 տարի առաջ այսպիսի դատողութիւն մը անհնէթ պիտի թաւր:

Թիւրք ազգը քաշելով ու ամփոփելով ազգային սահմաններու մէջ, որպէս ազգային հաւաքականութիւն, անշուշտ աւելի կուժեղանայ ու կը կազմակերպուի զուտ ազգային կերպարանով: Քեմալական յաղորդութիւններէ, հայկական շարժերէ և յոյներու ու թիւրքերու փոխանակութիւնէ յետոյ, Թիւրքիան կը դառնար զերազանցապէս միատարր երկիր մը, ինչ որ կը վերաբերուի Թիւրքիոյ արևմտեան մասերուն, սակայն, աթելիան նահանգները (Հայաստան և Քիւրտիստան), որոնք օտմանեան կայսրութեան հիւանդոտ մասերն էին, ժառանգութիւն կը մնային ներկայ վերածննդ Թիւրքիոյ: Ուշադիր դիտողը պիտի նշմարէ քեմալական վերելքին մէջ այն մեծ խոչընդոտը, որ կը ներկայացնեն, արևելեան նահանգները իրենց զատարկութեամբ, քրտական սպառնալիցութեամբ և Թիւրքիոյ բոլոր եղբայրներու վրա ափ առած հայ ժողովրդի պահանջներով: Բնական է, այս մեր մատնանշած կէտը թերևս շատերու ուշաբարութենէն կը վրիպի՝ նկատի առնելով այն շնթիւնը յայտարարութիւնները, որոնք մէկը միւսին ետեւէն կուգան աւետելու խալիֆայութեան և սուլթանութեան վերացումը, կրօնքի և պետութեան բաժանումը, երրորդականացման դաժան կարգադրութիւնները, լատինական տառերու իւրացումը ևն. ևն.: Եւ, սակայն, ներկայ Թիւրքիոյ ներքին ցաւերէն լաւ հասկցող ամէն մէկ անհատ կարող է խոստովանիլ, որ Մուստաֆա Քեմալի դրեթէ բոլոր ձեռնարկներու համար արդէն պատրաստի դետին մը կար թիւրք ազգի մէջ, և այն ահռելի դժարութիւնները, որոնց արտասահմանի մամուլը կը հարկադրէր Քեմալի հրաշքները, այնքան ալ տեղին չէին:

Ազգային ներքին կեանքի մէջ քեմալականութիւնը վերածննդով իթթիհատն է. կարելի է ըսել Սահմանադրութեան և պատերազմի շրջանին հասած սերունդը: Հին իթթիհատը կազմակերպօրէն վերջնականապէս ջախջախեցաւ, քանի մը տարի առաջ, կախադաններու վրա: Այդ իշխանութեան կուր էր և ոչ ոք չէր իմի: Մնացած տարրերը, որոնք յանուն կրօնական բմբուսմաներու կամ այլ պահպանողական մտայնութիւններու դուրս պիտու դալին ներկայ ուժեղ ուժ մ, թոյլ են և սննդունակ իրենց ետեւէն քաշելու թիւրք բանակը, երիտասարդութիւնն ու մտաւարականութիւնը: Վերածննդ Թիւրքիան ներքին ուժերու փոխադարձութեան տեսակէտէն ամուր է: Փոփոխութիւնները, պետական հարածներ կարող են տեղի ունենալ, սակայն, իշխանութեան զուրկ եկողը պիտի դառնայ նոր Քեմալ մը,

իսկ իր յենարանը՝ քեմալական սերունդը:

Եթէ փորձենք «հիւանդ մարդ»ու հետեւը փնտնել ներկայ Թիւրքիոյ վերակազմութեան մէջ, պիտի խոստովանենք, որ Թիւրքական ազգի բռնած սահմաններու մէջ (Պոլիսն ու Թրակիան ալ հաշուելով), փոքրամասնութեան խոչընդոտ մտահոգիչ երևոյթ մը ըլլալէ դադարած է այն ասիականի, որ Թիւրքիան, որպէս ազգային պետութիւն, բազմաթիւ տեսանքներ ունի ուժեղանալու, շեշտելու իր ազգային դիմագիծը և կեդրոնացնելով ազգային բոլոր ուժերը այսպիսի ամփոփ պետութեան ներքը՝ բռնել վերածնունդի ճանապարհը:

Հոս առանձնապէս պէտք է շեշտել Թրակիոյ և Պոլսոյ մասին: Պոլսը այն մեծ պատաստներէն է, որ դժտար կը բաժանի, իսկ ախորժուկ ունեցողները շատ են ու իրարու հակամարտ: Նոյն բանը կարելի է ըսել նաև Թրակիոյ մասին: Բալկանեան պետութիւնները իրենց քնակաւորն հունի մէջ մտած են մեծ պատերազմի հաշուարդարէն յետոյ: Իրենց ներկայ մեծութիւնը տակաւին չեն ամրացուցած, իրարու հակամարտ շէրքի մէջ են. ոչ մէկը միւսի փոքրիկ առաւելութեան կը դիշի: Այս պարագաներու մէջ Թրակիան երկար տարիներով կրնայ Թիւրքիոյ տիրապետութեան տակ մնալ ու շատ արագ թրքանալ, ինչ որ անցեալի մէջ տեղի չէր ունենար:

Ուրեմն, բացի Հայաստանէն և Քիւրտիստանէն, Թիւրքիան արտասած կարելի է համարել «հիւանդ մարդ»ու ցաւերէն, և, իրօք, ան կը կազմաւորուի Հայաստանէն և Քիւրտիստանէն դուրս մնացած մասերու մէջ: Թիւրքիան կը դիտակցի իսր բոլորը և իր ամբողջ ուժով կը տեղաւորուի ոչ միայն կեդրոնական նահանգներու, այլ նաև Իրվիլի, Պոլսոյ և Թրակիոյ մէջ, կատարելապէս համոզած, որ եթէ Թիւրքական ազգային պետութիւնը ամրանայ և իր գլխաւոր ուշադրութիւնը կեդրոնացնէ այդ վայրերու վրա, նոր անդամահատութեան մը չպիտի ենթարկուի: Այս մտայնութիւնը ըստ ամենայնի կը համապատասխանէ քաղաքական իրականութեան: Յունաստանը հանդուրժեց փոխանակութեան օրէնքին և տեղաւորեց մէկ և կէս միլիոնի չափ զաղթականներ իր երկրին մէջ, շատ երկար տարիներու համար այլևս ձեռք քաշեց Իրվիլիէն և Մարմարայի եղբայրներէն. իսկ շատ երկար տարիներ երբ անցնին, այդ վիճելի տեղերը, ուր արդէն հոծ թրքական ազգաբնակչութիւն մը կար, որ հիմա դարձած է միապաղաղ, բնական է, պիտի դառնան մէկ մէկ Գոնիաներ ու Էնիկուրիներ, ուր յունական կամ այլ տիրապետութիւն մը անկարելի պիտի ըլլայ: Նկատի պէտք է առնել նաև այն պարագան, որ Թիւրքիան արևմուտքէն անդամահատելու համար, նախ կը պակսի ազգազբախական կարևոր տեսալը, և յետոյ հիմա ձեռքերը ապառ չեն:

Իտալական բաղձանքներն ալ այս շրջ տեսանքներու բախեցան: Իտալիա գինք քաշալերով մեծ ոյժ մը չգտաւ իր թիկունքը և ոչ ալ նպաստաւոր դետին մը՝ Թիւրքիոյ սահմաններու վրա: Եթէ օտար ազգաբնակչութեամբ զէշ մըն ալ անդարձակ հողամաս գտնէր Թիւրքիոյ արևմուտքի սահմաններու վրա, թերևս Իտալիա փորձէր այդ պատաստը առնել: Իսկ Հայաստանն ու Քիւրտիստանը շատ հեռու կիլիսիայի իր թիկն տարածու-

թենէն, մանաւանդ որ այդ հողամասերու վրա երկարած կը մասն հիւսիսէն Ռուսաստանի և Հարաւէն Անդրկոյն (գլխաւորաբար) և Ծրանասոյի թաթերու շուքերը: Իսպախ, ուրեմն, բունած է իտաղոց թափանցման ճանապարհը: Թիւրքիա կը գիտակցի, որ 20-30 տարիներու ճանապարհ կտրելէն յետոյ միայն նման թափանցումը մը կրնայ նոր վտանգներու զուտ բանայրայց այդ իր ազգային միապաղաղութեան սպառնալիք մը չէ՛ և չի կրնար տանիլ զէպի հողային անջատումը, որ զհիւանդ մարգջու յատկանիչն էր:

Այսպէս, Թիւրքիան կը կազմակերպուի իր ազգային սահմաններու մէջ, կուժեղանայ ու կը քալէ իր դրացի փոքր պետութիւններէն հետ զուգահեռաբար: Այս վերածնունդի հիւանդոտ կողմը և վտանգաւոր հիւանդու թիւինը (գոնէ Թիւրքիոյ պատմութիւնը դասական վկայարանն է այդ հիւանդութեան վտանգանին) դարձեալ հողային և ազգային խնդիրն է, որմէ ամբողջովին չպարտեցաւ Թիւրքիան: Հայաստանի և Քիւրտիստանի սիրապետութիւնը ոչ միայն նոր Թիւրքիոյ զերազոյն մտահոգութիւններէն մէկն է, այլ և հիւանդոտ միակցան է: Նոր Թիւրքիան կը դաւարի երկուութեան մէջ՝ մէկ կողմէ մեծ ջանքերով իր ազգային ներքին կեանքը կը դարձնէ, միւս կողմէ իր ուժերու խորոզ մասը կը սպառէ Հայաստանի և Քիւրտիստանի վրա, միայն տիրապետութեան մտահոգութեամբ: Թիւրքիա որքան ալ կազդուրած ըլլայ քեմալական յանդուրժաններու շնորհիւ, չի կրնար գործել այս երկու իրարու ներհակ ճակատներու վրա: Թիւրք ազգը, որու առաւելագոյն թիւը կարելի է 7 միլիոնի հասցնել, պատմութեան հարածներու տակ մեռած է, որպէս կայսրութիւն ու կը վերածնուի որպէս ազգային պետութիւն: Ան պարտաւոր է ունիկըրել պատմութեան տուած դասերուն և հրաժարել Հայաստանին ու Քիւրտիստանին, որպէսզի վերջնականօրէն կրնայ նւիրել ազգային ուժեղ, բայց սահմանափակ պետութիւն մը կերտելու:

Հայաստանը դատարկ է. Քիւրտիստանն ալ մասամբ քերտերով բնակած: Քիւրտերը ասպտամբած են և կը շարունակեն կոխ յատեն իրենց ազգային ազատութեան: Հայերը պարտած պահանջատէր են, Արաքսի և Ախուրլանի ափերուն վրա սպասող: Թիւրքիոյ մօտ 500 տարւոյ տիրապետութիւնը այդ երկու երկարածները թիւրքերով չէ կիցած լեցնել: Այդ հողամասերու այս վիճակով դրոյն թիւն ունենալով ինքնին Թիւրքիոյ նոր անջատման մղիչ պատճառներ են: Այս կողմէ Թիւրքիան տկար է և ներկայ վերածնունդը սպառնուած չէ:

Այսպիսի առաւելապէս ծանրացայ արտաքին ազդակներու վրա, որովհետև Թիւրքիոյ ներքին կեանքի մէջ դերագանց դեր կատարած են արտաքին ազդակները և տակաւին կը կատարեն: Թիւրքիոյ պատմութիւնը ցոյց կուտայ, որ Թիւրք ազգը, որպէս սիրապետող տարր, ամբողջովին կրնանք մնաց արտաքին պատերազմներով և նպաստակ ազգերը զսպելու դրածով: Թիւրքիոյ ներքին կեանքի անջգերու մեծ մասն ալ արտաքին նշանակութիւն ունիին թիւրք ազգի համար, հակառակ անոր, որ Թիւրքական կայսրութեան սահմաններու մէջ տեղի կունենային: Յունական, բուլղարական, քրտական և հայկական հարցերը, ըստ երևոյթի, ներքին ընոյթ կը կրէին, բայց, ըստ էութեան,

արտաքին բարդ խնդիրներ էին, որոնց վրա սպառեցաւ թիւրք ցեղի կորովը, ու ան ատեն չունեցաւ ազդովին կեդրոնանալու, չընարարական գործ տեսելու և ազգային դիմագիծ ունեցող պետական չէնք կառուցանելու:

Ներկայ գործելակերպը, որ ունի քեմալական վերածնուող Թիւրքիան հանդէպ Քիւրտիստանի (բարենորոգման անւան տակ նոր կտորածներ և բռնութիւններ) և Հայաստանի (Լոզանի պայմանագրէն յետոյ անտեսել և լուծութեան մատնել հայկական պահանջները, որպէս թէ Թիւրքիոյ հետ երբեք աւրնշուրթիւն չունենային) ցոյց կուտայ, թէ այսօրու Թիւրքիան իր շնթալից յեղաշրջումներու ընթացքին, ազգային հարցի լուծման մէջ, մնացած է այն, ինչ որ էր հին Թիւրքիան: Երևոյթները ցոյց կուտան, որ վերածնուող Թիւրքիան պետական մեծ առաջնութիւնը չպիտի ունենայ Քիւրտիստանի և Հայաստանի պահանջներուն շնորհաւնելու: և այդ խնդիրները պիտի լուծեն վերոնշիւնալ ազգերու հարածներու տակ և օտար միջամտութիւններով ու թիւրք տարրը վերջնականապէս պիտի ամփոփուի իր ազգային սահմաններու մէջ: Այն ատեն Թիւրքիան աւելի զօրաւոր պիտի դառնայ, և իր վերածնունդի ընթացքը կրնայ աւելի արագանալ:

Թիւրք վերածնունդը պայմանաւորած էր այն իրողութեամբ, որ Թիւրքիան, հակառակ պարտած պետութիւն մը ըլլալուն, հակառակ մեծ անդամահատութիւններուն, 1919-ին կրցաւ ամփոփուի իր մորթին մէջ, կազմեց Անատոլոյի թրքական պետութիւն մը և տասը տարւայ ճանապարհ կտրեց՝ թրքական պետութեան նաւը հասցնելու համար մինչև այսօրայ նաւահանգիստը: Այս զինուորական և ազգային յաջողակները թէեւ պայմանաւորած էին արտաքին դիւանադիտական բարեյախող դասաւորութեամբ *, սակայն, յատկանշական էին այն բանով, որ Թիւրք ազգը այդ շարժումներուն կը դիմէր՝ Անատոլոյի խորը ամփոփուելէ, զուտ թրքական հասարականութիւն մը դառնալէ յետոյ: Ազգը խուճապով նահանջած էր զէպի այն օրրանը, ուր դարեր առաջ Օսմանն ու իր յաջորդները փոքրիկ աշիրաթի մը զլուխ անցած՝ պատերազմիկ պետութիւն թափելու կը կազմէին: Անա, այս ինքնամփոփումն է որ խարխիս ծառայեց յետապայ յեղաշրջումներուն, որոնք շատերու աչքին հրաշքներ թելցան:

Թիւրքիոյ մէջ հրամանադրած ու գործադրած յեղաշրջումներն ու բարենորոգումները, ընդհանրապէս, նկատեցան զիկտատորական արարքներ, անսպասելի և անընդունելի իրողութիւններ թիւրք ազգի համար: Բայց երբ անոնք տեական ընոյթ մը ստացան, տարակարծութիւններու տեղի տւին իրենց բուն արձգքի մասին. — Թիւրքը կրնա՞յ եւրոպականանալ,

* Զպլտօք է մտանալ, որ բնական յաջողութեամբ զլխաւոր ազգակը Դաշնակիցներու հակամարտութիւնն ու Աեյի դաշնագրի շուրջ մղած պայքարին, ինչպէս և բոլշեակներն ուժեղ օգնութիւնը թիւրքներին:

կրօնամուլ իսլամ այդ բազմութիւնը կընդունի թիւրքական դարաւոր բարեբրուն հակառակ եղող այդ յեղաշրջումները, անոնք ժամանակաւոր և բռնի պարտադրած չեն թիւրքին, որ քիչ յետոյ իր փայանին պիտի դառնայ. կը զօրանայ թէ կը տկարանայ թիւրքը այդ բարենորոգումներու հետևանքով, ևն. ևն. :

Հայ մամուլը, որպէսզի կրնայ ճիշտ պատկերը տալ ներկայ թիւրքերոյ, պէտք է հրատարի կանխակալ կարծիքներէ և հիմնի շօշափելի տեսանկրու վրա, և յետոյ (ինչ որ ամենէն կարևորն է) զդուշանայ ծայրահեղ չափազանցութիւններէ: Այս վերջին կէտի վրա կը շեշտմ յատկապէս այն պատճառով, որ յաճախ կարելի է հանդիպել յախտնայ յայտարարութիւններու, ըստ որոնց թիւրքը մարդ չէ եղած և չպիտի կրնայ ըլլալ, որ թիւրքը տգէտ է և դատապարտած է մահուան, որ թիւրքը ոչինչ ոյժ մըն է, կամ ընդհակառակը, թիւրքի ուժը մեծ է անպարտելի նկատելու աստիճան, մտաւորական-մշակութային արժէքը արտակարգօրէն փայլուն է և այլն:

Պէտք է թիւրքը տեսնել այնպէս, ինչպէս որ է. արժէքաւորել անոր ներքին և արտաքին կշիռը, այն չափով, ինչ չափ որ առարկայական իրականութիւնը կը ներշնչէ, որպէսզի ոչ արհամարհենք ու քնանանք, ոչ ալ սմբենք ու ձեռնիքնք ըլլանք:

Թիւրքերոյ վերջին տասնամեակի ընթացքին կատարած յեղաշրջումներն ու բարենորոգումները անպատմաբան պատմական արժէքներ են՝ կոչւած մեծ մտտով տեւական դառնալու և արդիւնք քաղաքական, տնտեսական և հասարակական ընդհանուր դարաշրջման մը և անմիջականութեան կնիքը չեն կրեր, հակառակ Քեմալի հրամանադրերու արագութեան և յանկարծակառութեան: Տեղի ունեցած թիւրքերոյ ազգային յեղափոխութեան փուլի շարունակութիւնն է, որու մօտաւոր արժատը կը հասնի մինչև Միտհատ փաշայի սահմանադրութիւնը ու անկէ յետոյ 1906ի սահմանադրութեամբ զօրացած, քսան երկար տարիներու վերլի-վարումներէ յետոյ, կը շարունակէ իր ընթացքը, և այս անգամ աւելի արժէքաւոր ու աւելի հիմնական, որովհետև թիւրքը ազգը միեակ է, կը շարժի իր ներքին ուժերով, և կը գործադրէ իր նոր առաջադրութիւնները միայն թիւրք ազգի վերաբերմամբ, առանց ուշադրութիւն դարձնելու փոքրամասնութեանց, որոնք, անցնալի մէջ, թիւրքը ազգի համար արտաքին ծանր բարդութիւններ կրնային ստեղծել:

Առենք հանրապետութեան հռչակումը և սուլթանութեան ու խալիֆայութեան վերացումը: Շատերը գարծառով և թիրահաւատութեամբ դիմաւորեցին կատարւած յեղաշրջումը, հրաշք նկատեցին, կամ խաղ մը, որպէսզի Քեմալը ինքզինքը սուլթան և խալիֆա հռչակէ: Բայց ոչ մէկը և ոչ միւրը տեղի ունեցաւ: Եթէ քսան տարւայ պատմութիւնը աչքի առջն ունենանք, կը տեսնենք, որ սուլթանութիւնն ու խալիֆայութիւնը խոշոր հարւած ստացած էին 1908-ին և, մասնաւոր, 1909-ին սուլթան Համիտի անկումով: Սուլթան-խալիֆան զարձած էր երկրորդական ոյժ մը. թիւրքերոյ տէրը Իթթիհատն էր. սուլթանի և խալիֆայի դերերը զլիւսաւորաբար կը կատարէին էնդերներն ու Թայնաթ փաշաները: Իսկ 1918-ի դիւնադադարէն

քանի մը ամիս յետոյ Մ. Քեմալ և Կարաբեքը Քեազիմ փաշաները, կարած Պրոսէն և Սալարաշին (և միացած Մոսկուայի) Անատոլոյի մէջ թիւրք պետութեան տէր կը դառնային, կառավարութիւն կը կազմէին, յայթանակներ կը տանէին և հինգ տարի անընդհատ թիւրք ազգը կը կառավարէին առանց սուլթանի և առանց խալիֆայի: Հինգ տարին բաւական երկար ժամանակ էր նախնական վարժութիւն մը տալու: Թիւրք ժողովրդին, որ դիւրութեամբ կարողանայ ընդունել Մ. Քեմալի նախազահութիւնը, փոխարէն սուլթանի մը կամ խալիֆայի մը: Ինչպէս կը տեսնէք, մէկ դիւրեւայ կամ մամուլ մէջ չէ ծրարուած այդպէս-օր քաղաքական մեծ յեղաշրջում մը: Տեւալ պայմաններու մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը ոչ միայն հրաշք չէր, այլ իրերու ընդհանուր աղբիւնք:

Սալթիֆայութեան վերացումով, պետութիւնը բաժնեցաւ կրօնական հաստատութիւններէ. չէրիաթը և կրօնական շարք մը իրաւունքներ ջնջւեցան, փաթթոցն ալ վերացաւ, որպէս զարդ մը բարենորոգումներու դրաւներէն: Շատերը մոլեռանդութեան դասական երկիր մը կը նկատեն Թիւրքիան. այդ վերազդումը չափազանցութեան է: Եթէ մեր շուրջը, հոս Եւրոպայի մէջ նախնք, աւելի մոլեռանդութեան պիտի հանդիպինք: Իսկ Թիւրքերոյ պատմութիւնը կը վկայէ, որ քաղաքացիական իշխանութիւնը, տասնեակ տարիներու պայքարով, սպահարով է իր գերակաութիւնը կրօնական օրէնքներու և հաստատութիւններու վրա: Թանգիմաթի (1839-ին) օրերէն հետզհետէ չէրիաթն ու անոր ծառայող կրօնական դասակարգը նահանջած են քաղաքական և դիւնադարական սանդ իշխանութեան առջևէն: Սահմանադրութեան շրջանին սօֆիստները կախաղաններու վրա կը բարձրանային և ժողովուրդի մեծ մասը ցնծութեամբ կը դիմաւորէր կառավարութեան կարուկ միջոցները: Սահմանադրութեան շրջանին, նոր կեանք մը կը սկսէր Թիւրքերոյ մէջ, նոր երիտասարդութիւն մը կը հաստենար (թէ և դահիճ մեզ համար), առևտրական կեանքը, արագ յարաբերութիւնները ուրիշ երկիրներու հետ յառաջդիմական կեանք մը ընդդիմաբնու մտայնութիւնը կը ստեղծէին, և հետևանքն այն կըլլար, որ կրօնական հաստատութիւնները գործնական կեանքի մէջ անպէտ կը դառնային, իսկ կրօնականները ծաղոբլի ու արհամարհելի: Քսան տարւայ պայքարներէն յետոյ է, որ 1923-ին դրութեան տէր եղող սեղանդը երկիրը կազառէր կրօնաւորներէն և արդէն փոած հաստատութիւններէն, որոնց կողքին տասնեակ տարիներ առաջ քաղաքացիական հաստատութիւններ հիմնւած էին, սկզբնական շրջանին տկար, բայց հետզհետէ ամրացած, որոնք ժողովուրդը ընտելացած էր արդէն ու պատրաստ կրօնական հաստատութիւններէն ազատելու:

Կանանց ազատութիւնը, զօրի վերացումը, վերջի վերջոյ, Մ. Քեմալի հրահանգէն յետոյ չէր, որ տեղի ունեցաւ: Անչուշու, շարք մը իրաւունքներ կինը կըցան ձեռք բերել օրէնքներու հրատարակումէն յետոյ, բայց ստիկ առաջ 1908-ի սահմանադրութեանէն յետոյ, առանց օրէնքի հրատարակութեան, կինը սկսած էին իրենց երեսները բանալ, կամաց-կամաց քողէն հրատարել, ստեղծել թիւրքական կանացի տարազ մը և մասնակցիլ հասարակական զանազան հաս-

տատութիւններն: Մ. Գեմալ ընդառաջ երթալով կատարւած իրողութիւններու՝ աւելի արմատական օրէնքներ հրատարակեց, իսկ Թիւրք ժողովուրդը արդէն 1908-էն յետոյ քանիցս ստիպւած էր սքախֆիւրիլլա (մեզայ Աստուծոյ) ըսել ի տես այդ նորութիւններուն, և այն աստիճան ընտելացած էր, որ Գեմալի արմատական կարգադրութիւնները այդ աստուածամալի բացականչութեան չարժանացան:

Արմատական նշանակութիւն չունեցող բարեփոխումները աւելի դժգոհութեան տեղի տուին, օրինակ, զլիարկի գործածութիւնը: Շատ յաճախ, զլիարկի գործածութիւնը որպէս եւրոպականացման ամենէն յատկանշական երևոյթ մը վեր կտանեն և ծաղրի կենթարկեն՝ ըսելով, թէ Թիւրքը Թիւրք կը մնայ, եօղւարտէի Մէհմէտը նոյն կեղտոտ մարդն է, որ երէկ կեղտոտ ֆէս մուսնէր զլիսին, իսկ հիմա հրեայի ծախած ճեղքած զլիարկի տակ ծածկւած է: Բնական է, որ զլիարկը չէ, որ պիտի զաղաքակրթէ, ուժեղացնէ. կամ Թուրքացնէ Թիւրքը, բայց մինջ ալ պէտք չունինք կարծելու, որ տեղի ունեցած բոլոր յեղաշրջումները զլիարկի օրինակի պարզին կը պատահին: Թէև, տեղն է հոս ըսելու, որ եւրոպական զլիարկի տակ դարերով ապրող բազմամիլիոն եւրոպացիներ կան, որոնք իրենց գիւղերու, բանտրական թաղերու և յետ ընկած անկիւններու մէջ նոյն ողբալի տղիտութեան ու արտոտութեան մէջ կապրին, ինչ որ կը տեսնենք եօղւարտէի Մէհմէտի քով:

Բազմակնութեան խնդիրը նոյնպէս, կարելի է ըսել պատրաստի դետին մ'ունէր իր լուծումը գտնելու: Տնտեսական ու զաղաքական կեանքի, թէև դանդաղ, բայց աստիճանական փոփոխութիւններու հետեւանքով բազմակնութիւնը ծանր բեռ մը դարձած էր Թիւրք ժողովրդի համար: Վերջին քանս տարւայ ընթացքին հատ ու կտոր վիճակագրական տեղեկութիւնները ցոյց կուտային, որ Պոլսոյ և ծովազերեայ շարք մը զլիաւոր կեդրոններու մէջ, բազմաթիւ կիսնոր փոխարէն մէկ կամ առ առակէն երկու կին պահելու հարկադրւած էին: Գիւղական շրջանները, աճող պահանջներու բերումով, ստիպւած էին մէկ կիտով բուսականանալ, նկատի ունենալով, որ աւելցած աշխատաւոր ձեռքի շահը՝ անոր վրա ըլլալիք ծախքը հազու կը գոցեր:

Այսպէս, ինչպէս կը տեսնենք, շարք մը մեծ ու փոքր յեղաշրջումները իրենց նախապատրաստական անցեալն ունեն, և Թիւրքիոյ ներխալ պայմաններու մէջ իրականանալիք բարենորոգումներ են: Ի հարկէ, անմիջական հրաշքեր տեղի չեն կարող ունենալ: Այդ փոփոխութիւնները երկար տարիներով պիտի ձևափոխին ու յարմարեն Թիւրքին և Թիւրքիային, որոնք իրենց կարգին պիտի ազդելն տեղի ունեցած փոփոխութիւններէն և պիտի ընտելանան այդ նոր կեանքին: Չարմանալի պիտի ըլլար, եթէ երէկնք ու այսօր Թիւրքական հանրապետութիւնը բաղդատկինք անդլիական թազւարութեան հետ: Բնական է զեմարական բունակալութիւնը շատ ծիծաղելի պիտի թւէր նման բաղդատութեան մը պարագային. բայց մէթէ նոյն արդիւնքը չպիտի ստանայինք, եթէ յունական և լեհական հանրապետութիւնները բաղդատէիք Զւիցն-

րիոյ և Անգլիոյ հետ:*)

Աւելի հիմնական երևոյթ է լատինական տառերու որդեգրումը և այն անտեսական ուղին, ուր մտած է ներկայ Թիւրքիան: Առաջինը ունի մշակութային և զաղաքական մեծ նշանակութիւն և կը պահանջէ մասաւոր լարւած ձեռք և երկար տարիներու աշխատանք, բարեբար արդիւնք մը ստանալու համար, իսկ երկրորդը կը պահանջէ, որ Թիւրք ազգը ամբողջութեամբ լծի շինարար աշխատանքի մը, ինքզինքը պահելու, և բունելու բոլոր այն աշխատաւոր ժողովուրդներու տեղը, որոնք դուրս քլեցեցան երկրէն կամ կոտորեցան:

Որքան ալ մեծ բարիք մը նկատի լատինական տառերու գործածութիւնը, ան կոչւած է մեծ դժուարութիւններու բախելու: Այդ փոփոխութիւնը միայն տառերու փոփոխութիւն մը չէ, այլ, իրօք, Թիւրքերէն նոր լեզու կը կերտուան է, որ կը ձեռնարկէ Մ. Գեմալը: Թիւրքերէն լեզուն ստիպւած է ազատել արաբերէնէ և պարսկերէնէ (ի հարկէ, այն չափով, որ կարելի է) և կեանքի կոշիկ Թիւրքերէն ժողովրդական ու սահմանափակ լեզուն: Այդ կը նշանակէ, առնպէս մէկ քառորդ դար աղքատիկ լեզու մը ունենալ զրկելի այն նրբութիւնէն, որ ունէր Թիւրքերէն լեզուն շնորհիւ արաբերէնի և պարսկերէնի, ու հետևաբար աղքատիկ դրականութիւն մը, ժամանակակից սերունդի կողմէ՝ արտադրւած: Այլ մտահոգութիւն մըն է նաև այն ծանր խնդիրը, որ պիտի գցուի Թիւրքիոյ մտաւորական զեկամարներու առջև, — լատինական տառերով վերականգնանքնելու Թիւրք մտաւոր ամբողջ անցեալի հարստութիւնները:

Թիւրք պետութիւնը, հիմա, բացի զինուորական կաստայէն և պետական պաշտօնէութեան խոշոր բանակէն, ստիպւած է երկրի կարիքներուն հասցնել բանտրական և արհեստակցական բանակներ, աշխատաւոր գիւղացիութիւն, աւետարականներ ու միջնորդներ, մէկ խօսքով, փայլուն տիրապետողներէն դատ, լծկան եզներ, որոնք երկար տարիներու աշխատանքով միայն պիտի կրնան ինքնապահ դառնալ:

Թիւրք ազգը, որպէս մշակութային, տնտեսական և պետական ազգ, խիստ պակասաւոր եղած է երկար տարիներու ընթացքին: Թիւրք ազգի արտապայտութիւնը կը տեսնենք միայն զինուորական տիրապետութեամբ մը, բայց որպէս հաւաքական ու կաղապարւած ազգ նոր է, որ հրապարակ կուզայ, նոր է կը կազմակերպուի իր ազգային հայրենիքի մէջ, նոր կը ձեռնարկէ անտեսական և մշակութային հիմնական աշխատանքի: Ու այդ զննութիւններէն կախած է թէ վերածնունդ Թիւրքիան ի՞նչ կերպարանք պիտի ստանայ ապագային: Թիւրքիա, առնապիս կէս դարու մնայուն ու տեական աշխատանքի պէտք ունի, որպէս ազգ, ու որպէս կազմակերպւած պետութիւն ոտքի կանգնելու համար:

* * *

Կուժեղանա՞յ, թէ կը տկարանայ Թիւրքիա, տեղի

*) Անշուշտ, մեր խօսքը դիկտատորութեան մասին է, որի նակատաքիթը ամէն տեղ ալ նոյնն է: A.R.A.R.©

ունեցող յեղաշրջումներու հետևանքով: Կարելի է ըսել և՛ կուժեղանայ, և՛ կը տկարանայ: Շարք մը երևութիւնք, որոնք Թիւրքոյ ուժեղացումը կը ցուցադրեն, բաւական ժամանակ անցին յետոյ, տկարութեան պիտի վերածին, և, ընդհակառակը, շատ մը ձեռնարկներ, որոնք իրենց սկզբնական շրջանին կը տկարացնեն Թիւրքիան, քանի մը տասնեակ տարիներ անցնելէ յետոյ՝ անոր ուժեղացման հիմնաքարերը պիտի դառնան: Օրինակ, այսօր Թիւրքիան խիստ ուժեղ դիրք ունի որպէս զինուորական պետութիւն մը. ան յաղթած է Հայաստանին, Յունաստանին, վերադարձած է Թրակիան, Կիլիկիան և Ատալիան: Ոչ միայն ջարդած ու դուրս վճռուած է հայերն ու յոյներն, որպէս քրիստոնէայ տարր և կազմակերպւած ազգութիւններ, այլ նաև ճգմած է չերթեզները, լազերը, մնացորդ արարները և քրտերը, որոնք մասնատանէն էին և մեծ մասով՝ գործակից Թիւրքին: Թիւրքիան 1912-ի բաղկանեան պատերազմէն սաղին, պատերազմական դուրսթեան մէջ է. զէնքը ձեռքին, լարած՝ կամ ջարդ ու աւերմունք կը գործէ, կամ ինչոյնքը կը պաշտպանէ: Հակառակ այն իրողութեան, որ զինադադրէն սաղին, տարր տարի անցած է, և բարաբաժու պետութիւններ քանք կը թափեն խաղաղ աշխատանքի լծել, Թիւրքիա պահակի պէս կեցած է. հազիւ արտաքին վտանգներէ ազատած, ներքին շատող պայտամբութիւններուն ստիպւած է կուրք տալ: Այս լարած կեցածներէ մէջ, մանաւանդ, որ յաղթանակներն ալ եկան մոռցնելի տարու ահուելի պարտութիւնները, իր կոտորելը և երկրամասերու կորուստները, Թիւրքիա յոթորսանքով կը ցցի պատմութեան բեմի վրա և իր ուժը կը գերազանահատէ. մինչդեռ անխուսափելի է տկարացումը, որ պիտի յաղորդէ այդ լարած յոգնութեան: Ու երբ Թիւրքիա հանդարտի ինք իր տեղը և դառնէ իր բնականոն վիճակը, այսօրուայ երեցած ոյժը տասը անգամ պիտի կոտորակէ:

Լքելով գոյջերու դրուածքը, պատերազմի ընթացքին և յետոյ եղած կողպուսուները — այս ժամանակաւոր հարստութիւնը, կերպով մը կուժեղացնէր Թիւրք պետութիւնն ու ժողովուրդը: Անցած 15 խառնակ տարիներու ընթացքին Թիւրքը զեղկավոր տարրը և ժողովուրդի մեծ մասը կըրցու ապրել պատրաստի աւարով ստանց մեծ մտահոգութիւններու. բայց այդ հարստութիւնը սպառած կարելի է համարել: Հիմա հերթը աշխատանքին է, որու ընթացքին այսօրուայ ու վաղուայ սերունդը թշուառութիւնն իր աչքերով պիտի տեսնէ և տառապի աշխատանքի ծանրութիւնէն, մինչև որ յաջողակեան սերունդները վարժեն աշխատանքի և առանց կողպուտի ապրելու առաքինութեան:

Թիւրքիան զրկելով ոչ-Թիւրք տարրերէն, բնական է, որ առաջին կէս դարու ընթացքին պիտի տկարանայ. բայց կասկած չգուրս է, որ այդ իրողութիւնը պիտի մղէ Թիւրք ազգը դառնալու աշխատանքի ժողովուրդ մը, յարմարելու կեանքի նոր պայմաններուն, և թէ, ի հարկէ, նոր փութորիկներ չզան փոխելու կեանքի ներկայ ընթացքը:

Լատինական տարեքո գործածութիւնը պիտի տկարացնէ Թիւրք գրականութիւնը, կրթութիւնը ժամանակ մը պիտի կաղայ և հոգեկան որոշ թեկում պիտի առաջացնէ Թիւրք մտաւոր կեանքին մէջ. բայց այս

տկարութիւնը կըլլայ ժամանակաւոր: Յաջորդ սերունդները պիտի կրնան օգտուիլ լատինական տարեքո և Թիւրք նոր ու կուժեղ լեզէն, մշակութային յառաջընթացական ճանապարհի մէջ մտնելու համար:

Հանրապետութեան հռչակումը (սուլթանութեան և խալիֆայութեան վերացումով) կրճատներու ու կրճատական հաստատութիւններու ստորագնահաստումը. նոր օրէնքներու իւրացումն ու տարագնելու փոփոխութիւնները Թիւրք ազգը կը զօրացնեն և գայն կը կապեն Թիւրք հայրենիքի մը հետ, դայն կը դնեն Թիւրք քաղաքակրթութիւն մը ստեղծելու ճամբու մէջ, սակայն, միւս կողմէ, Թիւրքիան կը տկարացնեն զինուորական տեսակէտներով: Թիւրք ազգը յաղթական ու ընդհարուող բանակ մ'ըլլալէ կը դադրի: Սուլթանի և խալիֆայի ու Մէհմետի փոխարէն կը կապի Թիւրք ցեղին ու իր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ իր հայրենիքի սահմաններէն ներս: Հայրենիքի զաղափարը կարող է ուժեղ հաւաքակենտրոնութիւն մը ստեղծել և մղել Թիւրքը գերագոյն գոհոգութիւններու՝ իր Անատոլուն պաշտպանելու համար, բայց այլևս յանուն խալիֆայի ու սուլթանի, ճակատադրապաշտ համակերպումով մը, Թիւրք բանակները Բալկանները, Եղիպտոսն ու Հիւսայի, Պաղտատն ու Պարսն դարսելու և տիրապետելու չպիտի կրնան մղել: Անհայրենիք զինուորական ցեղ մը միայն կարող էր այդ ընդարձակ հողերուն տիրել և առանց թեական ուժի, ստրկացնել ընդճամ ցեղերը: Պատմութեան հարաւանդու տակ, այդ զինուորական ցեղը ետ նահանջած է դէպի իր օրրանը: Ինչ կձկեւոյ՞ կուրէ ազգ-պետութիւն դառնալ և կապել իր հայրենիքին հետ: Այդպիսով ան ներքնապէս կուժեղանայ, բայց արտաքին մեծ վտանգ ըլլալէ կը դադրի: Թիւրքիա, որպէս զինուորական պետութիւն, քանի երթայ, անկում պիտի ապրի, ու այդ բարիք մըն է թէ իրեն և թէ իր զբայներուն համար:

Գաղաքակրթութեան և նորութիւններու հովերը անդիմադրելի լիքներ պիտի դառնան ու գանաջան ուղղութիւններով պիտի ցրեն Թիւրք ազգի սեւեռուն մտածումները: Այսօր համաթրքութեան դաժան ծրագիրն ու նորութեանց հովերը նոյն ուղեղներէն կը բխին, բայց կեանքի թոճ ու բռնի մէջ գործնական քայլերը (աւելի զգարելն) նորութիւններուն տեղի պիտի տան:

Բացի Հայաստանի և Քիւրտիստանի անջատումէն, ինչ որ պատմական անհրաժեշտութիւն մըն է և ազգային-քաղաքական կեանքի բնական աղբիւրք, Թիւրքիա իր մտացած մասերուն մէջ կարող է դառնալ ապրող երկիր մը ազգային դիմագծով: Թիւրքիան պէտք է մեզի պատկերասնայ որպէս արեւմտեան Անատոլուն՝ ուղիղ դիմ մը քաշելով Պոնտոսէն մինչև Իսթանբուլուն: Արեւելք մտացած հողամասերը, ուշ կամ կանուխ, անխուսափելիօրէն, հայերու և քրտերու հայրենիքը պիտի դառնան: Այս սահմանափակումներով իսկ խիստ ընդարձակ և բնտիր երկիր մը կը մնայ Թիւրքերու ձեռքը:

Անուրանալի է, որ Թիւրք ազգը զուրկ չէ խոշոր մտաւորականութենէ մը, որ առաջացած է ընդարձակ կայսրութիւն մը պահպանելու մտահոգութենէն: Թիւրքիա ստիպւած էր հասցնել մեծ թւով զինուորականներ, պետական պաշտօնեաներ և ղեկավար մտա-

տրականներ, որոնք բացի թիւրք ազգէն պարտաւոր էին տիրելու և վարելու նաև Արարբան, Բալիանները, Եգիպտոսը, Քիւրտիստանն ու Հայաստանը: Պատմութեան արագ վերիվարումներու բերումով այսօր այդ ղեկավար տարրը կեդրոնացած է ներկայ Թիւրքիոյ սահմաններու մէջ և հարկադրուած է իր ուժերը սպառել միայն այդ սահմաններու վրա: Սակայն, այդ մտաւորականութենէն ետէ կարելի է սպասել, որ կարող է ուժեղ պետութիւն և զինուորականութիւն կերտել, նոյն բանը չենք կարող ըսել քաղաքակրթութեան մշակոյթի մասին: Քանի մը սերունդներ պէտք է փոխեն, արևուտուտ բարբեր ունեցող սերունդներն ու իրենց դաստիարակածները պէտք է մեռնին-անհետանան և արիւնի փորձակական կենսոք պէտք է դադրի, որպէսզի կարելի ըլլայ քաղաքակրթութեան արմատական իւրացումը: Ներկայ Թիւրքիոյ աստիճանական դարձացումը այդ ճանապարհով պէտք է ընթանայ, որպէսզի Թիւրքերը դադարին ջարդարար ու քաղաքակրթութեան թշնամի ազգ մ'ըլլալէ:

Իր կայսերական և Համախլամական մեծ առաջատաները ամփոփելէ յետոյ, Թիւրքիա աւելի ջերմօրէն կառչած կը մնայ Համաթիւրքական առաջատան, խիստ դժուար ու վտանգաւոր իրեն համար, դաժման ու մահացու՝ Հային ու քիւրտին հանդէպ: Այս ձգտումը նախորդ և ներկայ սերունդներու զգլխիչ Հիւանդութիւնն է, նոր կայսերապաշտութիւն մը, որ ետէ նոյն իսկ կարողանայ քնափնջել քիւրտն ու հայը, ընդհանուր պատմութեան անկենդան առջև պիտի խորտակուի: Եւ որքան շուտ ոտքի կանգնեն Հայաստանն ու Քիւրտիստանը, այնքան շուտ Թիւրքերը պիտի հաշտուին քաղաքակրթութեան ճանապարհին:

* * *

Թիւրքիոյ ներքին կեանքը մեզ կը շահագրգռէ գերազանցապէս այն պատճառով, որ մեր ժողովրդի ամբողջական ազատագրութիւնը ուղղուած է Թիւրքական բռնակալ ու արիւնիտմ սուրին դէմ: Թիւրքական նոր կեանքի և ապագայի վերածնունդի պատկերը ընդգծելով՝ կր տեսնենք, որ, ժամանակի ու նոր դաստաւորութեան բերումով, Հայ ժողովուրդն ալ պարտաւոր է շարժուիլ, կազմակերպուել, ոյժ ամբարել, վարժեցնել և՛ իր գլուխը, և՛ իր բազուկը վճռական դեր կատարելու, երբ դիւրեւր այսքան ճշտուած են: Այս մասի շատ խուսումն ու պիտի խուսի՝ այս յօդուածը մտի խնդրին չէ նւիրած: Սակայն, կարժէ քանի մը խօսք ընել այն մասին, թէ Թիւրքերն իրենց նոր կեանքով աւելի վնասակար չեն՞ դառնար միզ Համար:

Թիւրքը ազդի կեդրոնացումն ու վերակազմութիւնը աւելի վտանգաւոր ու վնասակար կը դարձնէ Հայ ժողովրդի դարաւոր թշնամին, բայց ոչ երբեք աւելի ուժեղ: Վտանգաւոր և վնասակար, այն պատճառով, որ Թիւրքերը իրենց ուշադրութիւնը լարելով դէպի Թաթարական Նոզամարի՝ իրենց կրօնակներու տակ կառնեն Հայաստանն ու Քիւրտիստանը: Վնասակար այն տեսակէտով, որ Թիւրքերը Հիժա մի անգամ ընդ միշտ հրաժարուած են Արաբիայէն, Սուրիայէն, Իրաքէն և Բալկանեան փոթորիկոտ Նոզամարներէն, ու հետևաբար՝ իրենց ոյժն ու Նոզամարութիւնը պիտի կեդրոնացնեն Հայերու և քիւրտներու վրա: Այստեղ

փակագծի մէջ ըսենք, որ եթէ քիւրտերն ալ վերջնանս Թիւրքական ներկայ ղեկավար սերունդները, արեանն ու կուր ծարաւ, իրարու դէմ սուր պիտի բարձրացնեն մինչև որ ժամանակը դայ և այդ կիւրքերը Հանդարտեցնէ: Մինչ այդ, մենք վնասակար ու անհանդարտ թշնամի մը պիտի ունենանք մեզի դրացի և մեր հայրենիքի մեծ մասին տիրապետող, որ կը մզէ մ'ոչ աւելի քան լարած մնալ մեր ազատագրութեան ուղիին մէջ:

Թիւրքը, որպէս վտանգաւոր ու վնասակար թշնամի, սակայն, աւելի ուժեղ ու յաղթական զպիտի ներկայանայ այս դաժման կուր բեմի վրա, քան նախորդ շրջաններուն ան կրցած ներկայանալ: Որովհետև Թիւրքիա անցնելու մէջ ոչ միայն իր ուժերը գործածեց Հայերու՝ դէմ, այլ իրեն օժանդակութեան համար կանչեց քիւրտերը, չիւրքերը և ուրիշ իսլամ ցեղերը Հայքցներու քրիստոնէայ տարբերը: Այսօր, Հայաստանի և հայ ցեղին դէմ Թիւրքը մինակ է և զրկւած վեր յիշուած սուր գործիքներէն: Անցեալի մէջ Թիւրքերը և իրենց գործակից միւս անգիտակից ազգերը զինուած էին, իսկ հայը ստորուկ ու կատարելապէս անզէն, զէնք գործածելու անվարժ, բացի փոքրաթիւ սանատներէն: Այսօր հայը Թիւրքի սուրին կենթակայ չէ, կիսովին իր հայրենիքի մէջ է կամ անոր սահմաններուն մօտիկ: Հայը այսօր աւելի զինուած է և զէնք գործածել գիտէ, իր ազատութիւնն ու անկախութիւնը կը պնդէ, ու կը սիրէ աւելի, քան 15 տարի առաջ, երբ մեր թշնամին այնքան ուժեղ էր: Երկէ մենք հայերս միւս մենակ էինք մեզ բղկտող զիշատիչներու ծովին մէջ, ու կը հալէինք, այսօր, սակայն, Թիւրքին դէմ ուղղուած են քիւրտերու, գիւրքերու, արաբներու և այլոց սուրբը, յանուն իրենց ազատութեան, ու հետևաբար, այսօրուս պայքարին, Թիւրքիոյ ներքին կեանքի մէջ, Թիւրքին դէմ գործող սուրբը մեր բնական դաշնակիցներն են:

Հայկական հաւաքակառուցութիւնը (երկիրն ու գաղութները միասին առած), հակառակ իր ներկայ անբարդաւիլի փուլին, աւելի մեծ ոյժ է Թիւրքիոյ համար, քան այն ատեն, երբ այդ հաւաքակառուցութիւնը (անզէն բարձրութիւն մը) անոր մակախին տակ կը գտնէր: Բնական է, այդ չի նշանակէր, որ մենք մեր կեցած տեղը պէտք է կենանք: Մեր կեանքն ալ պիտի շարժի, ուժերը խտանան, զէնքերը շատան, քաղաքակրթութեան ու ուժի համարութիւնը հասակ նետէ: Մենք դանդաղ, բայց աստիճանական կերպով այդ փուլի մէջ մտած ենք: Նոյն ճանապարհի մէջ կը մտնեն քիւրտերը, չիւրքերը, պարսիկներն ու արաբական երկիրները: Թիւրքիան, այդպիսով, Մերձաւոր Արևելքի այս կրկէսին մէջ, բոլորովին ազատ ու գգեստող ցուլ մը չի ներկայանար:

Մեզմէ շատ հզօր մեր թշնամին կը կազմակերպուի Ան որքան ալ ներքնապէս քաղաքակրթի ու բուն մշակութային վերածնունդի ճամբան, իր անցեալ և ներկայ մտայնութեամբ կը մնայ մեզի համար վտանգաւոր ազգ մը, որուն գուգահեռ և՛ Հայերը և՛ միւս վտանգուած փոքր ազգերը պէտք է պատրաստեն, անընդհատ առաջ ընթանան անողոք կուր բեմի վրա, մինչև որ տէր դառնան իրենց բնական իրաւունքներուն:

Կ. ՄԱՍՈՒՆԻ

ԺԱՄԱՆԱԿԸ ԼԱԻԱԳՈՅՆ ԴԱՏԱԻՈՐՆ Է

Բուլլեիկների կողմից Հ. Յ. Դաշնակցութեան դէմ ուղող պաշարի միջոցներէն մէկն էլ Երևանում տեղի ունեցած նահախին դաշնակցականների համահայաստանեան համագումարն էր: 1923թ. նոյեմբեր 20-ին, «չորս հազար շարքային դաշնակցականների կողմից ընտրւած 250 պատգամաւորները» եկան յայտարարելու, թէ վերջնականապէս խզելով իրենց կապերը Դաշնակցութիւնից՝ այսուհետև ընթացաւոր են հռչակուած Երևանում ուղիով: Այդ ողով չէ հեռագիրներ ուղարկեցին համագումարի պատուաւոր նախագահներ՝ Լենինին, Ջինովիկին և Տրոյսկիին:

Իրօք որ, Դաշնակցութեանն ինքնաջախջախման ենթարկելու յարմարագոյն եղանակն էր ընտրւած: Հայաստանի անկախութեան անկումից յետոյ, Լոզանի դաշնագիրը երկրորդ հարածն էր Հայ Դատին և նրա պաշտպան Հ. Յ. Դաշնակցութեան: Լոզանից յետոյ, հայկական զանգուածների և կուսակցական շարքերի մէջ նկատելի էր որոշ վճատում և տատանում: Յուսախարութիւնը մեծ էր և դրութիւնը ծանր: Այդ դաշնագիրը հակառակորդների ձեռքում դարձաւ մի նոր գէջը մեզ հարածելու համար: Մահաւանդ, որ մեր միջոց էլ ձայն բարձրացրին Բաղրիստեանի նման յուսահատուածներ: Ետտեղի կարծիքն էր, որ Դաշնակցութիւնը չի դիմանայ արտաքին ու ներքին հարածներին և կը քայքայուի:

Վիեննայի խորհրդատոյով էր որոշուեցնում հաստատեց, որ վաղամամ է դատավճիռներ արձակելը և թէ մեր թշնամիները շատ են սխալում իրենց հաշիւների մէջ: Վիեննայում Դաշնակցութիւնը անյողողով վճռականութեամբ յայտարարեց, թէ այսուհետև էլ իր գործունէութեան և ձգտումների հիմը ընդունում է Բրաչեալ և Անկախ Հայաստանի պահանջի հետապնդումը և բնաւ մտադիր չէ հրաժարել պայքարից:

Լոզանին դուզելով, երկրի ներսում էլ գրութիւնը մխիթարական չէր: Պատուակ բռնելով Ջեմալ փաշայի ահաբեկումը, չկարող ծաղրահեղ հայածանքներ էր սկսել, և 7-800 դաշնակցականներ լեցւել էին Երևանի ու Մետեխի բանտերը: Կազմակերպութիւններ էր թուլացումը մէկ կողմից, Լոզանի արդիւնքները միւս կողմից լուրջ վտանգներ էին երկրի Դաշնակցութեան համար: Դրութիւնն աւելի ծանրացաւ, երբ հրապարակեց Վրաստանի կենտրոնի ղեկավարացիան: Բացի այդ, էթէ Վիեննայի խորհրդատոյով որոշուեցնելու ուրիշների աչքում քաղաքական ու յեղափոխական նշանակութիւն ունէին, երկրում աշխատողների համար նրանք անբարւարար էին. բանածեկ բուլլեիկներին վերաբերող «լոյսել ընդդիմադիրի» կէտը բնաւ չէր համապատասխանում այն ժամանակայ տրամադրութիւններին և նման դիրքը համարում էր Դաշնակցութեան յեղափոխական կոչումի նուստացում: Երկրի գրութիւնն ու պայմանները և բուլլեիկների վերաբերմունքը առաջանում էին պայքարի աւելի գործուն ընթացում: Այնպէս որ, չնայած Վիեննայի խոր

հրդատոյով պատմական մեծ արժէքին, հինգ տարի առաջ, նրա լոյսութիւնը, երկրում աշխատողների համար մի նոր հարած էր:

Նման պայմաններում, բնականաբար, «չորս հազար» դաշնակցականների Դաշնակցութիւնից հեռանալն ու 250 պատգամաւորների ժողովը պէտք է, որ որոշ երկիւղ առաջանէր նաև երկրի գործիչների մէջ: Սակայն, շուտով պարզեց, որ նոյնիսկ մոլի կուսակցականների համար էլ զարկուէք էր մնացել Դաշնակցութեան ուժի և հմայքի շարքը:

Համագումարում եղած պաշտօնական զեկուցանողի և միւս արտապաշտողների մտքերն է մի ամփոփելով, կը ստացի հետևեալ մեղադրականը: — Հ. Յ. Դաշնակցութիւնը ծնունդ է կովկասահայ մանր բուրժուազիայի անտեսական և քաղաքական սպասելիքների: Իր գործունէութեան սկզբնական շրջանում Դաշնակցութիւնը պայքարելով տաճկահայերի ազատագրութեան համար՝ մեկուսացրել է Տաճկաստանի աշխատաւորութիւնը ընդհանուր յեղափոխական ճակատից: Դաշնակցութիւնը նոյնպէս խուսափել է «Տաճկաստանի համապետական միջնադաշին յեղափոխական պայքարի ուղիներից»՝ յոյսը դնելով օտար պետութիւնների վրա: Ինքնապաշտպանութեան և կամաւորական խմբերի կազմակերպութեամբ, Դաշնակցութիւնը կովկասահայ աշխատաւորութեանը մղել է դէպի իմպերիալիստական պատերազմ և տաճկահայերին էլ նետուի ջարդերի երախը:

Տաճկահայ դատ կուլած ոտմանտիզմով, Դաշնակցութիւնը մթադնել է կովկասահայ բանւորների և գիւղացիների դասակարգային գիտակցութիւնը և արգելք հանդիսացել ցարիզմի դէմ յեղափոխական կռիւ մղելուն: Եթէ ուսական ստալին յեղափոխութիւնից յետոյ, Դաշնակցութիւնը, ուսանահայերի մէջ ևս սկսելով աշխատանք, գործել է ընկերակարգական նշանաբանների տակ, դրա միակ նպատակը եղել է իր ազդեցութեան տակ պահել նաև հայութեան այդ հատածը: Ընկերակարգական դիմադրի տակ Դաշնակցութիւնը ծառայել է հայ բուրժուազիայի նպատակներին և գտառի հայ բանւորի շահը թիւրք և ուս աշխատաւորի շահից: Ազգային ատելութիւն յարուցանելով՝ Դաշնակցութիւնը անընդհատ պարծառ է եղել ազգամիջեան կռիւների:

Բուլլեիկեան հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ Դաշնակցութիւնը միանալով մուսաւաթականներին ու վրաց մենշեիկների հետ, ընդհանուր ճակատ է կազմել խորհրդային իշխանութեան դէմ: Իսկ անկախութեան ստեղծելով՝ Դաշնակցութիւնը գործիք է դարձել իմպերիալիստների ձեռքին, որոնք աշխատել են օգտագործել Հայաստանի Հանրապետութիւնը ընդդէմ Խուսաւանի և յեղափոխական Թուրքիայի: Այժմ էլ, արտասահմանում Դաշնակցութիւնը դաշն կապելով

կողմասանն և համաշխարհային Ֆրանկոֆիլ հետ, դաւեր է լարում Խորհրդային Հայաստանի դէմ: Այն ինչ, հոկտեմբերեան յեղափոխութեան բարիքներէից ամենից նոր Հայաստանի բունտորն ու դիւտացիին են օգուել և կրնք շարքային դաշնակցական իրեն իբր քաղաքացի աւելի լաւ չի գրացել, քան այժմ:

Ուստի, պէտք է վճառական կերպով արդելել արտասահմանեան բարձրագոյն մարմիններին հրապարակ գալ իրենց անունից և անվաւեր համարել Աշխատաւորական Ինտերնացիոնալի աշխատանքներին մասնակցելու համար տրւած լիազօրութիւնը:

Հետաքրքրական է, որ գլխաւոր գեկուցանողը Դաշնակցութեան 33 տարւայ գործունէութեան մէջ դրական ոչ մի բան չի գտնում: Եւ երբ այդ առթիւ հիտողութիւն է արւում, անպատկառօք պատասխանում է, թէ՛ «գիտական» վերլուծումը իրեն այդ եզրակացութեան է բերել:

Այժմ տեսնենք, թէ՛ այդ «գիտական» դատախազներին ինչ պատասխան էր տրւում համագումարին մասնակցող շարքային դաշնակցականների կողմից: Դաշնակցութիւնը պաշտպանողներ խնդրին ծօտեանում են ոչ թէ «գիտական վերլուծումով», այլ իրենց տեսած ու հասկացած պարզ ձևերով:

«Պատմութեան օրեկուր, անողորք պահանջով առաջ է եկել հայկական հարցը: Ինչպէս միւս բոլոր ժողովուրդները իրենց ծոցից հանել են կուսակցութիւնները՝ իրենց անկախութեան համար կուսելու, այնպէս էլ հայութիւնն է իր ծոցից տւել Դաշնակցութիւնը»:

«Դաշնակցութիւնը կազմակերպել է հայ աշխատաւոր մասսային, որպէս մի ազգութիւն, որը արեւի տակ ապրելու տանելի վիճակ ստեղծել է ձգտի դէպի կուլտուրա: Այս է պահանջը՝ հին սերունդը: Մեր միջնակցում տիրում էր մի սոսկալի բեծով: Ընկերներ, չգիտած ինչու Արզում Համալի գործը վերաբերելին Դաշնակցութեան: Դաշնակցութիւնը ձգտել է այդ բեծիմից ազատել հայ ժողովրդին և որոշ գործ կատարել է (ծափեր): Սխալ է ժխտել, թէ նա ոչ մէկ աշխատաւորական գործ չի կատարել: Սխալ է, որովհետեւ գիւղացիք Դաշնակցութեանը ճանաչում են հողային և այլ հարցերով»:

«Ամբողջ հայկական միտքը, հայ առաջադիմական գործը մօտ անցնալում Դաշնակցութեան ղեկավարութեանը է եղել: Դաշնակցութիւնը՝ իրականում լիքնաբեր գործ է կատարել հայ ինքնիք կուսակցական անպարտաւորութեամբ»:

«Այնպէս է՝ յայտարարել, որ Դաշնակցութիւնը Բանդուտի դասակարգային շնորհիմնով չի գրաւել: Նա՝ հակային կերպ է կատարել այդ ուղղութեամբ Բանաստեղծութեան»:

«Դաշնակցութեանը համարում են, որ Պարսկաստանի շարժումը յեղափոխական շարժում էր, և այդ Դաշնակցութեան անցեալի պարծանքներից լաւագոյնն է: Եթէ 30 տարւայ գործունէութեան ընթացքում այլ թաւաճումներ ենք ունենցել և յանցապարտ ենք, ապա թող այդ տակ տակ, որ Արեւելքի մեր հարեան մի շարք յետամնաց արդերի մէջ յեղափոխական շարժումներ ենք առաջացրել (եյրկալարտու ծափեր, «բրաւօ»):

«Ձանգիրասարի մաքրումը մի արդարացի գործ էր: Չնայած ևս եղել եմ սոցիալիստ դաշնակցական,

բայց պարտքս եմ համարել առաջին հերթին օգնութեան դնալ կոտորուող տանկահայութեան (ծափեր): Դաշնակցութեան դրօշի տակ աւելի բանտարական միութիւններ կային, քան միւս կուսակցութիւնների մօտ: Ես չեմ պղղում, որ պատկանել եմ այդ կուսակցութեան»:

«Ազգամիջեան կոիւնքի պատճառը թուրք բեկերն ու հայ բուրժուաններն են եղել և ոչ թէ Դաշնակցութիւնը»:

«Դաշնակցութեան զոհերը պարզիւն չեն անցել, որովհետեւ նրանք մաքուր են եղել և մաքուր գործ կատարել: Ծառերը նրանցից ընկել են մահճակալանների կողքին պաշարելիս: 30 տարիների ժամանակամիջոցում, Դաշնակցութիւնը իր դերը կատարել է փայլուն ու փառաւոր կերպով և աշխատանքը պարտաւոր ենք յարգել (ծափեր): Ինչքան էլ որ Դաշնակցութիւնը մեռցնէք, նա չի մեռնի, որովհետեւ նա եղել է գաղափարական և կը մեռնի այն ժամանակ, երբ կը չորանան նրա արմատները»:

«Իմ և մեր շրջանի ընկերների կողմից յայտնում եմ, որ մենք եկել ենք այն եզրակացութեան, թէ Դաշնակցութիւնը եղել է յեղափոխական կուսակցութիւն և նրա մասսան էլ կանգնած է եղել սոցիալիստական հողի վրա (ցիւրծ ծափեր)»:

«Հայաստանի անկախութեան ժամանակ, մենք տեսնում էինք խօսքի և մամուլի ապստոթիւն. բոլոր կուսակցութիւնները լեզալ էին. պարլամենտում կային էպիդեմիա և կոմունիստներ, որոնք ազատ վիճում էին: Իսկ յետոյ յեղափոխութիւն եղաւ, բայց ես նրա հետեւանքները չեմ տեսնում և չեմ գգում»:

«Եթէ Դաշնակցութիւնը յանցաւոր է, մենք ևս յանցաւոր ենք: Մարդիկ կան, որոնք ստում են, թէ 1904 թւից զգուցել են Դաշնակցութիւնից, բայց նրանք թողնում են Դաշնակցութիւնը միայն 1923 թւին: Ես այն կարծիքին եմ եղել, որ կատարել եմ մաքուր գործ, որ ես բուրժուանգիւյի համար չեմ աշխատել: Տանկահայ դատ անելով՝ մենք հակացել ենք յոյնպէս այնտեղի աշխատաւոր հայութեան, առեւտրած կանանց ու աղջիկների դատը և ոչ հարուստների: Ամենից շատ քննադատողները նրանք են՝ ովքեր միայն արատաւոր էլ են և մեք բերել Դաշնակցութեան դրա»:

«Դաշնակցութեան գործունէութիւնը եղել է չովին և կործանարար: Ասում են թէ արդեւ չէ գրաւել սոցալիստական յեղափոխութեամբ: Դա՛ միայնգամայն սխալ է, որովհետեւ նա ոտնատակ է տւել բանտարութեան շահերը և կեղծել... (սպառնալիք բացական ընդհանր, «սլոսլ է», ճանկատարայտնաւոր յայտարարութիւններ են», «խօսքը յետ վերցնել... ճառախօսը չի կարողանում շարունակել և հետանում է ամբողջից)»:

Պէտք է նկատի ունենալ, որ այս բոլոր խօսքերը ասւում են բարձրաստիճան կոմունիստների և չեկայի ներկայացուցիչների աչքի առջև:

Ճիշտ է, որպէս կուսակցականներ, մենք միշտ էլ մեծ կարծիքի ենք եղել Դաշնակցութեան ուժի և կենսունակութեան մասին: Բայց պէտք է խոստովանել, որ համագումարի արդիւնքները գերազանցեցին ամենամայրահեղ լաւատեսների սպասումներն անգամ: Դաշնակցութեան ինքնաքայքայման համագումարը բարոյական այնպիսի մէկ շառաչուն ապտակ էր Աշտ

Յովհաննիսեաններին, Երզնկեաններին ու Մուսկան-
ներին, որի հետքերը հինգ տարի յետոյ չէ դու երևում
են նրանց երեսներին...

* * *

Համադրուած տեղի ունեցած երևոյթներէր
ամենահատաբարբախտը խորհրդային կառավարու-
թեան ներկայացուցիչներէ իր յիշմանն են: Ի՞նչ է ին-
տուում այդ պարոնները:

Միջազգային կառութեան մասին խօսում է այն
ժամանակաւ «արտաքին» գործոց կոմիտար Մուսկան-
ներ: 1923թ. աշնանը բուլղարիները հարբած էին զերմա-
նական յեղափոխութեան երազներով: Գերմանիայի
խորհրդայնացուած համաձուլում էր օրերի խնդիր-
Շուտով ինքնորոշուին Ռուսաստանը պիտի ունենար
մէկ հոգոր դաշնակից: Գերմանական հարուստ ճարտա-
բարեաստը և որակեալ բանուորութիւնը զարկ պիտի
տար խորհրդային անտեսութեան և այն ժամանակ
աւելի հեշտ կը լինէր տապալել Եւրոպայի զբամառ-
ութիւնը: Երբակացութիւն՝ Հայաստանի աշխատա-
ւորութիւնը ապրում է համաշխարհային յեղափոխու-
թեան նախօրեակին և հաւանական է, որ համազուլու-
մը իր վերջին նիստում առիթ ունենայ ողջունելու
ինքնորոշուին Գերմանիայի Յեղակու (արտոնընտու-
ծափեր, նագուում է «ինտերմասիոնալ»): Այս գրու-
թեան պարզաբանութեանն է յատկացնում Մուսկանը
իր գեղուցման երկու երբորդը:

Անցնելով հայկական իրականութեան, Մուսկանը
ասում է. — Եթէ առաջինը Երևանի նահանգը եղել
է Ռուսաստանի մէկ գաղութ, որտեղից դուրս էր
բերում բամպակ և այլ նիւթեր, այժմ բոլորովին այ:
է դրութիւնը: Ա՞՞ որ ինքնորոշուին Ռուսաստանը իր
անաջին գեղերաներից մէկով ճանաչում է Ֆինլան-
դիայի անկախութիւնը և Հայաստանի ինքնորոշումն
իրաւունքը: Ռուսաստանը բերքը չի ձգտում տիրել
փոքրերին, քանի որ Հայաստանի դաշինքը իր և խոր-
հրդային միւս հանրապետութիւնների հետ բուն չէ և
երբ էլ ուզենայ կարող է դուրս գալ ինքնորոշուին
Միութիւնից: «Հայաստանցած եղէք, որ մեր դաշնակից-
ները մեզ գոռով չեն կապէ»: Բայց Հայաստանն անկախ
ապրել չի կարող: Հայաստանն իր անկախութեան շատ
չնչին մասն է կորցրել: Տարբերութիւնն այն է, որ
Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը վարում է
իր թիկունքում 150 միլիոն ժողովուրդ ունեցող Չին-
րինը: Մոսկուայի պրոլետարիատը Հայաստանի լաւ-
ագոյն բարեկամն է: Ա՞՞՞՞ մէկ է տուել Հայաստանին միլիոն-
ներով ոսկի, տեքստիլ գործարան, հարիւր հազարա-
տար փթեթով ցորեն»: (Հետաքրքիր է իմանալ, պարոն
Մուսկան, ո՞րք են դնացել և շարունակուած են դնալ
Հայաստանի բամբակը՝ մինչև 1926թ., Ամերիկայից
ստացած մթերքը, պահեստների գնէքը, պղինձը,
կարբոնը, պեմզան և այլն. Ա.՝...)

Ինչ վերաբերում է սահմաններին, խորհրդային
իշխանութիւնը մի քանի բողոքներ լուծեց Վրաստանի
և Ալբանիանի հետ եղած վէճերը (բայց ո՞ւմ օգտին.
Ա.՝), 1921թ. հոկտ. 18-ին զաւն կնքեց Թիւրքիայի
հետ՝ Արտերանի և Արաքսը սահման ընդունելով
«մենք հրաժարեցինք Լարսից և Սոււմալուից, որով-
հետև հայ ժողովուրդի շահն էր պահանջում այդ: Այդ-

պիտի պայմաններում մենք չենք կարող մի քանի
դաւաններ գերազանել Թիւրքիայի բարեկամութիւ-
նից»: Այդ դաւանների փոխարէն Հայաստանն ունի
ճահիճներ և դրեր, որոնք շորացնելով և ջրելով՝ հնա-
ուուր կը լինի տասնեակ հազարաւոր գիւղացիներ
կապել հողին: Բացի այդ, Չինրինը Լոզանում յայտ-
նել է, թէ Ռուսաստանը կարող է ընդունել 500,000
հայ դաղթականութիւն. «այդ խոստումը խորհրդային
իշխանութիւնը կիրաւործի»:

Ժողովականներ յայն հարցին, թէ ինչու՞ Ախալ-
քալիլը չեն միացնում Հայաստանին, Մուսկանը
պատասխանում է, թէ՛ «Ախալքալիլի հայ գիւղա-
ցիութիւնը այդ չի պահանջէ»:

Ողջունելով համազուլումը՝ Լուկաչինը իր հերթին
յայտարարում է, թէ՛ «Ճեր պիտուան աշխատանքների
մէջ, չեն սխալի, և թէ՛ ստեմ, որ մենք մեր բախտը
անօրինելում 99 տոկոսով լիովին անկախ ենք ինքնորո-
շույին Միութեան մէջ»:

Իսկ երբ ժողովականներն ուզում են իմանալ, թէ
Քեմալի արշաւանքի ժամանակ բուլղարներն ի՞նչ դեր
են խաղացել, Հայաստանի վարչիները խուսափելով
պատասխանից՝ յայտնում են, թէ՛ «մենք կոմունիստ-
ներս վատ բան չենք արել մեր իշխանութիւնը հաստա-
տելով այս երկրում, թէ՛կուզ կարմիր սրբնների օգնու-
թեամբ»...

* * *

Ասում են՝ ժամանակը լաւագոյն դատաւորն է:
Չնայած մէկ հեղաճեակը շատ կարճ միջոց է եղական-
ցութիւններ անելու համար, բայց տեղի ունեցած
փաստերը արդէն բաւական են ցոյց տալու բուլղարի-
ների քաղաքականութեան ու տեսարանութեան սնանկու-
թիւնը:

Հինգ տարի յետոյ, առանց պարծենալու կարող
ենք յայտարարել, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը մնացել
է անստան և նրա գաղափարական պահանջները գնա-
լով աւելի ու աւելի կենտրոնականութիւն են անում: Ո՛չ
լիեւիզացիներ համազուլումը, ո՛չ դատավարութիւն ու
դատաստութիւն, ո՛չ Հայաստանը ու արտը և ո՛չ գա-
ղափարական արշաւանք կարողացան մագաչափ ան-
գամ խախտել Դաշնակցութեան դիրքը և քայքայել
նրան:

Այսօր բուլղարիներ կողմից ոչ միայն անարժէք ու
անիմաստ է յայտարարում Քաջագունի տեսակէտը,
այլ և հակալենինականների շարքին է դասուում Աշոտ
Յովհաննիսեանը՝ հինգ տարի առաջ՝ Դաշնակցութեան
մասին ունեցած իր անտեսութիւնների համար: Ըստ նոր
տեսարանների, Դաշնակցութիւնը այլևս ոչ թէ՛ մանր
բուրժուազիայի պահանջների ու ձգտումների արտա-
յայտի է, այլ բուրժուազիայի՝ իսկ մանր բուրժուա-
զիան համարում է կոմունիստական կուսակցութեան
հիմք: Լիեւիզացիներ համազուլումը տեսարան Աշոտ
Յովհաննիսեանն իր մեղքերը զատում է Լենինգրադի
մատենագրանի արխիւներում...

Եթէ Դաշնակցութիւնը մեղադրուել է հայ ազատա-
զրական պայքարի համար, ապա 1923 թւից յետոյ
տեղի ունեցած դրուզների, մարդկիների, չինացիների
և քրիւզների ազգային շարժումները և բուլղարիների ցոյց
ուած վերաբերմունքը դէպի այդ ժողովուրդները

ապացուցեցին, որ Դաշնակցութիւնն անցեալ դործունէութեամբ պատմականօրէն կանդնած է եղել ճիշտ տեսակէտի վրա:

Եթէ համազումարը գտնում է, թէ խորհրդային երկրներում ընկերվարական յեղափոխութիւնն իրական փաստ է դարձած մ Զինովիւ-Տրոցկիին ուղղած ողջոյնի հեռագիրներէ մէջ Դաշնակցութիւնը մեղադրում է հակաընկերվարականութեան մէջ, ապա այսօր, այդ նոյն երկու մարդիկն էլ գտնում են զարտափայլերում ճիշտ հէնց ընկերվարութեան ճիշտ փաստ դարձած լինելը ժխտելու համար:

Եթէ 1923թ. Մոսկեանը յանդգնում էր յայտարարել, թէ սահմանային խնդիրները լուծուել են մի քանի վայրկեանում և իրենք թիրաքիայից այլևս պահանջներ չունեն, ապա այսօր, Անդրկովկասեան երեք ազգութիւններէ կոմկուսակցութիւններէ քարտուղարները հրապարակով յայտարարում են, թէ ազգային յարաբերութիւնները այժմ լարած են աւելի քան երբեք, և հայ կոմունիստներին մեղադրում են Ղարսի, Ղարաբաղի, Ախալքալախի և Նախիջևանի շրջանները շայտատանին միացնելու պահանջի մէջ: Եթէ առաջ յայտարարում էին, թէ խորհրդային դրութիւնից ամենից շատ օգուտըր այժեռն են, այսօր «մի շարք պատասխանատու կոմունիստներ» յայտնում են, թէ Անդրկովկասում տիրում է անտեսական անհաւասարութիւն, և տուժողը Հայաստանն է:

Վերջապէս, հինգ տարի յետոյ, ոչ միայն հայ մտաւորականներն ու ժողովրդի այլ խաւերն են մեղադրում, իրրե դաշնակցական մտայնութիւն ունեցողներ, այլ և կոմունիստներից շատ շատերը: Դեռ աւելին. մի քանի ամիս առաջ ազգայնական քաղաքականութեան համար դատապարտուեց հայկոմկուսի այն ղեկավարութիւնը, որը տարիներ շարունակ պայքարել է Դաշնակցութեան դէմ և այդ նպատակով էլ լիկւլիզացիոն աշխատանքներ կազմակերպել (նախկին դեկավարներից մնացել են Երզնկեանն ու Մոսկեանը, որպէս առանձին մի արժէք ու կարևորութիւն շնորհակցնող մարդիկ):

Եթէ համազումարում Մոսկեանը յայտարարում էր, թէ Հայաստանն իր անկախութիւնից ոչինչ չի կորցրել և ուզած րոպէին կարող է դուրս գալ Միութիւնից, երկու տարի յետոյ Միութեանական Գործադիր կոմիտէն հրատարակեց մի նոր օրէնք, որով իրեն

իրաւունք է վերապահում բեկանելու միւս խորհրդ. հանրապետութիւններէ դործադիր մարմինների բոլոր որոշումները: Իսկ Լուկաշինը, որը գտնում էր, թէ Հայաստանն իր պետական ներքին կենտրում 99 տոկոսով անկախ է, և քսորեաց Ռուսաստան, երբ փորձեց գտնէ մէկ տոկոսով ինքնուրոյն պետական քաղաքականութիւն վարել:

Գայով ներդաղթի հարցին՝ ոչ միայն Զիչերինը ղկատարեց իր խոստումը և ճահիճների շորացումն էլ մնաց սոսկ ցանկութիւն, այլ և հայերի փոխարէն սկսեցին երկրում տեղաւորել թուրք զաղթականներ (երեք անգամ թուով աւելի հայ զաղթականներէ) և արտօնեալ վիճակ ստեղծել ազգային փոքրամասնութիւնների համար: Բացի այդ, ազգահաւաքման գաղափարը յայտարարեց յետադիմական և անգոյնասական: Կարիները, ազգաւորել մտայնութեանը վերջ տալու նպատակով, սուաջարեց ցրել Հայաստան պատասխանած 300,000 տանկահայութիւնը, իսկ այսօր Փարիզում, նորընծայ կոմիսար Եսայեանը ներդաղթի դէմ առարկութիւններ է թոթովում՝ մեկնելով «մատերիալիստական տեսակետից»:

Ինչ վերաբերում է Ախալքալախին, ոչ միայն նրա ազգաբնակչութիւնը պահանջեց այդ հողամասը կցել Հայաստանին, այլ, Մոսկեանի յայտարարութիւնից մէկ ու կէս տարի յետոյ, ապատմաբեց էլ վրաց բռնակալութեան դէմ և պաշտօնապէս դիմեց Հայաստանի կառավարութեանը՝ ինդրելով Ախալքալախը միացնել Հայաստանին: Եւ Մոսկեանները շեկայի սպառնալիքով Երևանից վճռեցին Ախալքալախի դիւղացիութեան ներկայացուցիչներին:

Իերած օրինակներն էլ բաւական են ցոյց տալու համար թէ հնգամեայ կարճ ժամանակում շատ բաներ են փոխել: Անփոփոխ է մնացել միայն բողիկներէ հակապետական ու հակազգային քաղաքականութիւնը և Հ. Յ. Դաշնակցութեան դիրքը խորհրդային քաղաքականութեան այդ ընթացքի հանդէպ:

Իսկ ի՞նչ ասել լիկւլիզացիոն համազումարի հետեանքների մասին. այդ ժողովից մի քանի ամիս յետոյ, Անդրերկրային կոմիտէն գտաւ, որ «հայ բոլշևիկներն իրենց ձեռքով կազմակերպեցին ոչ թէ Դաշնակցութեան քայքայման, այլ վերածնունդի ժողով»...

ԱՇՈՏ-ԱՐՄՐՈՒՆԻ

Մեծ պետութիւնների Բաղաձայնութիւնը Բալկաններում

Գրեց՝ Զ. Թոփալովիչ

I

13րդ և 14րդ դարի ընթացքին թիւրքերը նաճեցին Բալկանեան թերակղզին: Նրանք կործանեցին յունական, բուլղարական ու սերբական պետութիւնները և 14րդ դարից սկսած մինչև 19րդ դարը իշխեցին ամբողջ թերակղզու վրա: Բայց 19րդ դարի ընթացքին, սերբերը ապա, յոյները և, վերջապէս, բուլղարները յաջողեցին վերականգնել իրենց անկախ պետութիւնները և ստիպեցին, որ թիւրքերի իշխանութիւնը թաշտմանը թրակալի ծայրը: Բալկանեան թերակղզու մի հեռուոր ծայրին էր Պոլիսը, մի վայրում, ուր թերակղզին կաշուած է Սև ու Մարմարա ծովերին:

Թիւրքական տիրապետութիւնը ոչնչացրեց յոյներին, սերբերին և բուլղարներին աւստական և ընկերային կարգերը, ինչպէս և յոյն-ուղղափառ եկեղեցու հոգևոր գործիչները: Թիւրքերը հաստատուեցին քաղաքներում և ճշւած քրիստոնեաներին բաժին թողին որոշ ազատութիւն: Իրապէս փակած զիւղերում՝ զիւղացիները բոլորովին կտրուած մնացին արտաքին աշխարհի յարաբերութիւններից: Թիւրքական պետութիւնը ո՛չ մի քաղաքակրթութիւն չբերեց զիւղերին: Նա նրանց թողեց անպիտո՝ պայմանով, որ թաղաքներին բաւական ստատիստիկայ մթերեց հասցնեն: Զափազանց ծանր եղաւ պետութեան մէջ կատարած ընկերային այս փոփոխութեան հետևանքները: Սլաւ զիւղերում զիւղացիները հետզհետէ անցան զիւղական նախնական համայնապարական կենցաղին և ապրում էին հարիւրաւոր անդամներ ունեցող ընտանիքներով: Ազգային մտաւորականութիւնը՝ եկեղեցականութիւնը ու ազնւականութիւնը ամբողջապէս ոչնչացաւ: Ո՛չ մի գրաւոր գրականութիւն այլևս գոյութիւն չուներ, բայց դարձանում էր ժողովրդական բանահիւսութիւնը՝ ծայրահեղորէն պատկերաւոր և որոշ չափով «ժառանգական»: Ընտանեկան համայնքները ընտանիքի բոլոր անդամներին տալիս էին տնտեսական ապահովութիւն, և այն հանգամանքը, որ այլևս գոյութիւն չուներ կաթոլիկ լուծը, որը մի

տեսակ պահանջ էր այս ժողովուրդների մօտ, որոշ զիւղերութիւն ստեղծեց թիւրքական տիրապետութեան դէմ և ծնունդ տւեց անկախութեան և ապստամբութեան ժողովրդական ոգուն: Նա ապրում էր երբեմնի քաղաքական անկախութեան աւանդութիւններով և թիւրքերի քաշելուց յետոյ իր բովանդակ ուժը կենտրոնացրեց այս քաղաքական ապստամբիւնը վերականգնելու գործի վրա: Այս ազնիւ ու թանգարժէք սրամաղբութիւնների հետ մէկտեղ, ժողովուրդը, դժբախտաբար, բոլորովին գուրկ էր կարգապահութեան զգացումից և աշխատանքի չափազանց թոյլ մղում ունէր:

Այսպիսով, թիւրքական տիրապետութիւնը այս զիւղացի ժողովուրդին թողեց ապստամբան ու պայքարի խիստ շատ գնահատելի ճաշակ, բայց աշխատանքի ու կազմակերպութեան թոյլ սրամաղբութիւն: Վերջին հաշուով, նրանք շատ աղքատ էին և ապրում էին անտեսական ու մշակութային տեսակէտներից վերին աստիճանի անզարգացած մի երկրում: Թիւրքերի զինւորական տիրապետութիւնը չէր գոհացնում հոգևոր և ո՛չ մի պահանջի: Քրիստոնեաների համար դպրոցներ չկային: Երկուսում էին, միայն ուսման համարժեք դասարաններ, բայց զիւղերը դուրս էին այդ ճանապարհներից: Երբ հինգհարիւրամեայ տիրապետութիւնից յետոյ, թիւրքերը վճռուեցին Բալկաններից, զիւղերը կործանուած էին հիմն ի վեր. մնացին միայն մի քանի հին ու աղտոտ գորանոցներ: Այս 500 տարւայ տիրապետութիւնը ոչ միայն ոչ մի տնտեսական յառաջդիմութիւն չպարգևեց, այլ և անսպասելի վերածեց երկիրը:

Թիւրքերի ուսման տիրապետութիւնը Բալկաններից վտարեց ո՛չ միայն ճշւած ժողովուրդների՝ սերբերի, յոյների և բուլղարների ապստամբութեան հետևանքով, այլ և հարեան երկու պետութիւնների՝ Ռուսաստանի և Հարաբուրգեան Աւստրիայի պատուաինդիր գործունէութեան պատճառով: 13րդ դարից սկսած այս երկու պետութիւնները յարձակողական քաղաքականութիւն էին վարում Բալկաններում օսմանեան կայսրութեան վեհապետութեան դէմ: Աւստրիական բանակը արդէն փորձել էր զբաւել Բալկանների արևմտեան մասը, իսկ ոռու բանակը՝ արևելեանը: Շատ յաճախ այս երկու յաղթական պետութիւնները պայքարում էին իրար հետ թիւրքական տիրապետութեան բալկանեան ժառանգութեան համար, բայց ի վերջոյ կեան համաձայնութեան, որով Բալկանները արևմտեան մասը, Ալբերիական ծովի թիւրքները, տրւեց Աւստրիային, իսկ արևելեան մասը, էգէեան ու Սև ծովերի եզրերներին ընկած կտորը՝ Ռուսաստանին:

Սերբերի ապստամբութիւնը 19րդ դարի սկզբին ներշնչեց Փրանսական մեծ յեղափոխութեամբ, որի

*) Այս յօդուածի հեղինակն է սերբ ընկերավարութեան յայտնի դիկալար և Ընկերավարական Միջազգայինի ակամարո դեմֆերից մէկը՝ ընկ. Զ. Թոփալովիչը, որ բալկանեան ինքրի հեղինակար մասնագէտներից մէկն է: Մեծ օգտակար համարեցիմք տալ յօդուածի քարգմանութիւնը, որովհետև ընկ. Թոփալովիչը սպառիչ կերպով ներկայացրել է բալկանեան կենտի էութիւնը, որը այսօր էլ շարունակում է յուզել քաղաքական մտքերը, որ մնալով միշտ հրճիցի դիքում: Բալկանեան հարցի ուսումնասիրութիւնը մեզ համար օգտակար է և ուրիշ պատճառով. այնքան շատ նմանութիւն կայ Բալկանեան քերականութեան և Աւստրալի Ասիայի ու Անդրիդկասի վիճակի միջև:

ԽՄԲ

նապոլէոնական բանակը շարժուած էր Աւստրիայի դէմ ու քայքայում էաւատպետութիւնը Դաւթատիայում և Կրաստիայում: Բայց իրական օգնութիւնը ապստամբներին հասաւ աւստրիականերից ու ռուսները, որոնք յետադային կուսեցին իրար հետ այն բանի համար, թէ որի՞ վեհապետութեան տակ պէտք է դրանք թիւրքական լծից ազատագրուած սերբերը:

Սերբական իտըրիկ պետութեան հիմնումից յետոյ, Օրբենովիչները հարստութեան քաղաքականութիւնը որոշապէս ենթարկեց Վիէննային: Հարստութեան կառավարութիւնը մի անվտանգ դաշնագրով երաշխաւորում էր այս հարստութեան տիրապետութիւնը երկրում, երկրի ամբողջ տնտեսութիւնը կցում էր աւստրիական շուկային, իրաւունք էր ձեռք բերում, որ շինելիք առաջին երկաթուղին ընթանայ Հարաւային ուղղութեամբ՝ գէպի Սեյանիկ և Ինցնի Բոսնիա, Հեթցեգովինա և Դաւադիցա: Այս քաղաքականութիւնը առաջ բերեց սերբ դիւզադիական զանգուածների հակամարտութիւնը Օրբենովիչների հարստութեան և Աւստրիական վեհապետութեան դէմ: Եւ որովհետեւ Ռուսաստանը աւստրիական ազդեցութեան դէմ մղած պայքարում ուղում էր յենել ժողովրդական ռամկավար գանգուածների վրա, Սերբիայի դիւզադիական գանգուածների և ռուսական ցարիզմի միջև կնքեց որոշ միութիւն:

Բալկանները արեւելան մասում, ռուսական բանակի անմիջական աջակցութեամբ հիմնեց բուլղարական անկախ մի պետութիւն: Ռուսաստանը ձգտում էր, Բալկանների արեւելքում իր գերիշխանութիւնը հաստատելով՝ տէր դառնալ Պոլսին: Այդ պատճառով սկսեց քարոզել քրիստոնեաների ազատագրութեան գաղափարը թիւրքական ճնշումից: Բայց ռուսական ցարը ոչ թէ բուլղար ժողովրդի անկախութեան մասին էր խորհում, այլ Բալկանների արեւելան մասը ռուսական նահանգի վերածելու: Նա Սոֆիայում հաստատեց մի հարստութիւն, որ ամբողջապէս կախած էր Ռուսաստանից և որի դէմ, հէնց այդ պատճառով, ապստամբեցին Բուլղարիայի ժողովրդական գանգուածները: Պատերազմից յետոյ Բուլղարիային շնորհեց Կոբուրգների թագաւորական հարստութիւնը Հոհենցոլերների ընտանիքից: Բայց ժողովրդական գանգուածների մէջ ռուսական օգնութեան յիշատակը մնաց կենդանի:

Մի երրորդ պետութիւն էլ միջամտեց այս խառնափնթորութիւններին՝ Անգլիան: Անգլիական պետութիւնը խիստ շահագրգռուած էր արգելելու Ռուսաստանի ելքը դէպի Միջերկրական և նրա մերձեցումը Սուէզի ջրանցքին: Պաշտպանելու համար թիւրքիայի գերիշխանութիւնը Պոլսի վրա, համախորհուրդ կենտրոնական պետութիւնների հետ, Անգլիան պայքարում էր Ռուսաստանի դէմ 18րդ և 19րդ դարերի ընթացքում: Բայց երբ բալկանեան ժողովուրդները ապստամբութեան հետեանքով թիւրքական տիրապետութիւնը խախտեց Բալկաններում, Անգլիան, ընկալանաբար, սկսեց մտածել թիւրքական Պոլսի ժառանգութեան մասին և Ռուսաստանին դուրս մղելու նպատակով թէքեց հեղինակաւորութեան կողմը: Անգլիական ազատականները խանդավառութեամբ ողջունեցին յոյս ազատագրական շարժումը, բայց ազգային յեղափո-

խութեան սկզբից — ինչպէս կրկնեց և վերջերս 1919ին—նրանք լքեցին յոյներին Թիւրքիայի դէմ մղած պայքարի բախտորոշ մի վարկեանին: Անգլիական կառավարութեան համար ինդիլը վերաբերում էր այն բանին, որ արգելէ Ռուսաստանին ձեռք դնել Պոլսի վրա. նա միշտ անտարբերութեամբ էր վերաբերում յունական կամ թիւրքական գերիշխանութեան հնարաւորութեանը Պոլսում: Որովհետեւ, ի վերջոյ, յոյներին յաղթում էր Հիմնել ազգային անկախ մի պետութիւն, իբրև երաշխիք ռուսական ազդեցութեան դէմ, նրան պարտադրեց նոյնպէս Հոհենցոլերների ազգական գերմանական մի հարստութիւն, որը վտարեց Յունաստանից համաշխարհային պատերազմի ընթացքին: Զարգացման այս վերջին փուլը բալկանեան ժողովուրդների համար չեղաւ մի նոր նւաճում օտար իշխանութեան կողմից: Բալկանեան ժողովուրդները իրենց աչքով տեսան անկումը, երեք մեծ գիշատիչ պետութիւնների՝ Ռուսաստանի, Աւստրիայի, Թիւրքիայի և ողջունեցին իրենց անկախութիւնը: Դժբախտաբար, այն պահուն, երբ, վերջապէս, աւարտում էր թիւրքական տիրապետութեան վերացման պատմական մեծ ողբերգութիւնը Բալկաններից, առաջ եկաւ պառակտում ապստամբ ժողովուրդների միջև. բուլղար և թուրք միութիւնը դուրս եկաւ յոյների, ռումանների և սերբերի դէմ, որով թիւրքերը նորից մնացին Թրակիայում և Պոլսում: Որով բալկանեան կնճիւղը շարունակեց մնալ բաց և ջլխտաւոր մի կէտ Բալկանների մարմնի վրա: Բայց և այնպէս, կարելի է ասել, որ 600 տարի առաջ Բալկաններում հաստատուած օտար տիրապետութիւնը այլևս թաղած է բոլորովին և որ բալկանեան ժողովուրդները՝ Իւգո-Սլաւիա, Ալբանիա, Յունաստան, Բուլղարիա և Ռումանիա անկախ պետութիւնների հաստատումով, զարձեղ են բոլորովին ազատ, և թերակղզու ապագան գտնուած է նրանց ձեռքին:

II

Ներկայ վիճակը.

Կարող են մտածել, որ հարցը այժմ վերածած է ներքին կարգի խնդրի, որը կարող են լաւագոյն կերպով կարգաւորել հէնց իրենք՝ թերակղզու զանապս ժողովուրդները: Դժբախտաբար, այդպէս չէ. արտաքին մի վտանգ շարունակուած է սպառնալ Բալկանների քաղաքական անկախութեան: Այդ վտանգը այն փորձն է, որով դրամատիրական մեծ պետութիւնները աշխատում են թերակղզու վրա հաստատել իրենց ազդեցութիւնը:

Մայր աստիճանի կարևոր է վկայել, որ Կենտրոնական Եւրոպայից ո՛չ մի վտանգ չի սպառնում Բալկանեան ժողովուրդների խաղաղ զարգացման: Կենտրոնական Եւրոպայում ստեղծուած նոր դրութիւնը, Գերմանական և Չեխո-Սլովակեան հանրապետութիւնների կազմութիւնը առաջ է բերել այնպիսի քաղաքական պայմաններ, որոնք ընդունակ են վերականգնել այս ճարտարաբանտական երկրների և Բալկանների միջև տարւոր ու անտեսական հին յարաբերութիւնները: Այս պարագան, ի հարկէ, ունի խոշոր

կարևորութիւն: Նմանապէս միութիւնը գերմանական Աւստրիայի և Գերմանիայի միջև կարող է միայն ամբողջնեւ Բալկաններէ և Գերմանիայի բարեկամական յարաբերութիւնները և շահալուծել վերջինիս՝ պաշտպանելու ազատ նաւազբացութիւնը Արքիական ծովէ վրա: Այլաւ և գերմանական փորձամանութիւններէ վիճակը Իտալիայում քաջալերում է Բալկաններէ խողող զարգացումը: Եւ գործմանալի չէ, որ Մուսոլինին ճիշդ է թափում, որ Գերմանիան յարի իր արտաքին քաղաքականութեան: Մուսոլինիի ուժի քաղաքականութիւնը Բալկաններէ նկատմամբ ձգտում է Կենտրոնական Եւրոպայում ստեղծել տնտեսական առաջապահ մի կայան, որը պէտք է լինի Իտալիան: Դեռ ևս կարելի չէ նախատեսել, թէ ի՞նչ ձևով է գործառնալու ռուսական քաղաքականութիւնը Բալկաններում. արդե՞օք Պրուի չարքը կը դրէի նորից, կամ թէ չէ կը գտնւի՞ արեւօք Խուսաստանի և Խուճանիայի միջև զոհացուցիչ լուծում բերարարական խնդրի համար: Բայց ամէն տեսակէտից հաստատանք ենք, որ Խուսաստանի նախկին յաղթական քաղաքականութիւնը Բալկաններում վերջացած է ընդմիջում:

Եթէ հիւսիսից, այսինքն, Կենտրոնական պետութիւններ կողմից Բալկաններն թերակողմն չի սպառնում ոչ մի վտանգ, բոլորովին այլ է դրութիւնը հարաւում: Պատերազմից առաջ բալկանեան հարցի գլխաւոր կէտը կազմում էր Բալկաններէ կենտրոնական մասը: Համաշխարհային պատերազմից յետոյ տարածեց մինչև Միջերկրական: Այսպիսով առաջ եկան առաջնականը հետաքրքրութիւն ունեցող երեք մեծ պետութիւններ, որոնք առաջ անուղղակի կերպով էին շահագրգռւած բալկանեան հարցով: Դրանք են՝ Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան: Արքիական և Էգէնեան ծովերը ըստ հուճեան Միջերկրականի ծոցերն են, և Անգլիան աշխատում է Միջերկրականով յարաբերութիւն հաստատել Հնդկաստանի և Ասիայի հետ, Ֆրանսիան ձգտում է կապ հաստատել իր փոքրիկեան կալուածքներէ հետ, Իտալիան՝ պաշտպանել իր համաշխարհային առևտրի մի մասի և ազգային դոյութեան անհանգիստութիւնը: Ֆրանսիական բարեկամութիւնը համարելով իւր իշխանութիւնը, որով անհանգիստութիւնը վերջինիս անհոգեմբ պատերազմական նաւատորմից, ցոյց է տալիս որ Ֆրանսիական կառավարութիւնը ամենից առաջ ուզում է իր վեհապետութիւնը ապրածել արևմտեան Միջերկրականում և երաշխաւորել յարաբերութիւններէ ապահովութիւնը Ֆրանսիայի հարաւի և Աֆրիկէի հիւսիսի միջև, ինչպէս և անհրաժեշտութիւնը տեսնելու Իտալիան կապուած Արքիական ծովին և անկարող համախմբելու իր ծովային ռազմական ոյժը Միջերկրական ծովում: Իսկ ինչ վերաբերում է անգլիական քաղաքականութեան այս հարցում, փորձը ցոյց է տալիս մեզ, որ նա ինչ կարող տանել ո՛չ Ֆրանսիայի բացարձակ տիրապետութիւնը Միջերկրականի վրա և ո՛չ Իտալիայի: Այժմ, Արքիականի խնդրում գերակշիռ է մնում Իտալիայի և Իւզո-Սլավիայի շահերի հակամարտութիւնը, և ուրիշ շատ ժողովուրդներ էլ շահագրգռուած են այս խնդրում:

Ինչն է ուղում իրապէս Իտալիան: Մենք պնդում ենք, որ Փաշլեզով ուզում է ըսնի ուժով իրականացնել իտալական նախնական նպատակները, որոնց պատե-

րազմից առաջ, հետամուտ էր լինում Իտալիայի արտաքին քաղաքականութիւնը՝ ձգտելով Արքիական ծովը վերածել իտալական ծովի: Արդէն 1915թ. Լոնդոնի դաշնագրով Իտալիան դաշնակիցներէից խոստում էր ստացել իրեն վերապահել գերակայութիւնը Արքիականի վրա, իբրև հատուցում պատերազմի մասնակցութեան համար: Եւ Իիւզո-Սլավիայի պետութեան հիմնադրութիւնից անմիջապէս յետոյ նրա յօգուտ Արքիականի նւաճման թափած ճիւղերը վերջացան փոխադարձ զինուճանարկով, 1920 թ. Իտալիայի դաշնագրով, որով Արքիական ծովի հիւսիսային մասը «Պոլա» նաւահանգստի հետ միասին անցնում էին Իտալիայի բացարձակ տիրապետութեան տակ, իսկ կենտրոնական, մասը Իտալացիայով միասին, ինչպէս և հարաւային մասը Ալբանիայով չանդրած մնում էին բալկանեան ժողովուրդներին: Իտալիայի ռազմավար կառավարութիւնը կարծում էր, որ զինւորական ապահովութեան և Արքիական ծովի վրա առաւելութիւն ունենալու համար անհրաժեշտ է ունենալ ուժեղ զինւորական նաւատորմից և զերիշխանութիւն հիւսիսային ծովամասում, և՛ որ բոլորովին անօգուտ է Արքիական ծովը իսպառ գոցել փորձելով, օրհասական կռիւ հարկադրել իւզօսլաններին, ալբաններին, յոյներին և շահագրգռուած միւս ժողովուրդներին: Այս համաձայնութեամբ էր, որ իտալական ռազմավար կառավարութիւնը հնարաւոր էր գտնում տնտեսական համագործակցութիւնը Բալկաններէ և Իտալիայի միջև: Փաշլեզովի կառավարութիւնը համարեց դաւաճանութիւն և կոպտութեամբ դիմեց յարձակման՝ նւաճելու համար բալկանեան եղբայրներն ու Արքիական ծովը:

Իտալիան իր յաւակնութիւններուց Իտալատիայի վրա հիմնում է ազգայրական նկատումներէ վրա: Այդ մերկ խարէութիւն է: Բալկանեան եզերքի աղբիական փոքրի վրա չի գտնուում և ո՛չ մի իտալական ծագում ունեցող զէւր. միայն քաղաքներում կան անշունքանակութեամբ իտալացիներ, իբրև մնացորդներ վիճետիկեան 300 անալ տիրապետութեան այս պաւերկրէ վրա: Ազգազրական նկատումները չեն, որ ստիպում էին Իտալիային հրաժարուել Իտալատիայի մեծագոյն մասից, այլ պարզապէս այն համոզումը, որ Իտալատիան անկարելու ռազմագիտական կէտ է: Արքիականի տէր դառնալու համար հարկաւոր է ունենալ Ալբանիան Վալոնա նաւահանգստով, որը իտալական եղբայրներէից միայն 90 ծովային մղոն հեռաւորութիւն ունի և հարաւից բոլորովին փակուած է Արքիական ծովը: Այս պարագան է բացատրում Փաշլեզովի ռազմական քաղաքականութիւնը Ալբանիայի վերաբերմամբ: Բայց երբ Փաշլեզովները ազմկում են, թէ Իտալիան պէտք է դրուէ Իտալատիան այնտեղի հարստահարած իտալացիներին ազատելու համար, այդ ոչ այլ ինչ է, բայց եթէ ճշուում մի միջոց ընդդէմ Իւզո-Սլավիայի, որպէսզի յետ կեցնէ վերջինս Իտալիայի Ալբանիայի վրա ունեցած յաւակնութիւններին դիմադրելուց:

Իտալական ռազմապաշտները իրաւունք ունեն սակել, թէ Իտալիայի համար ընդունելի չէ, որ մի զինւորական ուժեղ պետութիւն գոյութիւն ունենայ Ալբանիայի եղբայրներին և այդ պետութեան զօրքերը

կարողանան ցամաք երնել Ապենինեան լեռնաշղթայում և Իտալիան կտրել երկու կամ երեք մասերի: Այս հանգամանքը, բնականաբար, անհրաժեշտ կը դարձնէ իտալական զորաւոր նաւատորմի զոյւթիւնը: Իսկ Իտալիայի այս հիմունքները անմիջապէս կարող են ներկայացուիլ և Իւզո-Սլաւիայի կողմից: Որովհետև ալբանական հողի վրա վաղուց իտալական զինուորական ուժերը կը կտրեն Իւզո-Սլաւիան երկու կտորի — Հարաւային մասը Մակեդոնիայով Հանեղրձ և հիւսիսային մասը, ուր Ալբանիան սեղմած բունուցքի պէս ներս է մտած իւզո-սլաւական հողի մէջ և հետևում է Ալբանիայի լեռներէց ուղղակի նախկին Սերբիայի կենտրոնը տանող ճանապարհին: Բացի այդ, իտալական զինուորական զրաւումը Ալբանիայում նշանակում է Իտալիայի տիրապետութիւն Ադրիականի վրա: Այսպիսով, Ալբանիայի կենսական շահերը ընկնում են վտանգի տակ: Իւզո-Սլաւիայի աւելի քան 1600 կիլոմետր ծովային սահմանները ազգային, տնտեսական անսակչաներով կախած են իտալական կառավարութիւնից, և Իւզո-Սլաւիայի կախումը կը դառնայ աւելի մեծ, քան երբեմնի Սերբիայի կախումը Հարբուրգների Աւստրիայից: Չպէտք է մոռանալ, որ այստեղ զործ ունենք մի երիտասարդ ժողովրդի հետ, որը կանգնած է իր պատմական կեանքի սկզբին իր երկրի դարաւոր տառապանքից յետոյ օտար տիրապետութեան տակ: Կարելի է աւելացնել նաև, որ Իտալիայում 600,000—800,000 սլաւներ են գտնուում իտալական լծի տակ: Եւ վենետիկեան 300 ամեայ տիրապետութիւնը Իւլլատիայում թողել է խիստ վատ յիշգրութիւններ: «Գլորիկա»-յից սկսած մինչև Մոնտենեզո՝ անազնի տարածութիւնը վեր է ածւած քարքարոտ անուպատի, որը, մի ժամանակ, օսմանեան և վենետիկեան կայսրութիւններէ միջև, անանցանելի պարիսպ էր: Որպէսզի պաշտպանեն իրենց թիրաքական ներխուժումից, վենետիկցիները հետևողական կերպով անտառազուրկ արին այս հսկայ լեռները՝ երկիրը գրկելով ջրից և ամէն մշակոյթ դարձնելով անհնար: Բազմաթիւ սերունդներէ բուռն աշխատանք է հարկաւոր և դրամական խիստ խոշոր միջոցներ, որպէսզի այս անսպասել նորից վերածուի մշակոյթի: Թո՛ղ Իտալիան յաջողի Ադրիականը դարձնել իտալական ծով: Այդ կը լինի հաւասար Իւզո-Սլաւիայի գաղութացման և իւզո-սլաւ ցեղի ազգային կեանքի կասեցման:

Միւս կողմից, միայն Իւզո-Սլաւիայի ազգային շահերը չէ, որ վտանգի են ենթարկւած, այլ և Ադրիական ծովով յարաբնականորէն շահազրկուած միւս երկրներէ տնտեսական շահերը: Ադրիականը տարածում է մէկ ու կէս հազար կիլոմետր երկարութեամբ եւրոպական երկրներէ մէջ և այսպիսով դառնում է առևտրական կարևոր գիծ կենտրոնական և հարաւային եւրոպայի մեծ մասի համար: Գերմանիայի հարաւը, Չեխո-Սլովակիան, Աւստրիան, Հունգարիան և բովանդակ Բալկանները անտեսապէս շահազրկուած են առևտրի ազատութեամբ Ադրիական ծովի վրա: Իտալական ջանքերը այս միջնադային ուղին իր տիրապետութեան տակ աններս համար սպառնում է առաջ բերել մի բախում, որը չի սահմանափակի միայն Իտալիայով և Իւզո-Սլաւիայով:

Ճաշիգձը չի նահանջում այս հնարաւորութեան

առջև: Նա արհամարհում է այն համաձայնութիւնը, որ ոչ միայն եւրոպայի, այլ և Ասիայի ու Ամերիկայի օգնութեամբ կայացաւ Իւզո-Սլաւիայի և Փաշիքմին նախորդող կառավարութեան միջև, յամօին Ռապալոի դաշնագրի, և յարձակում է պատրաստուել Բալկաններէ դէմ: Նա պատերազմական նպատակներով աշխատում է կազմակերպել բոլոր ուղղմանն էլ կառավարութիւնները, որոնք, ի հարկէ, Փաշիստ կառավարութիւններն են: Բալկանեան ամբողջ թերակղզին պահուում է մշտական յուզումնալից վիճակում և դրանով Բալկաններում գարգայնում զինաւորման վայրենի ու սանձարձակ մի քաղաքականութիւն: Բոլոր տնտեսական մտահոգութիւնները տեղի են տալիս մէկ դերագոյն մտահոգութեան առջև — երկրի նիւթական և բարոյական ուժերը յատկացնել պատերազմի պատրաստութեան: Եւ եթէ՛ եւրոպական ուժավարութեանց չյաջողի կասեցնել այս զործողութիւնները, բալկանեան ժողովուրդների ազգային ազատագրութեան վերջին արարը կը վերածուի համաշխարհային մի նոր սպանդի:

III

Լուծումներ.

Յետ պատերազմեան իրազարձութիւնները ցոյց տուին, որ իւզո-սլաւական կառավարութիւնը ցանկութիւն ունէր Ալբանիայում հաստատելու իր տիրապետութիւնը: Նա բացայայտօրէն հովանաւորում էր Ահմէտ Ջոզուին, որին նախկին ազգային կառավարութիւնը տապալել էր: Որ իւզո-սլաւական կառավարութեան այս քաղաքականութիւնը, որը չէր ձգտում պահպանել ալբան պետութեան անկախութիւնը, հաճելի չէր իտալական կառավարութեան, հակակաւի էինքնին: Բայց հասկանալի է նոյնպէս Իւզո-Սլավիայի անհանգստութիւնը ի տես իտալական ձգտումի՝ ստրկացնելու Ալբանիան: Երկու երկրներն էլ շահազրկուած են, որ ալբան պետութիւնը մնայ անկախ: Եւ պէտք էր ամենից առաջ պայմանաւորուել, որ երկու պետութիւններից և ո՛չ մէկը չխառնէ ալբանական եղբրքի գործերին:

Միում է խիստ հարցական, թէ արդեօք Ալբանիայի անկախութիւնը հնարաւոր է ապահովել խաղաղութեան դաշնադրերով: Յայտնի է, որ Իտալիայի պատերազմական քաղաքականութեան հակառակ ալբանական պետութիւնը Իտալիայի, Յունաստանի և Իւզո-Սլաւիայի միջև բաժանելու մէջ էր՝ բնականաբար, Իտալիայի համար պահելով գերակայութիւնը Վալոնիայում: Այս հանգամանքը արտայայտուած է նոյն իսկ պատերազմական այն դաշնագրի մէջ, որ կնքեց Լոնդոնում 1915Թ. Իտալիայի և գլխաւոր պետութիւնների միջև: Իտալիայի հետ ունեցած վիճաբանութիւնների ընթացքում, Վերսալի դաշնադրութեան միջոցին, սերբական քաղաքականութեան նախկին ղեկավարը, ծերունի Պաշիւրը, ցանկութիւն յայտնել նոյն հիմքերով համաձայնութեան գալ Իտալիայի հետ, որպէսզի այս միջոցով իւզո-սլաւական պետութեան համար ապահովէ գերակայութիւնը այն միակ անցքի վրա, որը Ադրիական ծովի կենտրոնական մասից տա-

նում է դէպի Բալկաններ ներսերը՝ սկսած Սան Զիովանի Դի Մեղուս նաւահանգստից մինչև Զիտորա քաղաքը։ Նրա նպատակն էր սերբական տիրապետութեան հաստատումը Բալկաններէ կենտրոնում։ Նա համաձայնեց նոյնպէս փոխադարձ զինումների վրա հիմնած մի համաձայնութեան Իտալիայի հետ, որը 1928թ. դարձաւ բարեկամութեան դաշինք, միջոց աջ յուսով, որ Իտալական գերիշխանութեան ճանաչումը Ազրիական ծովի վրա, հարաւորութիւն կը տայ Իւզո-Սլաւիային ձեռքի ազատութիւն ունենալ կենտրոնական Բալկաններում, որով և կը կարողանայ իր տիրապետութիւնը հաստատել բոլոր մասերում և յառաջնայ մինչև Սելանիկ։ Համաձայնութեան հիմքերը Իտալիայի և Իւզո-Սլաւիայի երկու զինուորական շրջանների միջև հետևեալն էին. Իտալական գերիշխանութիւն Ազրիականում, իսկ Իւզո-Սլաւիայի համար ազատութիւն հասնելու, հակառակ յոյների և բուլղարների, զերբակայութեան իջէյան ծովի վրա։ Մերուների Պաշտի Քաղաքակառուցիւնը վիժեց իբրև հետևանք զիմադրութեան, Հարաւորգեան Աւստրիային պատկանող իւզո-սլաւ գաւառների քնակիչներին, որոնք տնտեսապէս կապուած էին Ազրիական ծովին և պահանջում էին Ֆիոնդէն նաւահանգստի գրաւումը։ Յետոյ, երբ իշխանութեան գլուխ անցաւ Փաշիգմը, Ֆիոնդէն կորաւ Իւզո-Սլաւիայի համար։

Գանի ծերունի Պաշիգմ իշխանութեան գլուխ էր, Փաշխտական կառավարութեան հետ կար մի համաձայնութիւն, ըստ որի երկու կառավարութիւնները պէտք է յարգէին Ալբանիայի անկախութիւնը, մինչև որ Իւզո-Սլաւիան Նետտուձօի համաձայնութեամբ մասնաշեց Իտալական գերիշխանութիւնը Ազրիական ծովի բալկանեան եզրերին վրա։ Փոխրէնը Բալկանների ներքը թողնւեց Իւզո-Սլաւիային։ Փաշխտական կառավարութիւնը այդ ժամանակ դեռ չէր յայտնադրոճել իր սէրը դէպի հունգարական Փաշիգմն ու բուլղար-մակեդոնական հրոսախմբերը Բուլղարիայում։ Բայց այս լաւ համաձայնութիւնը թեկանաց Ալբանիայի շուրջը բացւած կուռի առթիւ։ Երկու կողմերն էլ ցանկանում էին Ալբանիայում զերակշիտ ազդեցութիւն հաստատելու միջոցով և կամ Ալբանիայի ներկայ վեհապետին կաշառելով շարժադրել համաձայնութեան միւս կէտերը։ Եւ որովհետև, ի վերջոյ, Իտալական Փաշիգմն էր, որ իբրև աւելի ուժեղ ու աւելի հարուստ, տարաւ խաղը և սկսեց թափանցել Ալբանիա, համաձայնութեան հիմքերը խախտեցին, և իւզո-սլաւական կառավարութիւնը սկսեց բաց ու յայտնի կերպով դիմադրել Իտալական կառավարութեան։ Բարեկամութեան դաշինքը նետեց մի կողմ, և Նետտուձօի համաձայնութիւնը չվաւարացեց։ Այդ ժամանակ էր, որ Փաշիգմը յայտնադրոճեց իր սէրը դէպի բալկանեան ժողովուրդները և սկսել վրսենալ իւզո-սլաւական այն յաւակնութիւններից, որ երբեմն ինքն էր վաւերացրել։ Նոյն ժամանակ Իւզո-Սլաւիան էլ հասկացաւ, որ իւզո-սլաւ պետութեան անկախութիւնը կախուած է ոչ թէ համաձայնութիւնից Փաշիգմի հետ, այլ միութիւնից բալկանեան միւս պետութիւնների հետ։

Այս բաց կուրը, որ տեւում է արդէն երկու տարի և որի մէջ Փաշիգմը զբամով ու զէնքով և առանց

յարգելու գոյութիւն ունեցող դաշնագրերը աջակցում է Հունգարիայի Փաշխտական կառավարութեան և բուլղար-մակեդոնական հրոսախմբերին և այդ նպատակով միտք բաց է թողնում սահմանների ձևափոխութեան հարցը, այս կուրը կամ էլ վերածի պատերազմի, կամ կը վերջանայ փոխադարձ զինումով, որին կը մասնակցեն ոչ միայն ուղղակի կերպով շահաբերուած երկրները, այլ և խաղաղութեան պահանջութեամբ հետաքրքրուող բոլոր պետութիւնները։ Փաշիգմը Ալբանիայում գզում է իրեն շատ ամուր։ Օր օրի վրա ամբապնդում է իր տիրապետութիւնը և այլևս չի մտածում փոխադարձ զինումի մասին։ Իր ներկայ զինուորական զերակառուցիւնը Իւզո-Սլաւիայի վրա՝ թոյլ է տալիս նրան իտալափոխ բանակցութիւններից։ Եւ միևնոյն ժամանակ նա ջանք է թափում կազմակերպելու ազգայական մի միութիւն, որը հնարաւորութիւն կը տայ նրան իր զիրքն ամբացնելու Բալկաններում, որովհետև հակառակ իր զինուորական զերակառուցեան Փաշիգմը ճակոճում է շատ լաւ, որ ինքը չի կարող ծովեզրերից շատ կտրուել՝ մտնելու համար Բալկանների խորքերը։ Նա պէտք ունի հէնց բալկանեան հողի վրա ստեղծելու մի միութիւն, որը ստիպէր նահանջել Իւզո-Սլաւիային։ Եւ Փաշիգմի այս գործերակերպը խորունկ անհանգստութիւն է պատճառում Բալկաններում և ստիպում է, որ միւս պետութիւններն էլ, և ի մասնաւորի, Իւզո-Սլաւիան զիմեն անասնոճ զինուորման...

Ինչպէ՞ս կարելի է հասնել համաձայնութեան։ Միայն մի ձևով. եթէ Իտալիան և Իւզո-Սլաւիան կրթաւրեւն ալբանական եղիքներին տիրելուց։ Փորձը հաստատել է, որ տակաւին ազգային կազմաւորում չստացած, իր լեռներում փակւած, տնտեսապէս ու քանակով խիտ թոյլ ալբան ժողովուրդը անկարող է, սեղմւած Իւզո-Սլաւիայի և Իտալիայի նման երկու մեծ պետութիւններին միջև, պաշտպանել իր քաղաքական անկախութիւնը։ Բարեբախտաբար, այլևս չի կարող դուրև Ալբանիայի բաժանման հարց Իւզո-Սլաւիայի, Յունաստանի և Իտալիայի միջև։ Ո՛չ մի պետութիւն չի լինի այնքան խիզախ, որ բացարձակ կերպով դուրս դայ Ալբանիայի անկախութեան դէմ։ Իւզո-սլաւական կառավարութիւնը Ալբանիայի անկախութեան ապահովումը տեսնում է միջազգային երաշխիքների մէջ։ Թւում է թէ Իտալիայի հետ ունեցած վիճելի հարցերի բարեկամական լուծման հիմք կարող է լինել—նորոգելու համար 1923թ. դաշինքը, ինչպէս և Նետտուձօի համաձայնագրի վաւերացման նպատակով*—Ալբանիայի քաղաքական անկախութեան ապահովումը միջազգային դաշինքների միջոցով՝ տրւած մեծ պետութիւններից կամ Ազրիկի Դաշնակցութեան Խորհրդից։

Մենք կարծում ենք, որ ընկերվարութեան խաղաղութեան քաղաքականութիւնը պէտք է գոհունակութեամբ ողջունէ փոխադարձ զինումներով եղած համաձայնութիւնները, որոնք ապահովում են խաղաղութիւնը։ Մեծ դժբախտութիւն կը լինի, եթէ իւզո-

* Ինչպէս յայտնի է, Նետտուձօի համաձայնութիւնը վաւերացել է արդէն Իւզո-Սլաւիայի կողմից։ ԽՄԲ.

սլաւական և իտալական ռազմապաշտութիւնները վերադառնան իրենց նախկին կիսամիջոցներին: Նմանապէս իտալական գերիշխանութիւնը Արքիալեան ծոգում կը լինի տնտեսական ու քաղաքական փրկում, իսկ իւզո-սլաւ տիրակալութիւնը բալկանեան միւս ժողովուրդներէ վրա կը լինի ընդհանուր աղէտ: Պէտք է վերջ տրուի ամէն տեսակ աշխարհակալական քաղաքականութեան: Բալկանեան ընկերվարականներն հետաքրքրողը խաղաղութեան ապահովութիւնն է ո՛չ միայն Հարաւի նաճողական ձգտումներէ դէմ, այլև ազգային ներքին պայքարներէ, որոնց վերացումով հող կը պատրաստուի թերակալութեան շարժումներէ բարեկամական աշխատակցութեան համար: Խաղաղութեան ապահովութիւնը կարելի է գտնել միայն բալկանեան բոլոր ժողովուրդներէ ամուր միութեամբ:

Ռուսաստանի ազգայն Հարաւային քաղաքականութիւնը մնում է անոր: Վէճը Ռուսաստանի, Ռուսաստանի և Բեարարիայի միջև Հարթլամ չէ գետ: Այս կուի առարկան մի կտոր հողի նաճման հարցը չէ: Ընդիր վերաբերում է Դանուբի գետաբերանի դրաման: Եթէ Ռուսաստանը արեւմուտքում մնաց ծովից հեռու, ապազային չի կարող խօսք լինել տնտեսական համաձայնութեան մասին Բալտեան պետութիւններէ և Ռուսաստանի միջև: Ան ծովը կը լինի Ռուսաստանի տնտեսական հիմքը, և նրա սղումը դէպի Պոլիս ու Դարդանեկ կը դառնայ աւելի բացառաւոր: Եւ եթէ իւզո-սլաւ պետութիւնը չի հակառակուի այսոր, նրա միակ յոյճ այն է, որ զերեւորական դաշինք կունենայ Ռուսաստանի հետ, մի բան, որի համար են աշխատում, վերջին հաշուով, և խորհուրդները: Նման քաղաքականութեան հիմքը կը լինի, ընականաբար, բարեկամութիւնը Բուլղարիայի հետ: Եւ այս կը նշանակէ վերերևուած հին համալսարանութեան, որը միշտ էլ եղել է մի միջոց ապահովելու Ռուսաստանի անցըր դէպի Պոլիս: Համալսարանական այս քաղաքականութիւնը կը լինի ամենից աւելի վնասակարն ու ամենալուսանալուր բալկանեան ժողովուրդներէ համար: Մի պատերազմի քաղաքականութիւն, որը խնդրական կը դարձնէ բալկանեան շատ ժողովուրդներէ գոյութիւնը: Ռուսաստանը մի կողմից, հունգարները միւս՝ իրենց շրջապատում կը տեսնեն սլաւական մեծ օղակով, որը ուրիշ ելք չի թողնի նրանց վերստանալու համար իրենց ազգային ու քաղաքական ազատութիւնը, որը ապահովաբար պիտի կորցնեն, բայց եթէ կործանաբար պատերազմը: Սերբերն ու բուլղարները, ընդհակառակը, կը լինեն ազգային անկախութեան կրտսեան վտանգի տակ, եթէ յայթոյր դուրս գայ Իտալիան, որին կաշկանդ Անգլիան: Ռուրը գէպեղեմով էլ պայքարը բալկանեան ժողովուրդներէ միջև կը լինի մի միջոց, որ կապահովէ մի օտար պետութեան՝ Ռուսաստանի կամ Իտալիայի տիրապետութիւնը Բալկաններում: Եթէ իւզո-սլաւները պէտք է կուեն Հարաւում ընդդէմ իտալական աշխարհակալութեան, ուսմաններն ու յոյսերը պէտք է պաշտպանեն հիւսիսից ընդդէմ ռուսական հաւանական աշխարհակալութեան: Միակ քաղաքականութիւնը, որ Համապատասխանում է բալկանեան ժողովուրդներին, ռամկավարական խաղաղութեան քաղաքականութիւնն է, որը այս ժողովուրդներէ համար

մեծ պետութեանց դիշատիչ ձգտումներին դէմք չճառայելու և ամենքին իր մէջ առնող մէկ միութիւն առաջ բերելու մէջ է: Նման քաղաքականութեան հիմքը, ի հարկէ, պէտք է լինի համաձայնութիւնը ազգային ու սահմանային բոլոր վիճելի հարցերէ շուրջ և մաքսային միութեան իրականացումը բարեկանեան բոլոր ժողովուրդներէ համար: Այսպիսի միութեամբ միայն բալկանեան ժողովուրդները կարող են դեռ նախնական բալկանեան տնտեսութիւնը բարձրացնել ու գտնել սեփական միջոցներ պայքարելու համար ընդդէմ միջազգային մրցակցութեան և փրկել տնտեսական ապահովող ստրկութիւնից: Թերակալութեան քաղաքական և տնտեսական ազատաբարութիւնը անմիջապէս կը տայ նրան այժմ խոշոր դրամապիլի ձեռքին զանազ միջոցներ՝ օգտագործելու հողի տակ գտնուող անհաշիւ հարստութիւնները և այլ հարստութիւնները դարձնելու մասշտիբ համաշխարհային հաւաքականութեան համար:

Օգտակար է իրատական օրինակներ քաղել համաշխարհային պատմութիւնից: Դարերի ընթացքում Բալկանի հողը երկու անգամ գտնուել է կատարեալ արդիւնաւորման շրջանում: Մէկ, երբ հռոմէական կայսրութիւնն էր իշխումը դրեթէ բոլոր ծանօթ հողերի վրա: Հռոմէական նաւերը բանում էր Դանուբի երեսին՝ Վիէնայից մինչև Սև ծով, և ճանապարհները միացնում էին Բելգրադը Պոլսին, Սելանիկը Դուրացոյլին ու Սպալատոյին: Տակաւին այսօր էլ Բալկաններում կարելի է գտնել այդ ժամանակաւ հանգրեւ, ուր մշակուած էին ոսկին, արծաթը, պղինձը, երկաթը և այլ կարգի մետաղներ: Հիմնալի ու զորաւոր ամուրթիւն Բելգրադը այդ ժամանակաշրջանում է կառուցւած, և հռոմէական կայսրը մեծ ծախսերով շինել է անլ Սպալատոյի գեղեցիկ պալատը, որի աւերակները կանգուն են դեռ: Հռոմէական կայսրութեան անկումից յետոյ, ամբողջ այս հին քաղաքակրթութիւնը, մեծ մասով, ոչնչացաւ, բայց ծաղիկն քուլար ուսերը հին պետութիւններէ մէջ 10րդ դարից մինչև 13րդ դարը: Այսպիսով, այն քաղաքական մեծ համակցութեան համար, որին վերաժնուած էր Բալկանեան թերակալիւն, հնարաւոր էր գտնուած քաղաքական ու մտաւոր խոշոր դարաշրջումը:

Վերլիքի երբեմնի ժամանակները նորից են վերադարձել: Բայց այդ վերելքը անհրաժեշտ է ո՛չ օտար տիրապետութեան շրջանակում, ո՛չ էլ այն պայմանով, որ բալկանեան մի ժողովուրդը ստրկացնէ թերակալութեան ժողովուրդներին: Բալկանները կարող են հասնել մի նոր կիանքի ու նոր մշակոյթի միայն ռամկավարութեան ուղին բռնելով — մի ուրիշ, որը պէտք է համարմբէ բոլոր ժողովուրդներին մի անկախ միութեան մէջ: Այս էր զեկավար սկզբնաբն բալկանեան առաջին յեղափոխականների, որոնք մի դար առաջ Սերբիայում, Յունաստանում և Բուլղարիայում ազգային ապստամբութեան դրօշը բարձրացրին թիրաքան ճնշումների դէմ: Այսօր Բալկանեան երկրներէ ընկերվարականներն են Իւրացրել այդ գաղափարը, որը ստացել է և Ընկերվարական Միջազգայինի հաւանութիւնը: Այս է այն հիմնական միտքը, որը ոգևորում և ոյժ է ներշնչում մեզ՝ Բալկաններում հաստատելու իսկական խաղաղութիւն:

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Ե Ո Ւ Ր Զ

Նիսի մահափորձը (11 նոյեմբեր), որու միջոցին քեմալական զործակալ Մէհմէտ Սապրի փորձեց սպանել նախկին իթթիհատական Կիւմուլճինայը Իսմայիլ Հազգը պէյը, կը բանայ Մ. Քեմալի գաղտնի կազմակերպութեան մէկ երեսը:

Վերջացող տարւան ընթացքին գաղտնի զործակալներ շատ եկած-գացած են Եւրոպա և Սուրիա: Իսկ յատկապէս թիւրք ընդդիմադիրներուն դէմ ահաբեկութիւններ կատարելու համար, վերջեւս պաշտօն ստացած էին վեց հոգի: Ասոնք ճամբայ Հանաւած են զանազան ուղղութեամբ, բայց առաջին զնդակը պայթեցաւ Նիսի մէջ, ուր կը գտնուի գահընկէց Սալիֆան: Ինկիլիբի օրը օրին կը հետևի արտասահմանի թիւրքերու զործունէութեան, և վստահ ըլլալով որ անոնք ոյժ վստահեն Ապտիւլ Մէհմետի շրջապատէն, երևի ուզած է օղակ մը քակել այդ կողմէն: Մնաց որ, այսպէս կոչուած ընդդիմադիրները կը ներկայանան ոչ թէ իբրև կուռ կազմակերպութիւն, միասնական ծրագրով և միացեալ ճակատով, այլ իբրև զոյնզոյն խմբակներ և անհատներ: Որքան ուժեղ և ճարտիկ է անհատը, այնքան մարդ ունի իրեն հետ, հոգ չէ թէ հակոտնեայ հասկացողութեամբ: Եւ ճիշտ ատոր համար ալ, հակասական են ծրագիրները, յաճախ մէկը միւսին դէմ:

Միայն մէկ բան կը մտնենք զանոնք, — հակոտնեմալականութիւնը: Փառքի և դիրքի տենչը: Այսպէս ըլլալով հանդերձ, ոչ մէկը կուզէ յառաջ երթալ այնքան, որ վտանգէ Հարկեիթին գոյութիւնը: Ինչպէս որ ուսու միապետականները սրտանց երախտապարտ են խորհրդային իշխանութեան, բաժան-բաժան Ռուսաստանը վերագրաւելուն համար, այնպէս ալ իթթիհատական, իթթիհատական կամ դժգոհ քեմալական շին ժխտեր Մ. Քեմալի կատարած զործը, — Թիւրքերոյ ամբողջութեան փրկութիւնը:

Բայց հանդիստ չէ Քեմալը, և ահաբեկման ձեռնարկներ պարբերով հանդերձ, կը փորձէ նաև հրապարակել կամ պատակահեղ թել-շատ զործունեայ անհատներու ու խմբակները: Այս քաղաքականութեան ծայրը կը հասնի մինչև Ապտիւլ Մէհմետ, որուն որոշ գիշումներ և դրամական հատուցումներ ընելու պատրաստ է. պայմանաւ որ ամբողջ գերդատաստով ճանչնայ իր իշխանութեան օրինաւորութիւնը: Եւ անշուշտ, պայմանաւ որ չհովանաւորէ պաշարը:

Այս ճամբուն վրա նկատուի խոչընդոտ մը կը համարուի Կիւմուլճինացի Իսմայիլը, ափ մը կը հաւատարիմներու հետ: Իսկ ուրիշներ, ինչպէս նախկին վարչապետ Բեուֆ, Իգմիթի նախկին կուսակալ Բահմի, Տոքու: Ատնան (Պալիտէ Խոփա հանրի ամուսինը), կը նկատուին պոլիտիկոսներ, ոչ թէ դաւադիրներ: Ձեռք խօսիք բուն Թիւրքերոյ մէջ գտնուած ընդդիմադիրներուն վրա, որոնց զլիաւորները հազիւ պատահան կարողանան, և իրենց շուքէն կը վախճան այժմ:

Ինկիլիբին շինական պարիսպներ հաստատած է անոնց դէմ, և հազարաւոր որսի շուներ կը հսկեն անոնց ճամբուն վրա:

Պիտի դարձմանք, եթէ ըսենք որ այդ որսի շուներուն դուրսը կը գտնուի Հայ մը, ապահոված նոյն ինքն Մ. Քեմալի անձնական «վստիգառով» (վկայական): Շէրլոք Հոլմս մը, գաղբիլի տեսակէն:

Հարկ է թէ մը ետ երթալ, մինչև Պոլսոյ գրաւման օրերը, ներկայացնելու համար այդ հրէշային տիպարը:

Միջահասակ, ջղուտ, կապտորակ աչքերով, մարդածօտ և տղէտ Խոտերնէցի մըն է այս ալլասերածը, Արմենակ Բանթիկեան: Չափազանց ճարտիկ և շահամոլ, կատարած է այնպիսի գործեր, որոնք հէքեաթի տպաւորութիւն կը ձգեն: Ձինադադարին՝ բրիտանական զործակալ էր: Երբ քեմալականները Պոլիս մտան, կը կարծաւթ թէ կտոր-կտոր պիտի ընեն, ինչպէս ըրին Ալի Քեմալը: Մինչդեռ Բանթիկեան Մ. Քեմալի աչքին լոյսն է այսօր, և կը վարէ գաղտնի ոստիկանութեան քաղաքական բաժինը, Ինկիլիբի մէջ:

Ուրիշ՝ յառաջ եկաւ այս մարդը:

Երբ կը պայթի Մեծ Պատերազմը, Արմենակ Բանթիկեան իր առևտրական գործերը փակելով, կանցնի Պուլկարիա: Արդէն ծանօթ այդ երկրին և պուլկար լեռին, անպիտացի գործակալ հարկերապետ Մարքի գրքուժով կը սկսի բարոյութիւններ ընել ի նպատակ Անգլիոյ: Շատ չանցած, Պուլկարիա արդէն յարած ըլլալով Գերմանիոյ և զինակիցներուն, Բանթիկեան կը ձերբակալուի և մահուան կը դատապարտուի, բայց կախաղանէն կազատի նախկին նախարար Տանէֆի շնորհիւ: Վճիռը կը փոխուի մշտնջենական աքսորի: Բանթիկեան կը յաջողի խոյս տալ, և կանցնի Տէսէ Աղաճ, ուր կը գտնուի Տարտանէի բրիտանական բանակին գլխաւոր կայանը: Այնտեղ կը գտնէ իր բարեկամն ու անգլիացի բարձրաստիճան սպաներ, և կը յաջողի Պոլիս մտնել վտանգաւոր պաշտօններով: Ոստիկանութեան ընդհանուր տնօրէն Պէտրի պէյ ճանչնալով զինքը, կուզէ ձերբակալել, բայց քաղաքական բաժնի տեսուչ Բէշտա պէյ կը փախցնէ կեղծ անցադրով: Խոտերնէի մէջ կը ձերբակալուի, բայց Բէշտա տնօրէն կը միջամտէ և կուսակալը բանտէն փախցնել կուտայ, ու Բանթիկեան պուլկարի մը միջոցաւ նորէն ինքզինքը կը գտնէ Տէսէ Աղաճ:

Այսպէս աւելի բարձրանալով անգլիացիներու աչքին, զինադադարին յաղթապանծ կը մտնէ Պոլիս...

Այստեղ կը բացուի նոր և փայլուն շրջան մը, իրեն համար: Իր ձեռքին տակ ունենալով ճարտիկ լրտեսներ և լեզազգետ պաշտօնեաներ, Բանթիկեան կը սկսի նախ իր «ազգայնական» զործունէութիւնը պատել, և յետոյ հարածել իթթիհատականները: Իր կունակը տաճ

էր անզլիացի Հարիւրպետ Պէննէթի, որ վերջերս ձերբակալուեցաւ Աթէնքի մէջ, իբրև «աֆէրիտ»։ Երիտասարդ և փառասէր, այս սպան թէև կը գործէր յանուն յաղթական Դանակիցներուն, սպանուալով կոտորէ-թափել, բայց շարդարար և սարսափահար իթիխատականները շուտով գտան զազանիքը՝ զայն որսալու։ Կին, խաղ, գինի։ Կամաց-կամաց կը մտնցուէին շարդարու տեղակիրները, և զեռ քեմարականները Պոլիս չեկած, «բէֆթըն» Պէննէթ Իզգէթ փաշայի կողքին էր արդէն... Եւ նկարագրուած սարսափները կը համարէր, իր թերխաչ թիրբերէնով, «միւլպալդոս» (չափազանցուեթիւն)։

Այսպէս ուրեմն, ձեռք ձեռքի տւած Հարիւրպետ տին և Հրեայ ոսկերչապետ Հարոնաշիի Հետ, Բանթիկեան սկսաւ խողալ Հրէշային խաղ մը։ Իր առաջին գործը եղաւ գիմուս կատարել. առ որ անկ է և համոզուի որ չգիպին Հիտայէթի, հայ «խաֆիէ» մը, որ Հաղարներու գլուխը կերած է և յան պէս կը զոգար իր կեանքին վրա, վրիժառուութեան այդ օրերուն։ Ինչո՞ւ... — որովհետև «Հիտայէթ գիտէ Էնվերին տեղը և պիտի երթայ ողջ ողջ պիտի բռնէ և անզլիացիներուն պիտի թնձնէ զայն»։ Իսկ այս վերջիններուն կը պատմէր թէ Հիտայէթ Մ. Քեմալի ժտահնիլի մարդն ըլլալով, կրնայ Էնվերի երթալ և զինուորական զազանիքներ բերել։ Միայն թէ, պէտք չէ թոյլ տալ որ սպանի վրիժառուի մը գնդակէն...

Կը յիշի թէ անզլիացիները երեք իւրա՛ծ հեղիկներ զրկեցին Էնվերի, զինուորական լրեսուութեան համար, տուաւ։ Ուրեմն, առիթը նպաստաւոր էր, և Հիտայէթ բայց Մ. Քեմալ երեքն ալ թակարդը ձգելով, կախիլ տուաւ։ Ուրեմն, առիթը նպաստաւոր էր, և Հիտայէթ պրծաւ։ Այս առթիւ Բանթիկեան «ճահան» դատաւարուեցաւ քեմալական իշխանութեան կողմէ, ձեակաորէն, իսկ Հիտայէթ չիմուտ տեղեկագիր մը յանձնեց, Մ. Քեմալի 200նոց հրոսախուժը ներկայացնելով Հարիւր անգամ աւելի։ Այս տեղեկութեան վրա էր, որ անզլիական երկու Հաղարանոց ոյժը անսպաս պաշարով և ուսգմանիթով, լքեց Էսկիշէհերը և Պոլիս ապաստանեցաւ։

Տարբեր պարագաներու մէջ, բայց միևնոյն հոգեբանութեամբ, Արմենակ Բանթիկեան ազատած է նաև կեանքը Պոլսոյ ոստիկանութեան քաղաքական բաժնի վարիչ Բէշատ պէյն, որուն ձեռքէն անցած են բոլոր աքորականները, 1915 սպրիլ 11/24ին և այնուհետև։ Այս ալ զինազարարին ձերբակալած և աքորուած էր Մալթա, Քըլառ և յուսահատ, բայց օգնութեան հասաւ երախտագիտ բարեկամը...

Այս մասնակի պարագաները յիշեցինք իբրև յատկանշական։

Այլևս ազատ ասպարէզ գտած էր Բանթիկեան, և աւելի մեծ գործերու ձեռնարկած։ Այդ կարգէն է՝ Պոլսոյ պատերազմական զինքերու փախուստը։ Համաձայնականները Պոլիսը զբաւել յետոյ, զբաւեցին պատերազմական բոլոր զինքերու և խիստ պատիժներ սահմանեցին զէնք ունեցողին։ Բայց երկար լուսեց այս խտուութիւնը. իսկ յաղթական Դանակիցները իբարու հետ մրցումի ելան, Մ. Քեմալին զէնք հասցնելու համար։

Այստեղ ալ հայազգի Արմենակ Բանթիկեանն է որ կը փայլի նորէն, արգիլած գէնքերը Անասուր զրկու համար, իբրև առևտրական ապրանք։ Այս գործին կեղրոնն էր Սիրբէճի, Հիւանի պէյի մթերանոցը, որուն գործառնութեանց կը մասնակցէր նաև Ատնան պէյ։ Երբ իթիլաֆական թիրբերը լուր կուտային թէ ախիւն տեղէն զէնք կը բեռցել, Բանթիկեան լրջօրէն նկատի կառնէր, բայց միւս կողմէ հեռախօսով լուր կուտար Հիւանի պէյի մթերանոցը, որպէսզի փոխեն զէնքը բեռցնելու տեղը, և յետոյ խիստ հրամանով մը ոստիկանները կը ճամբէր այնտեղ, ուր վստահ էր թէ զէնք չկայ... Եւ սպալէս զէնքերը սպալածով կը փոխադրուէին։ Եւ Մ. Քեմալի հրոսախուժները կը գինէին շնորհիւ Արմենակ Բանթիկեանի։ Այս ձեռով Անասուր փոխադրուած է նաև մեծաքանակ ապրանք և մասուանգ կերպաս, մինչ «խաֆիէ» գոյնով քուրքն անգամ արգիլուած էր, ձեակախորէն։

* * *

Մինք չպատմեցինք Բանթիկեանի ամբողջ «գործունէութիւնը»։ Բայց այսքանն ալ բաւական է, զապար կազմելու համար տիւրաբէն վրա։ Այս բոլորէն յետոյ, ինչո՞ւ գարմանալ, եթէ Մ. Քեմալ իր կեանքը վստահած է ափ մը հաստատիքներու, որոնց մէջ՝ առաջնակարգ տեղ մը ունի նաև այս երկոտանի Հրէշը։

* * *

Թրքական նոր տառերը սկսան գործադրելի գեղտեմբեր 1էն։ Այդ օրէն ի վեր, բոլոր թերթերը կը հրատարակին լատինատառ, ինչ որ անհամեմատ պիտի նւագեցնէ վաճառումը։ Այդ վնասները, ինչպէս և զբաղմաններու կորուստները դաժմանելու համար, կառավարութիւնը սահմանած է կարևոր վարկ մը։ Հրամանը սպարական ըլլալով, քիչեր կը համարուէին ջրթմնջիլ։

Մինչև լատինատառ այբուբենի գործածումը, Պոլսոյ մէջ կը համրէին 75 թիրբերէն, 31 ութիրբ և օտար թերթեր ու պարբերականներ, Իզմիրի մէջ 12. Իսկ Ատանայի մէջ 4։ Ապահովարար կարելի պիտի չըլլայ պահել այս թիւերը։

* * *

Թրքասիրութեան ի՞նչ թանկադին ապացոյցներ և անհաշիւ գոհեր — նորէն Հայե՛ր — ընծայեց ճասպետական» Ֆրանսան, 1918ի յաղթանակէն անմիջապէս յետոյ, մինչև իսկ իր զինուորներուն արհիւք ուրան և նոյնութեամբ Թիրբիոյ յանձնելով Կիլիկիան։ Չեռքի վրա կը պտտէր տիրահոշակ Ֆրանքլէն Պուլսօնը, իբրև տեսակ մը փրկիչ։ Եւ յարաբերութիւնները այնքան սիրալիք էին, որ 1925ի քրտական ապստամբութեան ամենէն սուք շրջանին, Ֆրանսա հաճութեամբ տրամադրեց Սուրբոյ երկաթուղիները, թիրբ զինուորներու փոխադրութեան համար։ Այլապէս, եթէ Սև Մոլու ճամբով փոխադրէին, Ժամանակ պիտի կորուէր և Շէյխ Սալիտի շարժումը կրնար վճռական ելքի մը յանգիլ։

Եւ սակայն, Ֆրանսան այսօր իր դիմացը կը գտնէ անհաշտ և ամբարտաւան թիրբերա մը։ Թիրբ թեր-

Թերը Ֆրանսայի դէմ ալ կարտայայտուին չքեթէ այն յեզով ինչպէս Յունաստանի դէմ: Մահմանազի՛ խնդիրք մըն է ամբողջ վէճը, բայց տաք ու պաղ շուրհր կը լեցնէ երկու երկիրներու յարաբերութեանց վրա: Երկու կողմերէն ոչ մէկը կուզէ տեղի տալ, իսկ սուսմանապէս չկամութիւն կը ցուցնէ էնկիւրին: Ուրիշն թող մը հող չենք ուզեր, բայց մեր երկրէն ալ թիւ մը հող չենք տար— Այս իմաստը Թիւրքիոյ ընթացքին: «Մեր Ֆրանսացի բարեկամները շատ լաւ գիտին որ գէշ դիտումներ ունեցող Թիւրքիա մը, շնորհիւ իր նրկական և բարոյական նպաստաւոր կացութեան, կրնայ անսահման զեւարուելներու առջև դնել Սուրիոյ Ֆրանսական իշխանութիւնները» (Միլիէթ):

Այս աղաբարութիւնը կրկնը Թիւրքիոյ Ֆրանսական բանակցութեանց վերակտումէն առաջ: Այնուհետև, աւելի որոշ սպասնախի՛նքն րանձակել սկսան Թիւրք Թերթերը, անշուշտ, կառավարութեան թելադրութեամբ: Արտաքին գործաւոր Թէվֆիկ Բիւշտին տւած էր առաջին ազդանշանը, — ոչ մէկ թիւ հող: «Վազըթի խորագրապետը ուղղակի կառաջարկէ գրաւել Թիւրքիա բնակող սուրբացիներու և նոյնիսկ Ֆրանսացիներու կայսածները, «Ֆրանսացիները ճամբու քերելու համար»: Հարցը կը վերաբերի Սուրիայէն հետացած 15.000 Թիւրքերու կայսածներուն, որոնք իբրև թէ գրաւման տակ են, բայց Թիւրք և սուրբական սահմանակէճն է բուն շարժառիթը: Եւ արդէն այդ վէճին շուրջը կը դառնան նոր բանակցութիւնները:

Ֆրանքիէն Պուլսոնի կնքած դաշնագրին համաձայն (1921 հոկտ. 20), Թիւրքիոյ և Սուրիոյ սահմանագիծը պիտի անցնի Իսթանբուլի ծոցէն, Փայսաի անմիջական հարաւը և պիտի ուղղուի դէպի Մէյտան էջպէջ: Բուն վէճը կը դառնայ Նիսիպիլիս—ձէլզիլիթ—Իպի—Օմարի գծին շուրջը, որ դաշնագրին մէջ բացատրուած է իբրև «հին ճամբայ»: Թիւրքիան կը պահանջէր սահմանագիծ մը՝ աւելի դէպի հարաւ: Եւ խօսքէն գործի անցնելով, 1922 հոկտեմբերին գրաւեց այդ գիծը, իսկ 1923ին պահպանեց մը հաստատեց անոր հարաւարդ մը:

Հարկ եղաւ իրաւարարութեան յանձնել վէճը, և յանձնաժողով մը կազմեցաւ նախագահութեամբ դահիացի գորավար էրնստի, որ 1928 յունւար 10ին ճշտեց

բուն սահմանագիծը: Թիւրք ներկայացուցիչը յանձն առած էր ընդունել մեծամասնութեան վճիռը, բայց վերջին պահուն զբո՛ց իր յանձնառութիւնը, և մինչև այսօր ալ թրքական պահանջները կը մասն էնկիւրիի ուղած գծին վրա, բուն իսկ Սուրիոյ հողին մէջ: Առանց ատոր ալ, 1921ի և 1926ի համաձայնութեամբ, Թիւրքուսուրիական սահմանագիծը այնպէս մը դասուարւած է որ, Թրքական թնօնօթիւն առջև կը դնէ Իսթանբուլը, կը սեղմէ Հալէպի ներքնաշխարհը, Թիւրքերուն ձեռքը ձգելով ջուրի աղբիւրները, ու վերջապէս Թիւրքերուն կը թողու Պաղատաի երկաթուղիին օգտագործումը, իրենց դիւտորներուն փոխադրութեան համար:

Անշուշտ, ուրիշ ծաղեր կան այս արտաքին երկույթին տակ: Ֆրանսան կուզէ քրտական բոյն մը հաստատել վիճելի հողամասին վրա, ինչ որ յատկապէս կը ջրագրութ Թիւրքերը: Իսկ այս վերջինները, իրենց կարգին, կը նկղեն Ֆրանսան, և թէ ոչ, ևս տանելու, դոնէ իրենց անմիջական աղբիւրներուն տակ պահելու համար Իսթանբուլը և Անտիոքը: Ֆրանսա, իր ներկայ վիճակին մէջ, որամագիւր չըրար գինտրական գործողութեանց յիմելու և կը փորձէ միջին ճամբայ մը գտնել, թէ և թիւրքերը սկսած են քիչ մը աւելի վճարական խօսիլ: «Պէտք է վէճի ենթարկին Սուրիոյ իրաւունքները: Որքան շուտ հասկնան այս բանը էնկիւրիի մէջ, այնքան լաւ պիտի ըլլայ» (Փոլսնալ):

Միւս կողմէ, զադունէ չէ, թէ Մ.Քեմալ ուղղակի կամ անուղղակի ոյժ կ'առնէ Մեծն-Իրիտանիայէն, որ անմիջապէս շահագրգռուած է Միջագետքի շնորհիւ, և Իտալիայէն, որ ցանկալի կը գտնէ Ֆրանսայի խաւարումը Մերձաւոր Արևելքի մէջ, անոր դիրքերը գրաւելու համար: Մէկը լիւրջի գոհացաւ Մուսուլով, միւրը դեռ իր բաժինը կը սպասէ ատարէն, որ կուշանայ, կուշանայ: Մէկը՝ անխափան կը շարունակէ իր դարաւոր քաղաքականութիւնը, — պահպանել Թիւրքիան, իբրև պատար — ի հարկին և իբրև սպառնալիք — Խուսեոյ դէմ՝ միւրը՝ յափշտակուած է կայսերական Գերմանիոյ դադնիներով:

Մ Ե Ր Զ Ո Հ Ե Ր Ը

ԱՆԵՏԻՍ ԹԱՒԱՔԱՎԱԼԵՆՆ (Հարօն)

Ընկեր Աւետիսը Գանձակի գաւառի Փիւր գիւղիցն էր, ուր և ստացել էր տարբական կրթութիւն: Որպէս երկաթագործ աշխատում էր Գանձակի, Փիլիպիի և Բազուի մեր արհեստանոցներում և երկար տարիներ մօտից չփեւելով հայ և օտարապղի կուսակցական բան-

ւորների ու մտաւորականների հետ, շնորհիւ իր կենդանի հետաքրքրութեան, կարողացել էր մտաւոր աւազին պաշար ձեռք բերել: Նա մէկն էր Գողկաթ մեր կուսակցական շարքերում աչքի ընկնող դիտակից բանւորներից: Նա ամէն տեղ, հակառակորդների դէմ վիճարանելիս, կարողանում էր պաշտպանել մեր կուսակցութեան տեսակէտը ազգային, քաղաքական, ընդհնդարական ու արհեստակցական շարժման վերա-

բերուող հարցերում: Գործոն մասնակցութիւն էր ունեւնում ոչ միայն մեր կուսակցութեան կազմակերպած գործադուլներին և քաղաքական ցոյցերին (ինչպէս, օրինակ, 1903 թւականին, եկեղեցական կալուածքների դրաման առթիւ, երբ Աւետիսը ստացել էր մի քանի վէճեր ու ձերբակալուել, բայց չուսով ապաստել), այլ և էջերներին ու մարքտիստների կազմակերպած ցոյցերին ու գործադուլներին՝ գտնելով, որ անհրաժեշտ է գործուն մասնակցութիւն ունենալ բոլոր այն շարժումներին, որոնք ուղղված են ընդհանուր իշխանութեան և դրամատիրական դասակարգի դէմ:

Օժտւած ուժեղ ձայնով, նա մասնակցում էր երգչելի խմբերին: «Բամբ Որոտամք»-ի մէջ նա կարողանում էր ամենից աւելի զիւլ իր ձայնը «Հարօն արի արանց» բանդը կիւէլներին մէջ, և այս պատճառով էլ նրա անունը դրել էին Հարօն: Ընկերական հւասարոյթներում, տներում, փողոցում, սարում, դաշտում, գնացքի մէջ, և ամենուրեք, որտեղ մի քանի ընկերներ հաւաքւէին իրար մօտ, անկարելի էր Աւետիսին տեսնել հանդիսատեսի դերում: Կամ պիտի կատակէր, կամ երգէր և ստիպէր, որ իրեն ձայնակցէին և կամ որևէ նիւթի մասին վիճարանէր:

1905-6 թւականների Հայ-թրքական կռիւներին մասնակցելուց յետոյ, Աւետիսը, որպէս կուսակցական գործիչ, անցաւ Գանձակի գաւառի Գեոտաբեկի պղնձահանքերը՝ կազմակերպելու համար հայ բանւորներին: Կարճ ժամանակից յետոյ ձերբակալւեց և ամբողջ եօթ տարի տառապեց Անդրկովկասի մի շարք բանտերում: Ետորհւել իր անհանդիսա ընաւորութեան, բանտի հակիչները Աւետիսի անուցը կնքել էին «չարուն» (չարածճի): Բանտապետները ու վերակազմներին հետ ունեցած կռիւների, կամ ուրիշների խնդրի պատճառով քաղմաթիւ անդամներ բանտերում ենթարկւել է սաստիկ պատիժներին, նոյնիսկ ձեռքի և որպէս պատիժ մի որոշ միջոց, քչւել է բանտից բանտ՝ Գանձակի բանտից Թիֆլիսի բանտը, այնտեղից՝ Լապաի և այսպէս Ետուշի, Գորիս ու Նուխի: Բայց ոչ եօթը տարւայ բանտարկութիւնը և ամբողջ չորս տարի շարունակ ոտքերին կրած ծանր շղթաները, չէին կարողացել չեղել նրան իր ուշադրած գաղափարից և բանտից սպասուելուց յետոյ, քաղաքավայրից փախան և 1914 թվին ղեկոտմբերին մտաւ կամաւորական սպայական շրջան, ապա Զեմլյակի ձիաւոր խումբը, իրեն տասնուպետ:

Մի քանի ղեպեր ընկ. Աւետիսի անձնագրահաշիւիչից ու զարութիւնից:

1915թ. յուլիսի սկիզբներին, Հայկական կամաւորական չորս գումարակները — Անդրանիկի, Գրօի, Համազասպի և Քեոու զլխաւորութեամբ — ուսական գործերի հետ, զօր. Տրուխիի ղեկավարութեամբ, կառաղի կռիւներ էին մղում Գառաւանի շրջանում: Տաճկական զօրքը, Նախլի բէյի զլխաւորութեամբ, զբաւել էր այդ լեռնոտ շրջանի կարեւոր դիրքերը և արգել էր հանդիսանում Արճէշ-Նիլաթի ճամբով առաջացող ուսական զօր. Եարպանտիէին միանալու Տրուխիի գործին: Մի քանի օրւայ դիրքային կռիւներից յետոյ, որոշուած է հայ հրամանատարների կողմից մի փոքրիկ ձիաւոր խումբ ուղղակի գրահ տալ ծովափին իշխող տաճկական այն կարեւոր դիրքի վրա, որը

խանգարում էր ուսական երկու բանակների միութեան: Այս որոշումը յայտնուած է ձիաւոր կամաւորներից, և 16 հոգի ինքնաբերաբար համաձայնուած են մասնակցել այդ գրահին, որոնց թւում և Աւետիս Թաւաքալեանը: Ձիերը հեծած, իրարից որոշ տարածութեամբ հեռաւորութեան վրա, ձախ ձեռքով միտասնձը բռնած, իսկ աջով տասնոց արարձանակ, խումբը սրնթիաց գրահ է տալիս դէպի թշնամու դիրքերը և զնդակները տարափի տակ, առանց մի գահի, խիզախ գրահով յաջողում է խուճապ առաջացնել թշնամու մէջ և դիրքը զբաւել: Զօր. Տրուխիը, հեռադիտակով տեսնելով այդ խիզախ գրահը և թշնամու գիրքերից զնդացիներից ու հրացաններից արձակած զնդակների տարափը, սարսափած, այնհեր մագերը փետելով, կանչում է մեր հրամանատարների երեսին, թէ ինչպէս կարելի է այդ անհման արծիւներին մահան գիրքը նետել... Ետորհւել այդ յանդուգն գրահի ուսական երկու բանակները միացան Գառաւանի կիրճում և Նախլի բէյի բանակը քչւեց մինչև Բիթլիս:

Մի ուրիշ ղեպը: 1916թ. յունւարին, Հայկական երկրորդ (Գրօի) գումարտակը, ուսական Լարինակի ձիաւոր կողակների առաջին զնդի հետ միասին Ննուսը զբաւելուց յետոյ, կրնկակոխ հետապնդում էր նահանջող տաճկներին ու շերտերին: Ընկ. Աւետիսը մի խումբ կողակների հետ կուսով յառաջանում էր: Յանկարծ, կողակներից մէկը ծանր վիրաւորուելով՝ թաւալում է գետին: Միւս կողակների փոխանակ դէպի իրենց վիրաւոր ընկերը օգնութեան գնալու, սկսում են փախչել իրենց հարիւրակին միանալու համար: Եւ միայն Աւետիսը չնայած թշնամու կողմից սողացող զնդակներին, յառաջանում է դէպի վիրաւոր կողակը, շաղկում և յետ տանելիս ինքն էլ է վիրաւորում ձախ ձեռքից, իսկ վիրաւոր կողակը երկրորդ մահացու զնդակը ստանալով՝ տեղի ու սեզը մեռնում է: Աւետիսին յաջողում է ազատել: Այդ կողակների հարիւրակետ Բարիւնը, որը ուսական բանակի ամենաքաջ սպաններից մէկն էր, ուսական շրջաններում մեծ գովեստներով էր խօսում մեր կամաւորների անձնագրահաշիւից և քաջութեան մասին:

Կամաւորական խմբերի լուծումից յետոյ, 1916թ.

ամառը, Աւետիսը վերադարձաւ Հայրենիք, որտեղ 1917-20 թւականներին շատ մեծ դեր կատարեց Գանձակի գաւառի ինքնապաշտպանութեան գործում: 1920 թվի ապրիլին, Արբէշլանի մուսաւաթական կառավարութիւնը ահազին գործերով սկիւ էր յառաջանալ դէպի Կարաբաղի և Գանձակի լեռնային շրջանի հայկական զիւղերը՝ բնաշնչելու նպատակով: Բնական է, որ հայ զիւղացիները ամենուրեք դիմեցին ինքնապաշտպանութեան, բայց գլնքի և ռազմամթերքի օւ հմուտ ղեկավարների բացակայութեան պատճառով, Գանձակից դէպի Գիւլիստան-Ղարաբաղ տանող Հայկական 11 զիւղեր վնասուցին՝ տալով նաև մարդկային զոհեր:

Աւետիսը դարձաւ մէկը այն աննկուն գործիչներից, որոնք ջանք չինայցնել գիւնելու և պաշտպանելու համար ժողովուրդը և որոնք նահատակութեան գնով փրկեց մեր ժողովուրդի մի ահազին գանգաւոր: Մինչ Ղարաբաղում սողի էին ունենում արեւանակ կռիւներ, Գանձակի հայ զիւղերում փութով կազմակերպուած ու գիւնում էին: Արտաքին յարաբերութեան միակ ճա-

նապարհը Գանձակ-Նոր-Բայազետ լեռնոտ և որչա-
տարածութեան վրա թուրքերով բռնած դիմն էր:
Հարկաւոր էր ապահովել այդ դիմնը, և Աւետիսը զոս-

ւնց այդ գործում: Մանրապէս վիրաւորեց Ամբաստ-
նաբարձու զիւրի կուռմ և մինչև հայրենի Փիր գիւղը
հասնելը մեռաւ արեւնաքամութիւնից: ԲէնՆՕ

Տ Ի Գ Ր Ա Ն Ա Կ Ե Ր Տ Ի Զ Ո Հ Ե Ր Ը

ՄԻՀՐԱՆ ՊԱՍԹԱՃԵԱՆ

1915-ին Տիգրանակերտի ողբերգական տեղահա-
նութիւնները սկսելէ առաջ, երկրորդ նահատակը եղաւ
ընկ. Միհրան Պասթաճեանը, որը մեր երիտասարդ ու
մտաւորական ընկերներէն էր: Մնած Տիգրանակերտ
1887-ին, յաջողապէս աւարտեց Ազգային վարժարանը,
ապա պետական միջնակարգ վարժարանը և, ի վերջոյ,
Խարբերաի Եփրատ դոլէճը: 1908-ին դոլէճէն դեռ նոր
կը դառնար, օսմանեան սահմանադրութիւնը հռչակե-



ՄԻՀՐԱՆ ՊԱՍԹԱՃԵԱՆ

ցաւ: Միհրանը որ մինչև այն ատեն համակիր էր Հ.Յ.
Դաշնակցութեան, անմիջապէս ընկեր դարձաւ ու
գործի լծեցաւ:

Սահմանադրական օրերը որոշ փոփոխութիւն կը
մտցնէին հայ կեանքին մէջ. հայ երգը, ազատ խօսքը,
որ վաղուց խափանած էր, գուրս կը պոռթկային
կարօտ արտերէն: Ժողովրդական բուրբ խաւերու մէջ
կարթննար հետաքրքրութիւնը դէպի ազգային գործե-
րը: Կը բացէր գործունէութեան անհուն դաշտ մը
հայրենասէր երիտասարդութեան առջև: Եւ Միհրանը
գործող ուժերուն մէջ լաւագոյններէն էր:

1908-ին Դաշնակցութեան շանքերով կազմած Ու-
սումանսիրաց և Դպրոցսիրաց Ընկերութիւններու
գլխաւոր ջիւղ էր ան: Անդադար թէ դաս կուտար և
թէ կատենախօսէր բեմերէն՝ լուսաւորութիւնը ժողո-
վրդական խաւերուն մէջ շատ տարածելու մեծ հաւատ-
քով:

Յանդուռն և ազատամիտ էր: Երբ դէմ առ դէմ
դար ազգային իշխանութեան դուրսը անցած անսիրտ
և խաւարամիտ անհատներու, կըսէր անոնց մեղքերը

ճակատնուն ու կը պաշտպանէր խոնարհ դասակարգը,
որուն վիճակը զինքը կը յուզէր:

Միհրանը իր շինարար առաքելութիւնը կը տանէր
նաև հայ կաթողիկ ու հայ բողոքական հասարակու-
թեան մէջ՝ նկատելով զանոնք մեր ցեղի անբաժան
մասերը: Կոթանդակէր և կը խրախուսէր քաղթէացի և
ասորի երիտասարդութիւնը, որպէսզի անոնք ևս սթա-
փելով սորկութեան թմբիբէն՝ մեզի հետ իբր բարե-
կամ դրացիներ քայլին դէպի լոյս և ազատութիւն:

Ունեւորի դաւակ էր և հարուստ ազգականներով
չըջնպատած, բայց ինք կը քայլէր աղքատին և աշ-
խատաւորին հետ, և միտքն ու սիրտը կապած էր
Բաֆֆիին ու Քրիստափորին:

Դաշնակցութեան ներկայացուցիչն էր թիւրք կա-
ռավարութեան մօտ: Թիւրք շրջանակներն ու իթթի-
հատականները զինքը լաւ կը ճանչնային, ասոր համար
լակ, 1915-ին, երբ երկար փնտռուցներէ վերջ ձեռ-
բակաւեցին զայն անասելի շարժարաններով սպանե-
ցին բանտին մէջ:

Թ. Ե.

ԿԻՐԱԿՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
(Արքակ)

1915-ի գարնան Տիգրանակերտի քան՝ հազար
հայութեան առաջին նահատակը եղաւ ընկ. Կիրակոս
Յովհաննէսեանը: Տաճիկ կառավարութիւնը, կանխա-
մտածած ծրագրի մը համաձայն, ինչպէս ամէն տեղ,
Տիգրանակերտի մէջ ալ զեկալար ուժերը աշխատած
է ձեռք ձգել, որպէսզի անկից վերջ անգլուխ ժողո-
վուրդը Քիւրին ըլլար բնաջնջելու:

Ընկեր Յովհաննէսեան Հ. Յ. Դաշնակցութեան
Տիգրանակերտի կեռ. կոմիտէի գլխաւոր սիններէն
էր: Բնիկ Տիգրանակերտացի էր, ծնած էր 1878 թւին
Կալուր Մէլտան թաղը, Տիգրանակերտի պատմական
և հսկայ պարիսպներուն շատ մօտ, որմէ վար կը
բացուի Վիշապաձորը, ուրկից Տիգրիսը կը սուրբայ՝ իր
յաւիտենական երգը երգելով:

1895-ին հայկական ընդհանուր կոտորածներուն
պատենչներու ետև ինքնապաշտպանութեան ատեն հո-
րը, փինճէի Յովհաննէսի աջը զնդակէ մը փճանա-
լով՝ ընտանիքի ապրուստի հողը գլխաւորաբար կը
ծանրանայ Կիրակոսի մասաղ ըսներուն վրա: Կիրակոս
թէև ստիպւած կըլլայ ազգային դպրոցը թողուլ, բայց
ուսման մեծ տենչին և յամառ աշխատասիրութեան
չնորհիւ իր միտքը լաւապէս կը զարգացնէ, բացա-
ռուապէս տիրանալով Թուրքերէն լեզուին: Բացի այս
բանտի մը անհուն զոհողութիւններով իր կրօնքը
քոյրերուն ալ լաւ տոհմային կրթութիւն կապահովէ,
որոնք վերջը Հ. Յ. Դաշնակցութեան և Կարմիր Խաչին

աշխատանքներու ու ժողովան անդամուհիները դարձան:

Յովհաննէսեան թէ 1906-ին մասնակցած է Հ. Յ. Դաշնակցութեան, բայց յետագայ տարիներուն Տիգրանակերտի մէջ ազգային ինքնագիտակցութիւնը և յեղափոխական խմբումները աշխատանքները մէջ շատ մեծ դեր կատարեց: 1907-ին Փարիզի մէջ Իթիհատ-Դաշնակցական Համաձայնութիւն կայացած էր Յուրբեթոյ Հին ընթացի տապալիլու համար. այս ստիւի վանէն Իշխանն ու Սարգիսը մեզ զրկած էին Յուրբեթին մեծ ծրար մը յեղափոխական գրականութիւն Յուրբեթուն մէջ յարմար կերպով տարածելու համար: Ընկ. Յովհաննէսեանն էր, որ անջուն գիշերներ կանցնէր, մեր կոմիտէի կողմէն Յուրբեթին յեղափոխական թուղակներ կը խմբագրէր, որոնք արտասահմանէն զրկածներուն հետ ծրար-ծրար, գիշերները մզկիթներուն ու թիրք սրահներուն մէջ կը նետուէին րնկերներու կողմէ:

Ահա տար, դասակարգը ճանչնալու դարձանայի կարողութիւն ունէր Կիրակոսը: Մինչև վերջ չլստահեցաւ ան տաճիկներուն և անոնց սահմանադրական շնորհալից խօսքերուն, և չէր սիրեր յոյս կապել Հայ Հարուստներուն այ: 909-ին, Եր Դաշնակցութեան շրջիկ պրոպագանդիստ Բարսեղ Եսէպաղ Տիգրանակերտ էր և տեսնելով, որ մեր կոմիտէն դեռ ստորերկրայ է ոտքը գետին գործելով պահանջեց, որ հրայարակ գանձ և մեր գոյութիւնը ծանօթացնէ Յուրբեթուն: Կիրակոսը միակն էր, որ բուն կերպով հակառակ էր այս մտքին, բայց Երբ որոշում անցաւ, համակերպեցաւ յանուն կուսակցական կարգապահութեան, որուն հաւատարիմ էր:

Համատուութիւնն ու պատահանդրութիւնը անոր նկարագրի գորաւոր գծերն էին: Տիգրանակերտի ընկերներուն մէջ զիչէր կը յիշեմ, որ իրեն չափ ներաւծը լլային Դաշնակցութեան: Իր ամբողջ ընտանիքի անդամներն ալ դարձուցած էր կուսակցութեան ծառաները: Իր տունը Դաշնակցութեան գէնքերու և փախտականներու թաքստոցն էր: Պէտքիկի, Արշիվանի, Փարզիի գիւղացիներուն մէջ ինքնապաշտպանութեան համար տարածած գէնքերը, առհասարակ, իր տունէն կելէր դիտարար խումբերու կողմէ, որոնց շատ անգամ իր խրախուսանքին վրա կօժանդակէին իր թոյրը և Հազրոցի տիկին Վարդեր ու ուրիշ քանի մը սրտոտ ընկերուհիներ: Կը հազէր պարզ բանտրի պէս, որպէսզի ոչ ոքի ուշադրութիւն չգրաւէ: հաճոյք, փառք և հանգստութիւն բոլորովին զրուսած էր օգտակարին և գազափարին: Գործունէութեան մէջ ծայրահեղորէն գգոյշ էր՝ սակայն, ունէր իր յատուկ հնարամտութիւնները յեղափոխական գործ մը կատարելու համար:

Երկար տարիներ Տիգրանակերտի առաջնորդ Եղեկիէլ վարդապետը և Քաղաքական Ժողովը օգտուելով համիտեան թունաւոր միջնորդութէն Ժողովուրդին ոչ հաշիւ կը ներկայացնէին և ոչ ազդին շահերը կը պաշտպանէին: Արթնցող երիտասարդութիւնը մեր ընկերներու ղեկավարութեամբ 1907-ին մտաւ առաւել նորոգման, պահանջեց, որ անարժան սաւառնորդ փոխի, գպրոցները բարեկարգուին և ազգային ղեկավարութիւնը պարտաճանաչ անձերու յանձնուի: Մեծ աղաները անվարժ էին այսպիսի Ժողովուրդական ցոյ-

ցերու, ուստի արհամարհանելով ձգձգելին բողոքներուն լուծումը: Գործը Կիրակոսին ձգեցաւ, ան գտաւ իր մանկութեան օրերու ընկեր Յարութիւն ձերբէկտուրը — վառվռուն ընկեր մը — և երկուքը գիշերուայ մը մէջ դացին և ազգաբարեցին պատասխանատուութեան գզացումէ գուրկ և անարժան աղաներուն Ժողովրդի արդար ձայնը: Անվնաս ցոյց մը, որ մեծ արդիւնք ունեցաւ վերջը:

Մեր ընկերներու ջանքերով հաստատուած կիրակի-նորեայ դասախօսութիւններն ու գրադարանը իրենց օգտակար ազդեցութիւնը ձգած էին նաև ազգային վարժարանի պատանի ուսանողներու վրա, որոնք



ԿԻՐԱԿՈՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

սկսած էին հետաքրքրել ազգային պատմութիւնով ու յեղափոխական գործերով ու գործիչներով: Տեսուչը, սակայն, հակառակ էր յեղափոխութեան և կը սպառնար ուսանողները և ուսուցիչները զպրոցէն վճռուել, որոնց կարգին կային շարք մը երիտասարդ և յեղափոխական ուսուցիչներ, և Մշտյ Ղզլապաճ գիւղացի աշխոյժ Աւօն (Քէտօ Օղլի), որ անտեսի պաշտօն կը կատարէր, սակայն, գաղտնի կոմիտէի անձնուրաց գործակալն էր: Գործը նորէն Կիրակոսին ձգեցաւ, ան խրատել տաւ սպառնական սետուչը, որ ուսանողութեան գիտակցութեան և ազատագրութեան սրբազան գործին արգելք չըլլայ:

1909-1910-ին բանտարկական և արհեստակցական միութիւններ կազմելուն մէջ մեծ դեր կատարեց: Մեծ և պատասխանատու դեր կատարեց նաև Հալէպէն և Պէյրութէն Տիգրանակերտ գէնք ներմուծելու խնդրոց մէջ: Վտանգաւորութեան ատեն միշտ առաւել շարքերուն վրա էր և շատ լաւ սուսմանստիւրած էր, թէ քաղաքի որ կէտն էր, որ պէտք էր թիրքը ու քերտ խուժանի առջև պահպանել:

Ժողովրդի մարդ էր և կը խօսեր Ժողովրդին յեղ-

տով, որպէսզի Դաշնակցութեան պատգամները դառնան հասկնալի և շինելի: Ամէն մէկը խորհուրդ կը հարցնէր իրմէ, որովհետև Կիրակոս հետատես էր, փորձառու և անշահախնդիր: Իր խօսքը կշիռ ունէր ընկերներու և ազգայիններու մէջ:

Կուգայ 1914 անիծապարտ թականը: Գերմանիան պատերազմ կը հրատարակէ: Թիւրքիան ալ անմիջապէս պատերազմական վիճակ հրատարակելով՝ կը հրամայէ ընդհանուր զորահաւաք: Տիրաւորակերտի հայութիւնը անսարմով կառավարութեան հրահանգին՝ դունդ-դունդ կը դիմէ արձանագրելու: Իթիբալատը հայերը բնաջնջելու գաղտնի պատրաստութիւններ ունի, սակայն, և կը տեսնէ ու կաշխատէ տկարացնել հայութիւնը: Գիշերայ մը մէջ կաշիք հայերու ամբողջ խանութները, կը զրկէ դանոնք ապրուստի միջոցէ: Ապա տուններ մանելով բանակին համար կը բռնապարտէ բոլոր կենսամթերքներն ու թանկագին իրեղէնները և ընդդիմադիրներուն մահ կը սպառնայ: Մարտափր կը տիրէ չորս կողմ և մեռնիլ, մնալու ճակատագրական ժամը ամէն ոք կը զգայ: «Արձանագրեցէ՛ք, թագաւորական հրաման է», կը պոռար մունետիկը հայերու թաղերուն մէջ: Բայց յուսահատ և անօթի ժողովուրդը, որ վստասութիւնը կորսնցուցած էր և մուծին մէջ գողուելի ժանիքներ կը տեսնէր, չի պատահանէր, կըմբոստանայ և կուտղ ուժեղը տանիքները երնելով՝ պատնէշներ կը բարձրացնեն և ինքնապաշտպանութեան կը պատրաստին: Ոստիկանութիւնը սարսափով ետ կը քաշուի և կուսակալը կը դիմէ

սիրաշահող միջոցներու՝ հայերու դիմադրական ոյժը կտորելու համար: Կուսակալը կերթայ հայոց առաջնորդարանը, կը յայտնէ, թէ բոլոր փախստականներուն և ընթրասուներուն կը ներէ: Գանձեմ հալկատ չէ զրկէ, իրենց ընտանիքներն ապրուստի համար առօրի կուտայ և բանակի ետին կատարելիք աշխատանքները կը յատկացնէ միայն իրենց, եթէ տանիքներէն վար իջնեն ու գան կառավարչատուն ու արձանագրին:

Ո՞վ կրնար հուստայ այս կեղծ խօսքերուն: Մահայն, քաղաքական ժողովի անդամներն ու քիչ մ'ալ առաջնորդ Ձլղատեան Մկրտիչ վարդապետը կը հաւատան կարծես: Դաշնակցութեան ներկայացուցիչներ Միհրան Պատթաճեան և Կիրակոսը առաջնորդարան կը վագեն, տեղի կունենան ճակատագրական վիճաբանութիւններ:

«Թիւրքերը մեզ պիտի մաքրեն, վաղ ուշ պիտի ըլլայ, պէտք է անյազպ միահամուռ դիմադրութեան պատրաստուինք», կընէ Կիրակոսը: «Թիւրքեր տակաւին չի ճանչնանք», կաւելցնէ:

Միահամուռ ժողովրդական դիմագրութեան որոշումը կուշանայ այդ օրը: Պատթաճեանն ու Կիրակոսը յուսամղէպ ետ կը դառնան: Կանցնի շատ քիչ ատեն, գիշեր մը, խումբ մը ոստիկաններ, յանկարծակի, կը պաշարեն ընկեր Կիրակոս Յովհաննէսեանի տունը, կը ձերբակալին զայն անկողնոյ մէջ, ու կը տանեն:

Առաւօտուն, արդէն ընկերը մեռած կը յարձուէր քոյրերուն: Ահապանքը հնչած էր այլ և Տիրաւորակերտի մէջ, իսկ գլխաւոր ուժերը ըլլատած: Ե. Յ.

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

ՂԱՐԱՍԱՂԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

7 Նոյեմբ., Աղղամ.

Ղարաբաղի հայութեան լաւ ծանօթ թրջական մեծ գիւղ Աղղամը ընկած է Շուշի-Եւլախ երկաթուղու կայարան տանող խճուղու վրա, 30 վերստ հեռու Շուշի քաղաքէն և 70-75 վերստ՝ Եւլախ կայարանէն: Աղղամը տասնեակ տարիներէ ընթացեալ միշտ հանդիպուցել է և ներկայիս էլ հանդիսանում է Ղարաբաղի թրջութեան համար իրբև միջնաբերդ:

Այստեղ են կազմակերպուել թուրք բէկերի կողմէն թալանները և սպանութիւնները խաղաղ հայ ճամբորդներին, որոնք Ղարաբաղից անցնում էին դէպի Բազու, Թիֆլիս և Ռուսաստան: Այստեղ կազմակերպուց և այստեղից եկաւ հողաբաւոր գինւած թուրք խոտանը 1905-6 թւականներին՝ ոչնչացնելու համար Լեռնային Ղարաբաղի հայութիւնը: Այստեղ էր, որ թուրք զօրավարներ Մեխմանդարովի և Շիլիմալիեի ղեկավարութեամբ ծրարեցին ու կազմակերպուցին Ազրբէջանի հողաբաւոր զօրքերն ու խոտանը, տաճիկ սպիւհարներին հետ միացած, յարձակելու: Համար Ձանգեղուրի վրա, զէնքի միջոցով կոպուելու Ազրբէջանի հետ, և Ձարուղի

ձորում պարուելով խուճապի մատնեցին ու փախան: Եւ, վերջապէս, վերջին անգամ նոյնպէս այստեղ կազմակերպուց և որոշուց ոճրագործ Սուլթանովի ծրարքը: Հայկական Ղարաբաղի կենտրոն, Շուշի քաղաքը, վերցնել մէջտեղից ինչ զնով էլ լինի, և Ղարաբաղ տափարակների թրջութիւնը միացնել մի ջանի հազար թուրք և քերթը բնակիչներին հետ, որոնք ապրում են «Հալի Սամլու» կոչւած վայրում, Սուլթանովի ծնընդամայրում, որը այժմ կոչուած է Գիւրը Կրայ:

Երկու-երեք տարի է ապրում եմ այս ըրջանում և Աղղամում եղել եմ և շատ անգամ ցարական և թէ Ազրբէջանի իշխանութեան օրօք: Ցաւելով պիտի արձանագրեմ, որ ոչինչ չի փոխուել Սուլթանովի տեղը Մամեդովին է, Մեխմանդարովի տեղը՝ Ալեքսարովը, Շիլիմալիեի տեղը՝ Գաղիմովը: Դերակատարները փոխուել են, դերերը մնացել են նոյնը: Փամփուշտի կրիւ չկայ, սակայն, թուրք բէկերի և կալաճատէրերի «կոմունիստ» գաւակները նոր ձեկ փամփուշտներով են կուտում հայ գիւղացու և հայ քաղաքացու դէմ: Եւճախ անցել եմ ձիով և թէ կառքով դէպի Լեռնային Ղարաբաղի հայկական գիւղերը, որոնք եմ ջանի ժամայ ճանապարհէ վրա են Աղղամից, կամ թրջական նոյնպէս մի մեծ գիւղ Մալխարայուց: Անցել եմ հայ

գիւղերը, Խնարաղը, Խրամորթը, Նորչէնը, Հացեն, Քեաթուրը, Փրջամալը և այլն, երբեմնի փարթամ ու հարուստ այդ շէն գիւղերը, ուր կարծես այժմ դաժան փոթորիկը եկել ու քչել է ամէն բան...

Այժմ, երբ փաստորէն Ազրբէջանի թուրք ղեկավարներն են կառավարում 150 հազար հայ ունեցող Լեռնային Ղարաբաղը, դարձեալ հնրեր նման, նստած Աղղամում, իբրև ժառանգութիւն հայրերից մնացած, նոր ձևի կուրը շարունակում են, «կուլտուրական», տնտեսական և գինման հողի վրա:

Հայ գիւղի, փառաւոր անցեալի դպրոցի շէնքը վեր է ածւած «կոմբըլիշներէ» ժողովատէրի: Գիւղերի գեղեցիկ տները աւերւած ու անտէք են, իբրև կուլակներէ: Կահայեղափոխականների տներ: Գլխաւորապէս ծեր կանայք ու տղամարդիկ են երևում. աղքատաց և առողջ երիտասարդները կամ փախել են բողջնիկեան շուրջուցից և կամ իբրև «Ղարաբաղը Հայաստանին» միութեան անդամ, քչւած են դէպի ցրտաշունչ Ռուսաստանի խորքերը: Երկուդեան ժամը 7-8-ին դռները պինդ կողպում ու փակում են խրճիթներում ահ ու սարսափի տակ: Վախենում են և աւազակից, և՛ կոմսոմոլից, և՛ կոմբըլիշից: «Պաշտպանելու ոչինչ չունինք, ամէն ինչ հաւաքեցին և տարան», ասում էր ինձ մի գիւղում Գուրի ամին: Երբ հարց տւի, թէ ո՞վ տարաւ, «բողջնիկ ոտւր և հայր», ասեց Գուրի ամին և ձեռքը բերանին դրաւ:

Բայց ի՞նչ եմ տեսնում թրքական գիւղերում, Աղղամում, Մալիբայուվում, Բարդալում, Ղարաբաղում, թէկուզ հէնց ամենայն ընկած թրքական Բոյամատտու գիւղում:

Համարեա բոլոր գիւղերում նոր դպրոցի շէնքեր են կառուցում. մեծ գիւղերում հիւանդանոցներ՝ մի քանի բժիշկներով ու մահահակներով: Գիւղերը մէկը միւսի հետ կապում են խճուղիներով. մթերքները առատ և կանեղք աւելի աման:

Երբ գէնքը երազ է դարձել Ղարաբաղի Կայսրութեան համար, այս ամառ ես իմ աչքով յաճախ տեսայ մի շարք թրքական գիւղերում (ինչպէս իրենք ասացին): տաճկական նախկին սպաների ղեկավարութեամբ, գիւղերի մտասկապ դաշտերում ղեկավարութիւններ էին անում: Իսկ նրանց կողքին խուճ-խուճ կանգնած

թուրք կոմսոմոլն ու կոմբըլիշը դիտում էին ուրախ ժպիտով:

Եւ թուրքական գիւղերի ետևն աշխատանքին մղում աւողնելը նստած են այժմ նոյնպէս Աղղամում: Աղղամում նստած թուրք յայտնի կոմսոմոլն Մ. Թ. Բէկը այն անձնաւորութիւնն է, որը Ղարաբաղի կուրաներին, Սուլթանովի աջ թէնն էր, որի տան պատից այժմ իսկ կախւած են մի շարք գորգեր և այլ զարդեր, որը անձամբ թայանել է Շուշում, կոտորածի ժամանակ: Երբ պատահաբար տեսայ այդ գորգերը, որոնց վրա հայերին տառերով գործւած էր «Շուշի» անունը, նա կարմրեց...

Ստեփանակերտում հաւաքւած մի քանի թշուա հայեր չեն, որ ներկայումս կառավարում են հայկական Լեռնային Ղարաբաղը, այլ դարձեալ նախկին ձեռով, նախկին կալածատէրերի ու բէկերի «կոմսոմոլներ» դաւակները, որոնք նստած Աղղամում իրենց հայրերի դերն են կատարում:

Ղարաբաղի հայութիւնը 2-3 տարի է, որ գլխի կերպով նորանում է. տնտեսական ծանր վիճակը մի կողմից, ճնշումները, աքսորները և ձերբակալութիւնները միւս կողմից պղծեցին են նրան: Եւ զաղթում են դէպի Հիւսիսային Կովկաս, դէպի Անդրկասպեան երկիրը, Ասորախանի և Սարատովի շրջանները: Ինչպէս ինքն է ասում զաւթ ու տիրական չունի» այսօր և վաղն էլ չգիտէ թէ ի՞նչ սարսափներ են դալու:

Մի քանի օր առաջ ստացայ «Ղարաբաղը Հայաստանին» միութեան խմորատիպ № 6 թուրքերիկը, որոնցից կարելի է իմանալ Ղարաբաղի վիճակը, որոնցիկը վերջանում է՝ «Մեր աղերսանքը, լաց առ կոծը չկարողացան շարժել Երևանում նստած մեր ապիպեց հայ ղեկավարներին, որոնք իրենց տաք աթոռների և փարթամ ապրուստի համար, Ղարաբաղի մօտ 150,000 հպարտ հայութիւնը ծախեցին Ազրբէջանին. թուրք նարխանովի շափ անգամ քաղութիւն չունեցան ասելու ու յայտարարելու, որ մեր փոքրիկ ու ծւաւուած Հայաստանի ողնաշար Ղարաբաղը, պէտք է ապրի ու մեռնի մայր երկրի հետ. ընկերներ, ձեռք քաշենք մեր այդ ապիկար ղեկավարներից և մեր միջոցներով մեր գլխի ճարը տեսնենք»:

ԱՍԶԷՆՑԻ

Ի Բ Ե Ն Յ Ի Ս Կ Ի Ե Ր Ա Ն Ո Վ

Այս անգամ տալիս եմք մէկ մասը Անդրկովկասեան Երկրային Կոմիտէի ֆարսուղար Ռուբէնի ցառի, որ արտասանել է հակու. 17-ին Համ. Կովկասի Անդրկովկասեան Կոմիտէի ընդհանուր ժողովում: Ճառը միբրւած է կոմունիստների գործունէութեամբ «ազատ գիւղացիներին» մէջ և իբն է այլանդակ մերկացումներով, որոնք ապացուցանում են, որ, ինչպէս կազմային հարցի բնագաւառում, գիւղացիական խրճուղում էլ բողջնիկեան ֆալսափականութիւնը դուրս է եկել բարոյակիմ սնանկ:

«Ես պէտք է հաստատեմ, ասում է «Թիֆլիսի պրոլետարիատի» ղեկավարը, որ Անդրկովկասի կուսակցական բոլոր ղեկավար կազմակերպութիւնները քաղաքական ուղիղ գծով են տանում և որ գիւղի խնդրում մեզ մօտ չեղում չի եղել ուղիղ լեհիսեան գծից:

Բայց և այնպէս անապին քերտութիւնները՝ կան, որոնց մասին այստեղ պէտք է խօսել բոլորովին բաց,

*) Ընդգծումները «Заря Востока» քերտութիւնն են, սրի 23 հակու. համարում տպւած է Ռուբէնի ցառը:

ինքնազննադատութեան կարգով:

Բոլոր ընկերներին յայտնի են կենտր. Կոմիտէի յուշիւան ընդհանուր Ժողովի վճիռները կուսակցութեան մէջ գոյութիւն ունեցող թէքումների մասին: Այդ վճիռները խիստ կենսական են և մեր կարգակերպութեան համար, իսկ մեր տրամադրութեան տակ գտնուող բոլոր տեղեկութիւնները խօսում են յօդուտ այն բանի, որ մեզ մօտ ամենից աւելի վտանգաւոր է այժմ վտանգը, այժմ թե՛նուրը, որը, մեր պայմաններում, օրգանապէս ձուլում կամ գուգորդում է ուկրինիստական*) — ազգայնական միտումների հետ:

Կուսակցութեան 15րդ համագումարից յետոյ մեզ մօտ կարելի է նկատել որոշ բեկում այն ուղղութեամբ, որ աւելի վճռական դրո՛հ է արւում քաղաքի և զիւղի դրամատորական տարրերի դէմ: Բայց մեզ մօտ քեչ չեն նաև փաստեր, որոնք խօսում են զիւղի դասակարգային դժի ալլասերման ու թեքման մասին մեր անհատ ընկերների կողմից, ստորին որոշ կարգակերպութիւնների, մեր խորհրդային ու կօօպերատիւ շղթայի առանձին օղակների կողմից: Ահա այս դրութիւնը՝ աջ թեքումի դէմ վճռական պայքար մղելու անհրաժեշտութիւնը եւ կաշխատեմ ապացուցանել իմ գեկուցման մէջ:

Ի հարկէ, պայքար պէտք է մղել և հակառակ թեքումի «ձախ խօսքի», միջակ զիւղացու շահերի անտեսման, թրոցկիզմի վերերեման դէմ:

Հետաքրքրական են վերջերս տեղի ունեցած մի շարք գաւառական աղքատ զիւղացիական խորհրդատուների արամադրութիւնները: Այդ արամադրութիւնները բնորոշ են այն տեսակէտից, որ աղքատները բաց ու կտրուկ կերպով հնում էին զիւղը «կուսակարգած անելու»**) հարցը. պահանջում էին վարչական միջոցներով կուել կուլակների դէմ, զիւղերից հեռացնել բոլոր կուլակներին: Օրինակ, Գանձակի խորհրդատու գրովում մի աղքատ ասում էր. «Կամ մեզ հեռացրէ՛ գիւղերից, կամ կուլակներին»: Նման արամադրութիւններ — ճիշտ է, նազագոյն չափով — կան և շրջանների մեր անհատ գործիչների մօտ:

Մեր կուսակցական կարգակերպութիւնները մի քանի տարի անընդհատ յաջող պայքար էին մղում թրոցկիզմի դէմ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ թրոցկիզմի վերերեման հետ պէտք է յետագայում էլ կուել: Բայց մենագոյն վտանգը մեզ մօտ այժմ վտանգն է, զիւղում դասակարգային պայքարը սքօղելու միտումն է, կուլակի հետ կուել չուղելն է և այլն: Աղքատների բոլոր խորհրդատուները անցան գիւղական կուլակների ուժեղացման դէմ պայքարելու:

*) Ուկրանիստ կաշում են վրացի կուուկիստ ազգայնականները, որոնք ձգտում են վրաստանի անկախութեան:

**) Կուլակ կամ բաւուցք բաշխիկեան բաւարանում նշանակում է ունեւոր գիւղացի: Ըստ խորհրդային օրէնքների գիւղացիութիւնը բաժանում է երեք խաւի. 1. ազատ գիւղացի, 2. միջակ գիւղացի և 3. կուլակ կամ ունեւոր գիւղացի: Վերջին խաւը գուրի է քաղաքացիական մի շարք իրաւունքներից, ընտրութիւններին էւ է ի տալիս ու միւսներից աւելի հարկ է վճարում: ԽՍԲ.

անհրաժեշտութեան նշանարանի տակ:

Աղքատների հաւաքական միտքը գործում էր հետեւալ հարցերի շուրջը.

Վարկեր տալիս են կուլակներին, վարկային ընկերութեան գլուխը կուլակն է նստած.

Աղքատի ցանքար փշանում է ջրի պակասից. խորհրդային մարմինների մէջ տեղ են բռնել օտար տարրեր. կուլակները գրաւել են լաւագոյն հողերը (մշակի դուրս վտանգած կիրք փողոցում է երխայի մեկը):

«Մենք ապրում ենք խորհրդային իշխանութեան տակ, իսկ մեր զիւղում խորհրդային իշխանութեան հետքն իսկ գոյութիւն չունի»:

Մշակների ծեծելը շարունակւում է, զիւղական խորհուրդները պաշտպանում են կուլակներին.

Ինչքան ուղում ես խօսիք մեր թերութիւնների մասին, ամէն ինչ կը մնայ անփոփոխ.

Աղքատների և մշակների աղաներին դպրոց չեն ընդունում.

Ուղում ենք հաւաքական անտեսութիւն կարգակերպել — օգնութիւն չկայ.

Աղքատներին չեն ընդունում կուսակցութեան մէջ. ջուրը տալիս են կուլակներին—աղքատները մնում են ասանց ջրի.

Գիւղական խորհուրդը նիստ է գումարում կուլակի տանը.

Գաւառի պատասխանատու գործիչները զիւղերում են կուլակների մօտ.

Կոմունիստները կուլակ են դառնում. աղքատներին դուրս են քշել բլիթի նիստից և արգելում են յաճախել.

Գիւղացիական խորհուրդները կուլակներին տալիս են կեղծ վկայականներ, որ, իբր թէ, նրանք աղքատներ են:

Աղքատներն իրենց հողը ծախում են կուլակներին, և այլն:

Հարողեմ զիւղացիների երկու խիստ բնորոշ ելոյթի մասին: Այդ ելոյթները ցոյց են տալիս, որ աղքատ զիւղացին պէտք ունի օգնութեան և որ եթէ այդ օգնութիւնը նրան չտան մեր պետութիւնը, կօպերատիւներն ու խորհրդային իշխանութիւնը, նա ստիպւած պիտի լինի օգնութիւն խնդրել կուլակից:

Սուրբախանի դայրային աղքատ զիւղացի Կասրմ Ջահանգիր Օղլին ասում է.

«Ի՞նչ ասում էք մեզ, որ աղքատը չպէտք է կուլակի ազդեցութեան տակ լինի: Իսկ ի՞նչ էք կարծում, մենք այդ բանը անում ենք որոշ նպատակով կամ հաճոյքի համար: Երբեմն մենք կուլակի ազդեցութեան տակ ենք ընկնում հարկադրւած. գալիս է դաւառական կամ դայրայի գործիչը, մենք զանգատուած ենք նրան, նա գրի է առնում մեր գանգատը — հետեւանք ենք սպասում շարաքներով, ամիսներ, մէկ տարի: Մեր զանգատը մնում է անհետևանք. կուլակը ծիծաղում է մեր վրա — և կամայականայ ընկնում ենք նրա ազդեցութեան տակ:

Ախալքալաքի գաւառի Աջոբա զիւղացի աղքատը ասում է.

«Իշխանութիւնը կուեցրեց մեզ կուլակների հետ և յետոյ լեցե ու թողեց միգ մեր ճակատագրին, և այժմ էլք չկայ»:

Ա Ջ Դ

Հ. Յ. Դ. Բիւրօի 13 նոյեմբ. որոշումով Դաշնակցութեան շարքերէն հեռացուած է Փարիզի շրջանի կազմակերպութեան անդամ Հայ Գնդունիին՝ ծանր հակակարգազանական ընթացքի համար:

Ճորճասյի շրջանի կազմակերպութեան անգամ Մլխիթար Ենիկիեանը արտաքուստ է Դաշնակցութեան շարքերէն, իբրև հակառակորդ կուսակցութեան մը դործակալ:

« Դ Ր Օ Շ Ա Կ » Ի

Յունւար և փետրւար ամիսներու թիւերը լրջա կը տեսնեն յունւարի կէսին, միացեալ ու պատկերազարդ, ներքուստ Ռոստոմի և Արամի յիշատակին՝ անոնց մահուան տասնամակի առիթով:

Ընկերներէն կը խնդրենք, մինչև դեկտեմբերի վերջերը, «Դրօշակ»-ի այդ թիւ համար հասցնել մեզ համապատասխան նիւթեր, Ռաստոմի և Արամի կիսանքի և դործունէութեան հետ կապուած գէլպօքրու նկարագրութիւններ, յուշեր, լուսանկարներ և այլն:

« Դ Ր Օ Շ Ա Կ » Ի

Բաժանորդներուն և Գործակալներուն

«Դրօշակ»-ի առաջումը շնորհատելու համար՝ կը խնդրենք այն բաժանորդներէն և գործակալներէն, որոնք ցարդ մտքած չեն իրենց հաշիւները, փութալ օր առաջ զրկել բաժնեգրիները:

Փարիզի մէջ սկսած է կրատարակել «Ազատ-ժարտ» ամուսնով շարաքաթերք մը, որ ումանք կը վերագրեն Հ. Յ. Դաշնակցութեան: Կը յայտարարենք, որ յիշեալ քերթը որևէ անչափում չունի Հ. Յ. Դաշնակցութեան հետ:

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՕ

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԴՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժնեդէն է Ֆրանսայի, Յունաստանի, Բուլգարիայի, Ռումանիայի, Եւրոպական այլ երկիրների, Միւրիայի և Պարսկական Ատրպատականի համար՝ 25 ֆրանս. ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պաղեստինի, Միչագետէի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած բոլոր երկիրների համար՝ երկու դոլար:

Բաժանորդագրուել կարելի է իւրաքանչիւր ամիս սկզբից:

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ԴՐՕՇԱԿ»

Կը խնդրի բոլոր մարմիններէ և ընկերներէ, որ Դ. Գիւլպետանի «Հայ քաղաքական մտքի ծաղումն ու Ջարգացումը» գրքի հաշիւները փակեն և դրամները զրկեն խմբագրութեան հասցէին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

| | | |
|--|------------------------------------|-----|
| Միւրիաշայ արտագալթի առքիւ (խմբագրական) 305 | կաններում (Ջ. Թոփալովիչ) | 321 |
| Հայաստանի վարչական բաժանումը (Ս.Վրացեան) 307 | Թիւրքիոյ շուրջ | 327 |
| Գեմալական Թիւրքիոյ ապագան (Կ. Սասունի) 310 | Մեր գոհերը | 320 |
| Ժամանակը լաւագոյն դատարան է (Ա.Արծրունի) 317 | Թղթակցութիւններ | 333 |
| Մեծ պետութիւնների բազմակամութիւնը Բալ- | իրենց իսկ բերանով | 334 |

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանտ.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի Հասցէն՝

M^{me} S. AGOPIAN.
5, rue des Gobelins, 5. Paris (13^e)